ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Ստեփանակերտ 20-ը փետրվարի 2023 թ.

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-2 (1672) Փետրվար 2023

Փետրվար 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Մեր և նրանց գերխնդիրը (էջ 1-2)

2- Հարցազրույց

Պատասխանում է Դավիթ Իշխանյանը
Ազատության շրջափակում Արցախը չի զգացել և չի զգում (էջ 3-6)

3- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Արցախի շրջափակում՝ ռիսկեր ու հնարավորություններ (էջ 7-9)

Կարինե Մկրտչյան
Քաշաթաղի միջանցքի արգելափակման ադրբեջանական բազմաշերտ գործողության «Զանգեզուրյան միջանցքի» բաղադրիչը (էջ 10-14)

4- Տարածաշրջանային

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ-ի արձագանքն Արցախի շրջափակմանը (էջ 15-18)

Սաբինա Մուրադյան
Ովքեր են թուրք մեսխեթցիները և ինչպիսի գործոն կարող են դառնալ տարածաշրջանում (էջ 19-24)

5- Թարգմանություն

Վլադիմիր Պետրով
Պենտագոնի վիրուսային ծրագրի նոր փուլը Հայաստանում (էջ 25-27)

6- Հասարակություն

Սիլվան Խարտալեան
Մտածումներ. Հայութեան իրավիճակն ու պլոք-տիեզերքի տեսութիւնը (էջ 28-32)

7- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերը, «երկաթե շերեփի» գաղափարը և խաղաղության օրակարգը հայ իրականության մեջ (էջ 33-38)

8- Դաշնակցական բեմ

Աւօ Գաթրճեան
Ազգային մտավորականութիւնը եւ անոր դերը գաղափարական կազմակերպուածութեան մէջ (էջ 39-40)

9- Ընթերցումներ

Վրէժ-Արմէն
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ՝ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ԱՆԴԻՆ
Patrick J. Deneen, WHY LIBERALISM FAILED, Yale University Press, New Haven and London, paperback edition, 2019, 225 pp (էջ 41-44)

Մեր և նրանց գերխնդիրը

Ռուս-ուկրաինական հակամարտության հարցում համաշխարհային լրատվամիջոցների զգալի մասը դեռևս գտնվում է տոտալ վերահսկողության ներքո: Արտաքին աշխարհաքաղաքական, ինչպես և ներքին պատճառներով հասարակություններին ներշնչում են, որ Ռուսաստանը պարտվում է պատերազմում, ինչն այս պետության համար ունենալու է խիստ բացասական հետևանքներ: Այս քարոզչությունն առանձնահատուկ նշանակություն ունի նախ և առաջ ուկրաինացիների համար (հիշենք 44-օրյա պատերազմի օրերին մեկ աղբյուրից հայ հանրությանը մատուցվող տեղեկատվությունը), այնուհետև նախկին խորհրդային մյուս հանրապետությունների համար, որոնք, դրական կամ բացասական առումով անմիջական փոխհարաբերությունների մեջ են Ռուսաստանի հետ: Կասկած չկա, որ նրանք, ովքեր այս հակամարտության մեջ Ուկրաինայի հովանավորներն են, մի օր թիկունք կդարձնեն պարտված երկրին՝ լքելով ավերակների վրա հայտնված բախտախնդիր ղեկավարներին: Մինչ այդ նրանք ջանք են գործադրում՝ ինչպես հետխորհրդային տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում թուլացնելու Ռուսաստանի ազդեցությունը ստեղծելու նրա առջև նոր մարտահրավերներ: Այդ նույն նպատակով նշված երկրների ժողովուրդներին փորձում են հավատացնել, որ իմաստ չունի պարտված Ռուսաստանի՝ որպես դաշնակցի հետ հետագա հույսեր կապել, հետևաբար պետք է փնտրել այլընտրանքներ: Վերջերս Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, թե Ուկրաինան ցանկանում է, որ Վրաստանը երկրորդ ճակատ բացի Ռուսաստանի դեմ և որ այդ նպատակով էր Սահակաշվիլին ուղարկվել Վրաստան:

Իրենց հատուկ ճարպկությամբ Ադրբեջանն ու Թուրքիան Արցախի դեմ 44-օրյա պատերազմը, ինչպես և դրան հետևած Հայաստանի ու Արցախի դեմ կոշտ ճնշումները արևմուտքում ներկայացնում են որպես Ռուսաստանին հարվածելու և Անդրկովկասից դուրս մղելու ծրագիր: Իհարկե, և՛ թուրք-ադրբեջանական տանդեմը, և՛ Արևմուտքը հրաշալի հասկանում են, որ տարածաշրջանի իրենց դաշնակիցները հետապնդում են պանթուրանիզմի դարավոր երազանքը, և որ Ռուսաստանի առջև Անդրկովկասի դռները փակելու, այստեղ ռազմաքաղաքական գերիշխանություն հաստատելու դերակատարը դարձյալ իրենք չեն լինելու, այլ Թուրքիան և Ադրբեջանը, սակայն այսօր առաջնային գերխնդիրը կոշտ պայքարն է՝ սահմանափակելու Ռուսաստանի ազդեցության գոտին:

Ելնելով այս իրողություններից՝ ինչ պետք է աներ և ինչ է անում Հայաստանի ղեկավարությունը: Հայաստանի իշխանությունը բացահայտորեն որդեգրել է հակառուսական գործելակերպ և համախոհ է նրանց հետ, ովքեր այսօր ջանում են կլանել Արցախը և Հայաստանին զրկել ինքնիշխանության ու հզորանալու

Մյունխենի համաժողովում

հեռանկարից: Այսինքն՝ Արևմուտքի ծրագրերին համապատասխան՝ Ադրբեջանի ու Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը նրանց փոխարեն հաջողությամբ իրականացնում է Հայաստանի քաղաքականապես անգրագետ, իսկ ավելի ստույգ՝ արտաքին կաշկանդումներին ենթակա իշխանությունը: Ադրբեջանի ու Թուրքիայի ցանկությունն այն է, որ Ռուսաստանը միջնորդ չլինի հայ-ադրբեջանական բանակցություններում: Հայաստանը կատարում է նրանց ցանկությունը՝ մերժելով ռուսական միջնորդությունը և գործընթացն աստիճանաբար հասցնելով այն կետին, որ առհասարակ, միջնորդներ չլինեն իրենց և թշնամի հարևանների հետ շփումների ժամանակ: Ադրբեջանը շրջափակելով Արցախն ու անընդհատ ճնշումներ գործադրելով թե՛ Արցախի և թե՛ Հայաստանի վրա՝ ըստ էության, փորձում է շահերի այս եռանկյունուց դուրս բերել իր նպատակներին խոչընդոտող Ռուսաստանին, սակայն առերևույթ շարունակում է բարեկամական ժեստեր անել նրան՝ խաղարկելով տնտեսական և այլ գործոններ: Իսկ Հայաստանի իշխանությունը, ըստ էության, շրջանցում է Ադրբեջանի հակահայկական ու հակառուսական ագրեսիվ քաղաքականությունը և եռակողմ հարաբերությունների մեջ թիրախ է դարձնում Ռուսաստանին՝ մեղադրելով պարտավորությունները չկատարելու մեջ: Հայտնվում ենք մի իրավիճակում, երբ Արցախի հայկականությունն երաշխավորող Ռուսաստանի հետ բազմաթիվ թելերով շաղկապված լինելով՝ Հայաստանը ուղղվում է դեպի հակադիր ճամբար, իսկ Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը վիճարկող, Ուկրաինային ռազմական զանազան օժանդակություններ տրամադրող, միջազգային կազմակերպություններում ընդդեմ Ռուսաստանի քվեարկող Ադրբեջանը իբրև թե արևմտյան միջամտությանը ընդդիմացող նույն ճամբարում է Ռուսաստանի հետ, ինչն այս ճակատագրական պահին խիստ կարևոր է վերջինիս համար: Հայաստանի իշխանությունները հրաժարվելով Արցախի շահերը պաշտպանելուց և Հայաստանի անվտանգության

ապահովման պարտականություններից՝ խիստ հետևողական են այդ շահերը չպաշտպանելու մեջ Ռուսաստանին մեղադրելու հարցում: Նրանց բուն նպատակը հայ ժողովրդի մեջ հակառուսական տրամադրությունների բորբոքումն է, ժողովրդին համոզելը, որ Արևմուտքից պարտվող, Հայաստանի նկատմամբ պարտականությունները չկատարող Ռուսաստանի հետ հեռահար հաշվարկներ անելն անիմաստ է, և այլ ելք չկա, բացի արևմտյան այլընտրանքից, իսկ ավելի ստույգ՝ Արևմուտքին այստեղ ներկայացնող թուրք-ադրբեջանական գերիշխանությունից: Արցախի շրջափակման դեմ ոչինչ չնախաձեռնող իշխանությունը վաղը միջանցքի պատրվակով տարածք է զիջելու իր թշնամիներին՝ այն ներկայացնելով որպես արցախցիների փրկության միակ միջոց, Հայաստանից ևս տարածքներ է զիջելու Ադրբեջանին՝ ներկայացնելով որպես մնացածը փրկելու և տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ելք: Հայաստանի իշխանությունները զայրացած ու զարմացած բացականչում են. «Դուք ցանկանում եք, որ 3 միլիոնանոց Հայաստանը հակադրվի՞ 100 միլիոնանոց թուրք-ադրբեջանցիներին»՝ լռելով այն հարցում, թե իրենց ոխերիմ հարևանների ցանկությունները չբավարարելու դեպքում որքան է զիջելու Հայաստանը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ թվային համեմատությունը չի փոխվելու:

Երբ պատերազմող երկիրը ղեկավարում են դասալիքները, տրամաբանական է այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում: Նիկոլ Փաշինյանի թիմը իշխանության է եկել արդեն իսկ Հայաստանի թշնամիներից հոգեբանորեն պարտված: Դրանով էին նաև պայմանավորված ի սկզբանե նրանց հնչեցրած անհեթեթ հայտարարությունները՝ արցախյան պատերազմում անիմաստ զոհերի, թշնամի երկրի կիրթ ղեկավարի, այդ ղեկավարի կնոջ հետ մուղամ լսելու, ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնադրույթները դպրոցներից հանելու, ազգային կրթական չափորոշիչներից հրաժարվելու և նման այլ բաների մասին:

Հայաստանի չորրորդ իշխանության անցած ճանապարհը կրկնում է առաջին իշխանության անցած ուղին: Արցախյան պայքարից հրաժարվելու, ամեն գնով խաղաղության հասնելու, աշխարհաքաղաքական բևեռից բևեռ ցատկոտելու ճիգերն ի վերջո կանգնեցրին նրանց և նաև մեր երկիրը աշխարհաքաղաքական փակուղու առջև: Արցախյան շարժման առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահի բազմաթիվ հոդվածներում ուրվագծվում էր աշխարհաքաղաքական պատկերը, նրա նախանշած հեռանկարը բոլոր դեպքերում փակուղի էր տանում, եթե Հայաստանն ամեն գնով չստորագրեր խաղաղության պայմանագիր: Մարդիկ, ովքեր իրենց էությամբ ու համոզմունքներով չեն հավատացել հզոր, անկախ Հայաստանի հեռանկարին, կաշվից դուրս են եկել և դուրս են գալիս Հայաստանի ճակատագիրը տնօրինելու համար:

ՀՀ առաջին նախագահի հետ տեղի ունեցածի պես նրա հոգեզավակի համար ևս խուսանավելու դաշտն աստիճանաբար նեղանում է: Պարզվեց, որ Ռուսաստանը ոչ միայն չի կործանվում, այլև չի պատրաստվում լքել տարածաշրջանը, որի նկատմամբ նրա ճնշումը առաջիկայում ամենայն հավանականությամբ մեծանալու է:

Հայաստանին ու Արցախին անցած դարի իննսունականների վերջին աշխարհաքաղաքական փակուղուց դուրս բերեց իշխանափոխությունը:

Հայաստանի իշխանությունը, որը բազմաթիվ անօրինականություններ ու հանցանքներ է գործել իր երկրի ու ժողովրդի նկատմամբ, սարսափում է իշխանափոխության մտքից: Զուսենալով սկզբունք և հայրենասիրության զգացում՝ նա պատրաստ է լինելու, ըստ նժարի ծանրության, ցանկացած զիջումների արտաքին ուժերին: Կփրկի կաշին, թե այն կչորանա ոսկորների վրա, ինչպես պատահեց մեկ այլ օգտագործված ու դեն նետվածի՝ Սահակաշվիլու հետ, մեզ համար ոչ մի կարևորություն չունի: Գերխնդիրը Արցախ-Հայաստանն է ու նրա փրկությունը:

Հ.Գ

2023 թ. փետրվարի 16ից 19-ը Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Մյունխենի խաղաղության համաժողովին, որի ընթացքում տեղի ունեցավ նաև բաց քննարկում-բանավեճ Հայաստանի և Ադրբեջանի առաջնորդների միջև: Համաժողովի խորապատկերին ակնհայտորեն դրսևորվեց Հայաստանի ղեկավարի քաղաքական խեղճությունը, նրա անկարողությունը, իսկ, գուցեև ցանկության բացակայությունը պաշտպանելու Հայաստանի ու Արցախի շահերը: Երբ Ադրբեջանի ղեկավարը հայկական կողմին մեղադրում է Ադրբեջանի տարածքների օկուպացիայի, ռազմական այլ հանցագործությունների մեջ, իսկ Հայաստանի առաջնորդը չի կարողանում, վախենում է կամ միտումնավոր չի խոսում Ադրբեջանի սանձազերծած պատերազմի, զանազան հանցագործությունների և շարունակվող շրջափակման մասին, այլևս միևնույն է, թե որոնք են դրա դրդապատճառները: Երբ սրան գումարվում է նաև Թուրքիայի արտգործնախարարի կողմից, արդեն այդ երկրի տարածքում, Հայաստանի արտգործնախարարին ներկայացվող ակնհայտ պահանջները՝ մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու համար Ադրբեջանի ներկայացրած պահանջների բավարարման մասին՝ կասկած չի մնում, թե Հայաստանի դրածո իշխանությունը ինչ ծրագիր է իրականացնում և դեպի ուր է առաջնորդում հայ ժողովրդին: Հայաստանի վերջին բեկորները թուրք-ադրբեջանական նոր ստրկությանը ենթարկելու նպատակը հնարավոր է ձախողել միայն ազգադավ իշխանության դեմ համաժողովրդական պայքարի ճանապարհով: Իշխանափոխության ձգձգումը կարող է անիմաստ դարձնել դրա անհրաժեշտությունը: ■

Ազատության շրջափակում Արցախը չի զգացել և չի զգում

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանի հետ

—Արդեն երկու ամիս է, ինչ Արցախը շրջափակման մեջ է: Այս աննախադեպ իրավիճակում ինչ մթնոլորտ է Արցախում և ինչպիսին է ժողովրդի տրամադրությունը:

—Անցած երկու ամսվա ընթացքում կուսակցական մարմինները և ԱՀ ԱԺ պատգամավորները առիթներ ունեցել են անմիջականորեն շփվելու ժողովրդի հետ և ստուգելու ժողովրդի ընդհանուր տրամադրությունն ու տրամադրվածությունը: Անշուշտ, բավականին բարդ է իրավիճակը. 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո պատերազմի ծանր հետևանքների պայմաններում քաղաքական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, բարոյահոգեբանական և ամենակարևորը՝ անվտանգային առումներով Ադրբեջանը ձեռնարկում է հերթական քայլը, որն ունի հատուկ նպատակ՝ բարոյահոգեբանական ճնշում գործադրել և Արցախից ժողովրդին տարհանելու գաղափար սերմանել: Ժողովրդի տրամադրվածությունը շատ համահունչ է այն գաղափարներին ու նպատակներին, որոնք մենք նախանշել ենք 1988-ին, այն մոտեցումներին, որ վերջին 30 տարիներին տիրում էր ոչ միայն Արցախում, այլև ընդհանրապես համայն հայ ժողովրդի մեջ: Շատ կարևոր է, որ Սփյուռքի մեր հայրենակիցներին ևս փոխանցվի այս պատգամը և այստեղ տիրող տրամադրությունը. Արցախը շարունակում է պայքարը:

—Որքանով է Արցախի իշխանություններին հաջողվել ապահովել կենսագործունեությունը, ինչպես են գործում պետական հիմնարկները, սպասարկման և մյուս ծառայությունները:

—Սա սովորական իրավիճակ չէ, պետք է հասկանալ, որ գտնվում ենք ոչ միայն պատերազմական, արտակարգ իրավիճակում, այլև այնպիսի իրավիճակում, որի մեջ կայինք 90-ական թվականների սկզբին: Հիշենք, որ 1990-ականներին Լեռնային Ղարաբաղը ամբողջապես կտրված էր մայր հայրենիքից, չկար ցամաքային կապ, մեր կապը մասամբ ապահովվում էր օդային ճանապարհով, ավելի ստույգ՝ ուղղաթիռներով, իսկ այսօր օդային ճանապարհը փակ է, ցամաքային կապն ամբողջովին արգելափակել են Ադրբեջանի, այսպես կոչված, «էկոակտիվիստները» և ստեղծել նոր իրավիճակ: Իշխանությունների ձեռնարկած քայլերի շնորհիվ հնարավորություն է ընձեռվել նախ և առաջ ճշգրտել մեր ունեցած կարողությունները, մեր անվտանգային պարենային պաշարները, ռեսուրսները, ինչպես նաև մշակել բաշխման համապատասխան մեխանիզմներ: Սահմանած կտրոնային համակարգը մեղմել է ընդհանուր կացությունը և ստեղծել համակարգված իրավիճակ: Թեև Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արցախի գրասենյակի, ինչպես նաև ռուս խաղաղապահների հետ վարած բանակցությունների շնորհիվ հնարավորություններ են ստեղծվել, այդուհանդերձ շատ կարևոր է ժողովրդի կողմից իրավիճակի ընկալման գիտակցությունը: Հավանաբար մեր թշնամիները ակնկալում էին նաև ներքին սոցիալական ընդվզումներ, բայց Արցախի ժողովուրդն այս իրավիճակում ևս ի ցույց դրեց իր իմաստությունը և այս ծանր պայմաններում խոր գիտակցումով մոտեցավ իրավիճակին, նույնիսկ իշխանությունների բացթողումներն ու որոշ վրիպումներ աննկատ մնացին: Ստեղծվել է կառավարելի կացություն, ընդհանուր մատակարարումները բավարարում են բնակչության գոնե նվազագույն կենսական պահանջները:

— Ինչ կարծիք ունեք Հայաստանի որդեգրած դիրքորոշման վերաբերյալ, ինչ կարող էր անել և ինչ պետք է աներ Հայաստանի իշխանությունը:

—Վերջին չորս տարիներին առիթներ ունեցել ենք անդրադառնալու Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությանը: Հետպատերազմյան շրջա-

նում ակնհայտ էր, թե ինչպիսի քաղաքական գիծ են ընդունել Հայաստանի իշխանությունները, ինչի հետևանքով մենք հայտնվել ենք քաղաքական մեկուսացման մեջ: Անցած 30 տարիներին ԱՀ և ՀՀ համատեղ գործունեության շնորհիվ մենք կարողացել ենք ստեղծել մեզ համար կենսունակ պայմաններ: Հետպատերազմյան շրջանում առավել անհրաժեշտ էր, որպեսզի ՀՀ իշխանությունները հոգածություն տածեին և նաև նոր քաղաքական վարքագիծ դրսևորեին Արցախի ապագայի և այն հիմնախնդիրների նկատմամբ, որոնք ծառացած են մեր առջև: Ցավոք սրտի, հակառակ գործընթացն է ընթացել և ընթանում. Հայաստանի իշխանությունները որոշ նյութական և սոցիալական խնդիրների լուծման փաստերը ներկայացնելով որպես Արցախի ժողովրդին և Արցախի ապագային միտված հիմնական աջակցություն ու օժանդակություն՝ թյուր տպավորություն են փորձում ստեղծել:

Արցախի հարցով կարևոր են Հայաստանի իշխանությունների կողմից երկու ուղղությամբ տարվող աշխատանքները՝ քաղաքական և անվտանգային: Անշուշտ, անվտանգային հարցերն առաջնային են: Անվտանգային համակարգի մեջ մենք նախ և առաջ դիտարկում ենք Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Արցախի Հանրապետության և Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորի: Հայաստանը հրաժարվել է անվտանգային երաշխավորի պարտականությունից: Այս մասին պաշտոնապես չի հայտարարվում, չի բարձրաձայնվում, բայց իրականությունն այն է, որ Հայաստանը չի կատարում իր ստանձնած պարտավորությունները, այն, ինչ ակնկալում ենք և այն, ինչ մեզ անհրաժեշտ է:

Իհարկե, կան համագործակցության որոշակի դրսևորումներ և համատեղ որոշ քայլեր, բայց սրանք բավարար չեն, անհրաժեշտ է ամուր և միասնական անվտանգային համակարգ՝ իր բոլոր բաղադրիչներով, որը ստեղծվել էր տասնամյակների տքնաջան աշխատանքի շնորհիվ, այո՛, այն այսօր խոցված է, անդամալույծ, սակայն կարևոր է գիտակցել, որ առանց այդ միասնական համակարգի մեր հայրենիքը խոցելի է լինելու: Այստեղ է Հայաստանի իշխանությունների հիմնական դերակատարությունը: Տեսնում ենք, թե ինչպես են իրենց որդեգրած անհասկանալի քաղաքական վարքագծով, հետևողական քայլերով և տարբեր պատճառաբանություններով ամբողջապես փլուզում երկրի անվտանգային համակարգը:

Հաջորդ խնդիրը քաղաքական պաշտպանվածության հարցն է, որի կարիքը զգում է Արցախի Հանրապետությունը և Արցախի ժողովուրդը: Հայաստանի իշխանությունները վարչապետի, ԱԳՆ, Անվտանգության խորհրդի քարտուղարի կամ խորհրդարանական դիվանագիտության մակարդակով չեն ստեղծում այն պայմանները, որոնց միջոցով Արցախը պետք է հնարավորություն ունենա ներկայանալ միջազգային բեմահարթակում: Այստեղ ևս նկատելի է Հայաստանի իշխանությունների կողմից ոչ միայն պարտադրված նահանջ, այլև միտումնավոր հետքայլ: Ըստ իս՝ դրա մեջ ակնառու է Ադրբեջանի և Թուրքիայի ուղղակի և անուղղակի դերը:

—Ինչպե՞ս եք վերաբերվում Հայաստանի վարչապետի այն հայտարարություններին, թե Ադրբեջանն ու Արցախը միմյանց հետ պետք է բանակցեն Արցախի հարցի վերջնական կարգավորման և առհասարակ առկա բոլոր խնդիրների շուրջ:

—1994 թ. զինադադարի ստորագրումից հետո բանակցային գործընթացը վարվում էր եռակողմ ձևաչափի՝ Արցախի, Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների շրջանակներում:

Ցավոք սրտի, հետագայում փոխվեց այս ձևաչափը, Արցախը դուրս մղվեց բանակցային գործընթացից և այն դարձավ երկկողմ՝ որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցությունների գործընթաց:

Այնուհետև ականատես եղանք, թե ինչպես էր Ադրբեջանը ձգտում Ղարաբաղյան հակամարտության էությունը փոխել և այն դարձնել Հայաստան-Ադրբեջան համակարգտություն: 2020 թ. պատերազմից հետո դա հաջողվեց Ադրբեջանին: Այնուամենայնիվ, խնդիրը Հայաստանի իշխանությունների մոտեցումն է, նաև այն, թե ինչպիսի քաղաքական ուղղվածություն են որդեգրում Հայաստանի իշխանությունները: 2020 թ. հետպատերազմյան շրջանում Հայաստանի իշխանությունները, ակնհայտորեն քաղաքական նահանջ ապահովելով, փորձում են դեմ հանդիման թողնել Արցախին և Ադրբեջանին: Ադրբեջանը Արցախի իշխանությունների հետ ունեցած կենցաղային, հատկապես կոմունիկացիաներին վերաբերող որոշակի շփումները փորձում է ներկայացնել որպես ուղղակի երկխոսություն: Ուղղակի երկխոսություն կարող է լինել, եթե քաղաքական հարթության մեջ, քաղաքական հարցերի շրջանակներում կա հավասարը հավասարի հետ բանակցություն: Այս պայմաններում դժվար է միահավասար սկզբունք ձևակերպել և դրանով առաջնորդվել: Անգամ Հայաստանը և Ադրբեջանը այդ սկզբունքով չեն կարողանում փոխհարաբերվել: Այնուհանդերձ ակնհայտ է, թե ինչպես է Հայաստանում իշխող համակարգը Արցախին ուղղակիորեն մղում դեպի Ադրբեջան, ինչը նման է նրան, երբ զոհին ուղղորդում ես դեպի գազանը: Այսօր հայտնվել ենք հենց այդ զոհի կարգավիճակում: Այդուամենայնիվ Ադրբեջանի հետ շփումներին և երկխոսելուն երբեք դեմ չենք եղել: Վերջին շրջանում նաև ունեցել ենք ներքին քննարկումներ, որոնց ընթացքում արձանագրել ենք, որ երկխոսելը նպատակահարմար է և այդ երկխոսության մեջ պետք է դիտարկել ոչ միայն տնտեսական, սոցիալական ոլորտներին առնչվող

խնդիրները, այլև մեր քաղաքական ապագային և մեր կարգավիճակին վերաբերող հարցերը: Մենք՝ որպես ինքնուրույն սուբյեկտ, դեմ չենք Արդրբեջանի հետ երկխոսելուն, բայց շատ դժվար է այդ երկխոսությունը ծավալել հատկապես այն պայմաններում, երբ Հայաստանի իշխանություններն իրենց խոսույթում Արցախը դիտարկում են որպես Ադրբեջանի մաս: 1989 թ. դեկտեմբերի 1-ի Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը, ինչպես նաև 1992 թ. հուլիսի 8-ի Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումները պետք է լինեն մեր ապագա կարգավիճակի հիմքը:

— Որքան էլ Ադրբեջանի և Հայաստանի իշխանությունները ցանկանան համոզել, թե Արցախի հարցը լուծված է, շահագրգիռ ուժերն ու նրանց ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ հայտարարում են, որ հարցը փակված չէ, և գոյություն ունի Արցախի կարգավիճակի խնդիր: Արցախի շրջափակումը, Ադրբեջանի իշխանությունների կողմից պարբերաբար կազմակերպվող զանազան սադրանքներն արդյոք չեն փաստում, որ Ադրբեջանի կազմում արցախահայությունը ապագա չի կարող ունենալ:

— 44-օրյա պատերազմից հետո ադրբեջանական կողմն ակնհայտորեն որդեգրել է մի քաղաքական գիծ, ըստ որի՝ այլևս չկա Ղարաբաղի հիմնահարց, այն լուծված է, և այդ հիմնահարցի շուրջ որևէ միջազգային քննարկում անիմաստ է: Հայկական կողմը պնդում է, որ այս հիմնահարցը հանգուցալուծված չէ, ուստի Ղարաբաղի հիմնահարցի լուծման համար լրացուցիչ քննարկումներ կազմակերպելու և հավելյալ միջազգային հարթակներ օգտագործելու անհրաժեշտություն կա: Ղարաբաղի հիմնահարցով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խումբը գրեթե չկա, այն անդամալույծ վիճակում է, եթե չասեմ՝ լուծարված:

Այդ մասին պարբերաբար որոշ տեսակետներ են ներկայացնում հենց համանախագահող երկրների արտաքին գերատեսչությունների ներկայացուցիչները, երբեմն նաև առաջին դեմքերի մակարդակով լսում ենք տարբեր տեսակետներ, բայց փաստն այն է, որ Մինսկի խմբի ձևաչափն այսօր կենսունակ չէ և չի կարող ապահովել այն պահանջները, որոնք մենք ակնկալում էինք: Մենք որոշ փորձեր արել ենք՝ օգտագործելու միջազգային տարբեր հարթակները, ինչպիսիք են ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, Եվրախորհրդարանը, Եվրամիությունը:

Մենք փորձում ենք աշխարհին ապացուցել, որ Արցախը չի կարող մնալ հայկական, եթե այս տարածաշրջանում չլինի հայկական պետական համակարգ:

—Այսօր շատ է խոսվում համահայկական միասնականության ձևավորման, նաև հայկական եռամիասնության պայքարի նոր փուլ սկսելու մասին: Ո՞րն է այս հարցերի շուրջ Ձեր տեսակետը, ինչ

տրամադրություններ կան արցախահայության մեջ:

—Ղարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծման առումով կարևոր է ունենալ համահայկական ներքին միասնություն, ներքին համախոհ մթնոլորտ, նաև ձևավորված միասնական օրակարգ: Հիմնական առանցքը հենց Արցախն է, Արցախի իշխանությունների որդեգրած քաղաքական գիծը և մեր համահայկական ներուժը՝ ի դեմս Սփյուռքի: Եռամիասնության ձևաչափը և եռամիասնության շրջանակում գործելու հնարավորությունները տասնամյակներ ի վեր մեզ տվել են համապատասխան արդյունքներ թե՛ քաղաքական ոլորտում և թե՛ տնտեսական կամ սոցիալական տարբեր խնդիրներում: Սակայն ինչպես տեսնում ենք, 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից, իսկ առավել ևս 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո խախտված է այս եռամիասնությունը:

Միասնության վերականգնման հարցում մեր կազմակերպությունը՝ ՀՅԴ-ն, պետք է առանցքային դեր ունենա: Շատ կարևոր են այն ջանքերը, որոնք մենք գործադրում ենք Սփյուռք-հայրենիք միասնությունն ու Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը վերակագնելու համար:

Արցախում տիրող ներքին համախոհության մթնոլորտը կարող է լավագույն օրինակը լինել թե՛ ՀՀ-ի, թե՛ Սփյուռքի համար: Արցախում վերջին երկու տարիների ընթացքում այդ ամենի համար պարարտ հող ենք նախապատրաստել: Ստեղծված նոր իրավիճակում հետպատերազմյան շրջանի բոլոր մանր խնդիրները մի կողմ դնելով, տարբեր քաղաքական ուժերին համախմբելով և իշխանությանը աջակցելով առաջատարի դեր ստանձնելու հարցում՝ համախոհության մթնոլորտ է ապահովվել: Կարևոր է, որպեսզի սա գիտակցի յուրաքանչյուր հայ և հայկական կառույց, և ի վերջո՝ Հայաստանի իշխանությունները: Սփյուռքում այդ առումով ևս պարարտ հող կա, Սփյուռքը թեկուզև որոշակիորեն հիասթափված և հուսալքված է 2020 թ. պատերազմի ծանր պարտությունից հետո,

այնուամենայնիվ նկատելի է որոշակի աշխուժություն և ակտիվություն: Մենք Արցախից այդ ազդակներն ուղարկում ենք, նախադրյալներ ենք ստեղծում, սակայն մեզ համար գլխավոր խնդիրը Հայաստանն է և Հայաստանում ստեղծված ներքին քաղաքական մթնոլորտը:

Մենք՝ որպես ՀՅԴ Արցախի և ՀՅԴ համահայկական կառույց, կարող ենք մեծ դերակատարություն ունենալ՝ մեր ընդհանուր ծրագրերով, նպատակներով, նաև հավատարիմ մնալով մեր առաքելությանը և մեր սկզբունքներին: Դաշնակցությունը միշտ կարողացել է կարևորը երկրորդականից զանազանել և շատ դեպքերում միավորողի դեր ստանձնել: Արցախն այս առումով որոշակի քայլեր պիտի նախաձեռնի: Արցախում ծավալված քաղաքական զարգացումները վերջին մի քանի ամիսներին ստեղծում են այդ հնարավորությունը, և այս ալիքը, որ նորից բարձրանում է Արցախում, կարող է դառնալ համահայկական միասնության հիմքը: Կարևոր է ի մտի ունենալ այն, որ անցած տասնամյակներին մենք որդեգրել ենք Արցախի և Դաշնակցության բնական դաշնակիցներ լինելու գաղափարը: Այդ գաղափարը օգտագործելով՝ մենք կարող ենք ներազդել Հայաստանի ներքին կյանքի վրա, այնտեղ ևս ստեղծել համապատասխան մթնոլորտ, իսկ Սփյուռքը հիմք ընդունելով այս դաշինքը և վերոնշյալ երկու կարևոր ուժերի գործոնը՝ կարող է համապատասխան վարքագիծ դրսևորել: Ի դեպ, այս ուղղությամբ մենք ունեցել ենք ներքին քննարկումներ կուսակցության շրջանակներում, ինչպես նաև Արցախի իշխանությունների, երկու վեհափառների, Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկավար կազմի հետ: Մեզ անհրաժեշտ է այս քննարկումներին հաղորդակից դարձնել նաև ՀՀ իշխանություններին և ունենալ որոշակի հանգուցալուծում, որը կարող է լինել համահայկական համաժողովի միջոցով՝ եռամիասնության գաղափարի ձևաչափով: Այդ համաժողովը կարող է լինել եռամիասնության վերականգման նոր սկիզբը, ինչպես նաև ճշգրտել մեր հիմնական խնդիրները համատեղ գործունեության համար:

-Ուզում եմ անդրադառնալ նաև այն զարմանալի փաստին, որ նման դրամատիկ պայմաններում հայտնված արցախահայությունը դրամահավաք է իրականացնում երկրաշարժից տուժած սիրիահայությանն օգնելու նպատակով: Համոզվում ես, որ իսկապես արյառոց ժողովուրդ ենք, երբ իրար հետ համեմատում ենք հայի այս տեսակը և ազգին պատակտած մյուս տեսակը, որն այսօր ղեկավարում է Հայաստանը:

—Արցախի ժողովուրդը միայն իր համար չէ, որ պետք է մտահոգված լինի, Արցախը տարիներ և տասնամյակներ զգացել է Սփյուռքի հոգածությունն իր

նկատմամբ, Արցախը միշտ էլ գիտակցել է, թե ինչպիսի ծանր պայմաններում են սփյուռքահայ մեր եղբայրները կազմակերպում իրենց նվիրահավաքները, քաղաքական աջակցություն ցուցաբերում Արցախին և ըստ իս՝ որևէ իրավիճակ, որևէ մթնոլորտ չի կարող ազդել արցախցու հոգեբանության և վարքագծի վրա: Այո՛, մենք գտնվում ենք շրջափակման մեջ, բայց մեր միտքն ու հոգին շրջափակված չեն: Շատ կարևոր է գիտակցել այդ ամենը և փորձել այդ ազատությունն արտացոլել և տարածել նաև այլ միջավայրերում: Հզոր երկրաշարժից հետո մեր սիրիահայ եղբայրները գտնվում են ծանր վիճակում, ուստի անհրաժեշտ է ձեռք մեկնել նրանց որպես միասնականության դրսևորում:

Այո՛, այստեղ դժվար իրավիճակ է, բայց եղբորն օգնելու պատրաստակամությունը տասնամյակներ ի վեր մենք տեսել ենք և այս պայմաններում, անշուշտ, չէինք կարող անտարբեր մնալ: Դաշնակցության կառույցը ՀՕՄ-ի միջոցով հանդես եկավ նման նախաձեռնությամբ, որը բնականաբար ողջունեցին Արցախի իշխանությունները: ԱՀ իշխանությունների և ՀՕՄ-ի համատեղ ջանքերով է իրականացվում այդ նվիրահավաքը: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ Արցախի ժողովուրդը բարձր գիտակցություն ցուցաբերելով՝ իր ունեցածից մասնաբաժին է տալիս: Վստահ ենք, որ նման թեկուզ փոքր քայլերով մենք կարող ենք լավագույն օրինակը ցույց տալ ոչ միայն մեր ժողովրդին, այլև ամբողջ աշխարհին: Շրջափակումը միայն կարելի է դիտարկել տնտեսական և սոցիալական բաղադրիչներով, բայց ազատության շրջափակում Արցախը չի զգացել և չի զգում, դրա լավագույն դրսևորումներից մեկը սիրիահայությանը ձեռք մեկնելն է և նրան մեր ունեցածից մասնաբաժին տալը: ■

Հարցազրույցը վարեց Տաթևիկ Աղաջանյանը

Արցախի շրջափակում՝ ռիսկեր ու հնարավորություններ

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Արդեն երկու ամիս է, ինչ Ադրբեջանի իշխանությունները փակել են Արցախը Մայր Հայաստանին կապող, այս պահին գործող միակ ճանապարհը՝ օկուպացված Բերձորի շրջանով անցնող, այսպես կոչված, Լաչինի միջանցքը: Ստեղծված իրավիճակը բազում անհանգստություններ է պատճառում ոչ միայն Արցախին, այլև Ադրբեջանին, որի իշխանությունները երկու ամիս շարունակ ստիպված են դիմակայել միջազգային տարբեր հարթակներից հնչող քննադատությանը: Փակ ճանապարհը մեծ խնդիր է նաև Ռուսաստանի համար, որը փաստորեն չի կարողանում կատարել իր ստանձնած միջազգային պարտավորություններն ու ապահովել Լաչինի միջանցքի անխափան գործունեությունը:

Որքան էլ պարադոքսալ հնչի, Արցախի ճանապարհի փակ լինելը ամենաքիչը պաշտոնական Երևանին է հուզում: Հայաստանի իշխանություններն ամենաբարձր մակարդակով հայտարարում են, որ, այսպես կոչված, Լաչինի միջանցքը Ռուսաստանի պատասխանատվության գոտում է, և որ Հայաստանն այդտեղ անելիք չունի: Ավելին, Հայաստանի իշխանության ներկայացուցիչներն Արցախը Ադրբեջանի մաս են ճանաչում և նշում, որ այնտեղ բնակվող 120.000 մարդկանց պատճառով չեն կարող վտանգել Հայաստանի 3 միլիոն բնակչությունը:

ՀՀ իշխանությունների այս բացառիկ ցինիզմը, ցավոք, արդեն սովորական է դարձել Հայաստանի և Արցախի քաղաքացիների համար: Մեր հանրությունը չի ընդդիմանում Փաշինյանի կառավարության սույն քաղաքականությանն ու գործելաոճին՝ կարծես խաչ քաշած լինելով այս իշխանությունների վրա: Արտասահմանում հայկական պետականության գործառույթները ստանձնել է Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որի կառույցները շարունակ ակցիաներ են իրականացնում Եվրոպայի, ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի տարբեր քաղաքներում՝ պահանջելով իրենց կառավարություններից ճնշում գործադրել Ադրբեջանի վրա և բացել Արցախի ճանապարհը:

Իսկ ահա Արցախում բավական հետաքրքիր և հուսադրող գործընթացներ են սկսվել: Չնայած այն հանգամանքին՝ որ հայկական երկրորդ պետությունը գտնվում է հումանիտար աղետի եզրին, արցախահայությունը դիմադրելու և թշնամուն ոչինչ չզիջելու որոշում է կայացրել: 2022 թ. դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտում համաժողովրդական մեծ հանրահավաք է տեղի ունեցել, որի ընթացքում տեղի բնակիչները հստակ բարձրաձայնել են Ադրբեջանի ճնշումներին դիմակայելու իրենց որոշման մասին: Արցախում ստեղծվել է օպերատիվ շտաբ, որը հնարավորությունների սահմաններում բավական արդյունավետ է լուծում շրջափակման մեջ հայտնված բնակչության խնդիրները:

Սույն տարվա հունվարի 18-ին համացանցում լուրեր տարածվեցին այն մասին, որ Արցախում տեղակայված ռուս խաղաղապահների միջնորդությամբ հունվարի 15-ին կամ 16-ին հանդիպել են ԼՂՀ և Ադրբեջանի ներկայացուցիչները և քննարկել, այսպես կոչված, Լաչինի միջանցքի բացման հնարավորությունը[1]: Ըստ տարածված լուրերի՝ որոնք հետագայում հաստատվել են նաև պաշտոնական Ստեփանակերտի կողմից, Արցախի կողմից սույն հանդիպմանը մասնակցել է նախագահ Արայիկ Հարությունյանը, իսկ Ադրբեջանի կողմից՝ գլխավոր շտաբի պետի տեղակալը, ՆԳ նախարարն ու ևս մեկ ներկայացուցիչ կառավարությունից: ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, խոսելով այս հանդիպման արդյունքների մասին, ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ ըստ իրեն՝ առաջիկայում Լաչինի միջանցքի հարցը կլուծվի[2]: Սակայն ավելի ուշ հայտնի դարձավ, որ ադրբեջանական կողմն այդ հանդիպման ընթացքում կոնկրետ պահանջներ է դրել Արցախի իշխանությունների առջև: Ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների՝ խոսքը վերաբերում է հետևյալ հինգ պահանջներին՝

1. Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի պաշտոնանկություն,

2. Ադրբեջանական պոստերի պարտադիր տեղակայում Ստեփանակերտի մոտակայքում,
3. Գորիս-Ստեփանակերտ ճանապարհին տեսահսկող և ռենտգեն նկարահանման սարքերով հագեցած ադրբեջանական անցակետերի տեղադրում
4. Արցախի ամբողջական զինաթափում,
5. Կաշենի հանքի փակում[3],

Ադրբեջանական կողմի այս պահանջներից յուրաքանչյուրը մեծ սպառնալիք է Արցախի ոչ միայն ինքնուրույնության պահպանման, այլև ընդհանրապես հայկական մնալու համար: Չնայած Արցախի իշխանությունների որոշ ներկայացուցիչներ պատրաստակամություն են հայտնել կատարելու Ադրբեջանի պահանջները՝ այնուամենայնիվ, գերակշռող է դարձել այն դիրքորոշումը, որ թեև մեծ զոհողությունների գնով, բայց պետք է շարունակել Արցախի անկախության համար մղվող պայքարը: Ի վերջո ստեղծվել է մի իրավիճակ, որը բոլոր դժվարություններով հանդերձ, ամեն դեպքում նաև հնարավորություններ է ստեղծում հայկական երկրորդ պետության համար:

Փորձենք անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Հայտնի ճշմարտություն է, որ ադրբեջանա-արցախյան հակամարտությունն ընթանում է ոչ միայն տեղում՝ այսպես ասած, հողի վրա, այլև քաղաքական, քարոզչական և միջազգային տիրույթներում: Ադրբեջանի իշխանությունները տարիներ շարունակ, հատկապես՝ 2020-ի պատերազմի ավարտից հետո բոլոր հնարավոր հարթակներում զարգացնում էին այն թեզը, իբր Ադրբեջանի կազմում Արցախի հայությունը նույն իրավունքներն ու հնարավորություններն է ունենալու, ինչ Ադրբեջանի մյուս քաղաքացիները: Պաշտոնական Բաքուն փորձում էր ներկայանալ իբրև հանդուրժող, արցախահայության հետ հաշտություն փնտրող և նրանց համար լավ ապագա կերտող երկրի իշխանություն, որն արդեն օրակարգ էր բերել հայերի «ռեինտեգրացիայի» գործընթացը: Սակայն Արցախի վերջին երկու ամիսների շրջափակումը, այնտեղ մատակարարվող էներգակիրների պարբերական արգելափակումը, քաղաքացիական ենթակառուցվածքների վրա իրականացվող հարձակումները, դրան զուգահեռ ընթացող քաղաքական ու հոգեբանական ճնշումները, ինչպես նաև ռազմական ուժով շարունակ սպառնալը լավագույն ձևով բացահայտում են Բաքվի իշխանությունների և ընդհանրապես ողջ Ադրբեջանի ընդգծված հայատյաց բնույթը:

Արցախի իշխանությունները, ինչպես նաև Հայաստանի մտահոգ քաղաքացիներն ու Սփյուռքի հայկական կառույցները հրաշալիորեն կարողանում են հասցնել այդ ուղերձը միջազգային հանրությանը: Հիմա այլևս պատրանքներ չկան, նույնիսկ ընդգծված պրոադրբեջանական գործիչները խոստովանում են, որ Ադրբեջանի նպատակն Արցախը հայաթափելն է: Եվ եթե արցախահայության ու Սփյուռքի ջանքերին միանար նաև Հայաստանի Հանրապետությունը, ապա այս հարցում հնարավոր էր շոշափելի հաջողություններ ունենալ:

Թշնամական երկրորդ կարևոր թեզը, որն այս օրերին ջախջախվում է Արցախում, հետևյալն է՝ իբր Լեռնային Ղարաբաղի խնդիրն արդեն լուծված է, և հակամարտություն այլևս գոյություն չունի: Սա Ալիևի հաճախակի արվող հայտարարություններից է: Վերջինս պատեհ և անպատեհ առիթներով մշտապես ասում է, իբր 2020-ի պատերազմի ընթացքում իրենք լուծել են «Ղարաբաղի հարցը» և նման հարց այլևս գոյություն չունի: Նման հայտարարություններով Ալիևը փորձում է քաղաքական ուղիներով վերահսկողություն հաստատել ողջ Արցախի նկատմամբ և ի վերջո իսկապես լուծել այդ խնդիրը հօգուտ Ադրբեջանի:

Մինչդեռ միջազգային հանրությունն այս երկու ամիսների ընթացքում տեսավ, որ Արցախի հարցը ոչ միայն շարունակում է գոյություն ունենալ, այլև լարվելու և տարածաշրջանում ապակայունության նոր մթնոլորտ ստեղծելու ներուժ ունի: Հետևաբար նաև անտեղին են այն բոլոր հայտարարությունները, թե որևէ միջնորդության կամ, առավել ևս, խաղաղապահ առաքելության խնդիր չկա: Ճիշտ հակառակը՝ հենց հիմա է անհրաժեշտ վերսկսել քաղաքական պրոցեսը և կրկին փորձել օրակարգ բերել Արցախի կենսական շահերից բխող խնդիրները:

Երրորդ կարևոր խնդիրը, որն այս պահին դրական ընթացք է ստացել, սերտորեն փոխկապակցված է նախորդ երկու կետերի հետ: Խոսքը վերաբերում է միջազգային ասպարեզում Արցախի սուբյեկտայնության վերականգնմանը: Ադրբեջանի հետ հակամարտության այս ընթացքը թույլ է տալիս Արցախի

իշխանություններին հաղորդակցության ուղիղ միջոցներ ստեղծել արտաքին աշխարհի հետ և ամենամեծ լսարաններ ունեցող լրատվամիջոցների եթերներից խոսել առկա խնդիրների մասին: Միևնույն ժամանակ արևմտյան բազում երկրների քաղաքական գործիչներ և նույնիսկ խոշոր կառույցներ սկսել են պաշտպանել Արցախի շահերը, դատապարտել Ադրբեջանի ագրեսիվ և հակամարդկային քաղաքականությունն ու լուծումներ փնտրել Արցախի համար:

Այս երեք կարևոր հարցերը, որոնք ակտիվորեն շրջանառվում են Արցախի շրջափակման հետևանքով, ունեն իրենցից բխող բազում ենթահարցեր, որոնք նույնպես շատ կարևոր են հայկական երկրորդ պետության համար: Դրանցից է, օրինակ, Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորախմբի առաքելության ժամկետների երկարաձգումը 2025-ից հետո: Սա նույնպես այն մարտահրավերներից է, որը շատ օրհասական է Արցախի համար: Ցավոք, 44-օրյա պատերազմից հետո ԼՂՀ-ն կորցրել է իր անվտանգությունն ինքնուրույն և լիարժեք ապահովելու կարողությունը: Այս հարցում չափազանց մեծ է ռուս խաղաղապահների դերը, որոնց ադրբեջանական կողմն ամեն գնով ցանկանում է հեռացնել Արցախից 2025 թ.:

Արցախում խաղաղապահների առաքելությունը շարունակելու համար անհրաժեշտ են հիմնավորումներ: Այսինքն՝ պետք է լինի այնպիսի իրավիճակ, որի առկայության դեպքում խաղաղապահների դուրսբերումն Արցախից պարզապես անհնարին կլինի: Ըստ ամենայնի՝ կլինի պատերազմի վերսկսման և մեծ արյունահեղության իրական վտանգ: Արցախի շրջափակումը վկայում է այն մասին, որ խաղաղապահների հեռանալուց հետո Ադրբեջանը կընտրի հենց այդ ուղին: Եվ սա կարևոր հիմք է՝ պնդելու, որ ռուս խաղաղապահները չեն կարող դուրս բերվել Արցախից:

Այս հարցը ևս մեկ նրբություն ունի, որին պետք է զգույշ վերաբերվել: Խոսքը վերաբերում է Արցախում կոնֆլիկտայնության աստիճանի պահպանման անհրաժեշտությանը: Այո՛, ստեղծված իրավիճակում այդ կոնֆլիկտայնությունն անհրաժեշտ է հենց հայկական կողմին: Միայն կոնֆլիկտայնության համապատասխան մակարդակի պահպանման դեպքում հնարավոր կլինի լուծել վերոնշյալ բոլոր խնդիրներն անգամ այն բանից հետո, երբ հանկարծ ադրբեջանցիները առանց որևէ պայմանների, բացեն Արցախի ճանապարհը:

Վերոհիշյալ բոլոր դրույթները նաև վկայում են այն մասին, որ Արցախի խնդրում հայ ժողովուրդը պայքարի ու դժվարությունների երկար ճանապարհ ունի անցնելու: Այս հարցում մենք պետք է առավելագույն չափով անկեղծ լինենք ժողովրդի հետ և նախապատրաստենք նրան այդ դժվարություններին: Գիտեմ, որ սրա մեջ լավատեսություն քիչ կա, բայց այլընտրանքը ազգային ողբերգությունն է: Ուստի պետք է պատրաստվել երկարատև պայքարի: Այդ ռեսուրսը մեր ժողովուրդն ու պետություններն ունեն: Սա մի գործ է, որը հիրավի պետք է արվի: Անհրաժեշտ է դիմանալ և հաղթել:

Հղումներ

1. https://www.24news.am/news/267602, (մուտք՝18.01.2023):

2. https://www.interfax.ru/world/881245, (մուտք՝18.01.2023):

3. https://www.pastinfo.am/hy/news/2023/01/18/4wg8nldgt/1520321, (մուտք՝18.01.2023):

Քաշաթաղի միջանցքի արգելափակման ադրբեջանական բազմաշերտ գործողության «Զանգեզուրյան միջանցքի» բաղադրիչը

Կարինե Մկրտչյան
Իրանագետ

Դեկտեմբերի 12-ից ադրբեջանցի մի խումբ «բնապահպաններ» Բաքվի վարչակարգի բացահայտ ցուցումներով փակել են Հայաստանն ու Արցախը միմյանց կապող և Քաշաթաղի միջանցքով անցնող, Ստեփանակերտ-Գորիս մայրուղին: Քաշաթաղի միջանցքի արգելափակումը, ըստ էության, բազմաշերտ հակահայ ծրագիր է, որը բխում է ալիևյան արհեստածին «Զանգեզուրի միջանցք» ծրագրի իրականացման նպատակից:

Մինչև միջանցքի փակումը Ադրբեջանում պաշտոնական և փորձագիտական մակարդակով հետևողականորեն համեմատություններ են անցկացվել՝ Իլհամ Ալիևի ներմուծած «Զանգեզուրի միջանցք» արհեստածին անվանումով Ադրբեջանի և Նախիջևանի միջև Հայաստանի տարածքով հնարավոր ճանապարհի և Քաշաթաղի միջանցքի միջև քաղաքական և քարոզչական ֆոն ստեղծելու նպատակով:

Ի. Ալիևի կողմից «Զանգեզուրի միջանցք»* արտահայտությունը, որպես այդպիսին, քաղաքական բառապաշար ներմուծելը[1] նախադրյալ է ստեղծում հետագայում Քաշաթաղի միջանցքի հետ համեմատելու համար: Ուստի կարելի է պնդել, որ 44-օրյա պատերազմի ավարտից հետո Ադրբեջանի իշխանությունների կողմից որպես «Զանգեզուրի միջանցք» ռազմավարական ծրագիրն ամեն գնով իրագործելու գործիքակազմի կարևոր բաղադրիչ՝ դիտարկվել է նաև Քաշաթաղի միջանցքի իրավական կարգավիճակի շահարկման և կենսական կապուղին արգելափակելու միջոցով հայկական կողմերի վրա ճնշում գործադրելու մեխանիզմը:

Նախքան միջանցքի փակումը այդ թեմայի շրջանակներում տեղ գտած ուղերձներն ու հայտարարությունները նպատակ են ունեցել ձևավորելու համապատասխան մթնոլորտ և իրադրություն՝ նպաստելու նաև «բնապահպանական պահանջների» քողի ներքո Քաշաթաղի միջանցքը արգելափակելուն:

Ներկայացնենք միջանցքի փակումից առաջ և հետո ադրբեջանական մեդիա տիրույթում տեղ գտած համապատասխան ուղերձների ու հայտարարությունների որոշ օրինակներ:

Անդրադարձները Քաշաթաղի միջանցքի փակումից առաջ

«Ատլաս» քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Էլիան Շահինօղլուն 2021 թ. նոյեմբերին հայտարարել է. «Եթե Զանգեզուրի միջանցքի բացման վերաբերյալ համաձայնություն ձեռք

չբերվի, մենք պետք է համարժեք քայլեր ձեռնարկենք և փակենք Լաչինի միջանցքը»[2]: Որպես շարունակություն՝ դեկտեմբերին նշել է. «Եթե չվերահսկենք Լաչինի միջանցքը, դեռ երկար ժամանակ գլխացավանք կունենանք: Լաչինի միջանցքի վերահսկումը պետք է տեղի ունենա մինչև կոմունիկացիաների բացումը»[3]: Այստեղ, թերևս, առանցքայինն այն է, որ փորձագիտական մակարդակով ներկայացվում է Ադրբեջանի հետևյալ մտադրությունը՝ հնարավորինս արագ վերահսկողություն սահմանել Քաշաթաղի միջանցքում՝ վերացնելու բոլոր այն խոչընդոտները, որոնք կարող են սպառնալիք լինել Սյունիքով ճանապարհի բացման և շահագործման համար:

2021 թ. դեկտեմբերին Ադրբեջանի տրանսպորտային հարցերով փորձագետ Յասին Մուստաֆաևը հայտարարել է. «Լաչինի միջանցքի միջոցով Հայաստանի վրա ճնշումներն ուժեղացնելով՝ կկարողանանք Զանգեզուրի միջանցքի հարցում հասնել պաշտոնական Երևանի ավելի կառուցողական դիրքորոշմանը: Եթե Հայաստանը շարունակի Զանգեզուրի միջանցքի մաքսային հսկողության հարցում համառել, ապա Ադրբեջանը պետք է Լաչինի միջանցքը փակի, այնտեղ դիրքավորվի կամ նման այլ մեխանիզմներ կիրառի»[4]: Միջազգային հարաբերությունների վերլուծության կենտրոնի ղեկավար Ֆարիդ Շաֆիևը 2021 թ. տարվա արդյունքների վերաբերյալ մամուլի ասուլիսում հայտարարել է. «Զանգեզուրի և Լաչինի միջանցքների վերահսկման կանոնները պետք է նույնը լինեն: Ներկայում Ադրբեջանի համար Լաչինի միջանցքի վերահսկողությունն ավելի քան կարևոր է»[5]:

Փորձագիտական տիրույթում առաջադրվում է բոլոր միջոցներով Քաշաթաղի միջանցքը վերահսկելու անհրաժեշտությունը, որպեսզի թույլ չտրվի Ադրբեջանի պահանջած Սյունիքով ճանապարհի՝ հայկական կողմի հնարավոր վերահսկողությունը:

2021 թ. դեկտեմբերի 14-ին Բրյուսելում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յ. Սթոլթենբերգի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի համատեղ մամուլի ասուլիսում Ալիևն ընդգծել է. «Զանգեզուրի և Լաչինի միջանցքները պետք է նույն իրավական ռեժիմ ունենան: Այսօր Լաչինի միջանցքում մաքսային անցակետ չկա, ուստի այն չպետք է լինի նաև Զանգեզուրի միջանցքում: Եթե Հայաստանը պնդի իր դիրքորոշումը ապրանքների և մարդկանց վերահսկողության համար իր մաքսային կառույցներն օգտագործելու հարցում, ապա մենք էլ մաքսային անցակետ կբացենք Լաչինի միջանցքում»[6]: Վերոնշյալում Քաշաթաղի միջանցքի և Սյունիքով ճանապարհի վերահսկման պայմանները, դրանց միջև համեմատականները, այդ թեմայով փորձագիտական խոսույթում տարածված կոչերն ու սպառնալիքները պաշտոնական մակարդակով են ձևակերպում ստանում. բացեիբաց ասվում է, որ Ադրբեջանը չի ցանկանում հայկական կողմի որևէ վերահսկողություն իր պահանջած արհեստածին միջանցքում, իսկ այդ հարցը վերացնելու համար Քաշաթաղի միջանցքում ադրբեջանական կողմի անցակետ չունենալու հանգամանքը շահարկելը ընտրվել է որպես մանևրելու ձեռնտու տարբերակ:

2022 թ. ապրիլին Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը հայտարարել է. «Զանգեզուրի միջանցքի հարցը ձգձգած Հայաստանը ստիպված կլինի շտապել ցատկելու կառամատույցից հեռացող տրանսպորտային միջանցքում գտնվող գնացքի մեջ: Հակառակ դեպքում այդպես էլ կմնա մեկուսացման մեջ և լրջորեն կվատթարանա նրա վիճակը՝ կապված Լաչինի միջանցքի հետ»[7]: Ի. Ալիևի բրյուսելյան հայտարարությունից հետո ակտիվացան մեր լուսաբանման թեմայի վերաբերյալ պաշտոնական բնույթի կոչերը և ուղերձները:

Արհեստածին միջանցքի ծրագրի իրականացման շուրջ թուրք-ադրբեջանական ջանքերի մեկտեղման պաշտոնական մակարդակով դրսևորումը 2022 թ. հոկտեմբերին Ստամբուլում թյուրքական պետությունների կազմակերպության արտգործնախարարների խորհրդի նիստի արդյունքների վերաբերյալ մամուլի ասուլիսի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուի հայտարարությունն է. «Ադրբեջանն արդարացիորեն պահանջում է, որ Լաչինի և Զանգեզուրի միջանցքները ունենան միևնույն կարգավիճակը»[8]:

Ի շարունակություն վերոնշյալ ուղեգծի՝ 2022 թ. Ի. Ալիևը հանդես է եկել հետևյալ հայտարարություններով.

1. «Հայաստանի կողմից եռակողմ հայտարարության դրույթների խախտումը տարածաշրջանում ստեղծում է անհավասարակշռություն. արդեն մեկուկես տարի է, ինչ հայերը օգտվում են Լաչինի ճանապարհից և ունեն անարգել հաղորդակցություն, իսկ ադրբեջանցիները չեն կարողանում օգտվել Զանգեզուրի միջանցքից»[9]:

2. «Նոյեմբերի 10-ի հռչակագրով մենք պարտավորություն ենք ստանձնել, որ Լաչինի ճանապարհը գործելու է, և Ադրբեջանը երաշխավորում է դրա անվտանգությունը: Սակայն միևնույն ժամանակ, հնարավորություն չունենք Ադրբեջանից մեկնել Նախիջևան: Անցել է մեկ տարի ութ ամիս»[10]:

3. «Զանգեզուրի միջանցք բացելը Հայաստանի պարտավորությունն է: Երկու տարի շարունակ մենք ձեռք չենք տալիս Լաչինի ճանապարհով Հայաստանից Ղարաբաղ և հակառակ ուղղությամբ երթևեկող մեքենաներին»[11]:

Նմանատիպ հայտարարություններով Ադրբեջանը պաշտոնական մակարդակով ձևավորեց մտացածին «անհավասարակշռության հարթակ»՝ Քաշաթաղի միջանցքի և, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» միջև հավասարակշռություն ստեղծելու քարոզչական գիծն առաջ տանելու նպատակով:

2022 թ. նոյեմբերին Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայության ղեկավար Այհան Հաջիզադեն, մեկնաբանելով Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները, ընդգծել է. «Եռակողմ հայտարարությամբ Հայաստանը պարտավորություն է ստանձնել ստեղծել անարգել հաղորդակցություն Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև: Այդ ճանապարհը միայն մարդկանց, բեռներ տեղափոխելու և տրանսպորտի համար է օգտագործվելու, այլ ոչ թե ռազմական նպատակներով, ինչպես Լաչինի միջանցքը: Բացի հաղորդակցության ապահովման տնտեսական և հաղորդակցական նշանակությունից՝ անվիճելի է նրա մարդասիրական նշանակությունը»[12]: Ադրբեջանն այս հայտարարությամբ նախադրյալներ է ստեղծում Քաշաթաղի միջանցքի իրավական կարգավիճակը թիրախավորելու համար՝ որակելով վերջինիս՝ որպես ռազմական նպատակներով օգտագործվող միջանցք, իսկ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը»՝ որպես մարդասիրական նշանակության միջանցք:

Անդրադարձները Քաշաթաղի միջանցքի փակումից հետո

Միջանցքի փակումից հետո՝ 2022 թ. դեկտեմբերին և 2023 թ. հունվարին, ինչեցին նոր ուղերձներ և հայտարարություններ՝ ուղղված մինչ այդ սկսված ադրբեջանական սպառնալից հռետորաբանության աստիճանական կենսագործմանը:

Բերձորի միջանցքի փակումից հետո վերջինիս և Սյունիքով ճանապարհի միջև համեմատության հարցում որոշակի փոխակերպում է նկատվում, ինչն ակնհայտ է հետևյալ մեկնաբանություններում, ինչպես,

օրինակ՝ Konkret.az կայքէջի վերլուծությամբ՝ «Լաչինի միջանցքը հայերի համար թե՛ փակ լինի, թե՛ բաց մնա, Զանգեզուրի միջանցքը կյանքի կկոչվի: Միջանցքների նույնականացումը ճիշտ չէ: Լաչինի միջանցքի փակումը խաղաղապահների կամայականությունների դադարեցման և Խանքենդիում հնարովի ռեժիմի գոյությանը վերջ դնելու նախազգուշական բնույթ է կրում»[13]: Իսկ ռազմական վերլուծաբան Ազադ Իսազադեն ընդգծել է. «Զանգեզուրի միջանցքի հարցը, եթե պաշտոնապես գնահատենք, քաղաքական գործընթաց է, իսկ այն, ինչ տեղի է ունենում Լաչինի միջանցքում, քաղաքացիական հասարակության արդարացված ակցիա է: Եթե էկոակցիան չլիներ, մենք կդադարեցնե՞ինք Զանգեզուրի միջանցքի հարցի քննարկումը: Էկոակցիան պետք է ուշադրություն հրավիրի Զանգեզուրի միջանցքի հարցի վրա: Այն վաղ, թե ուշ կբացվի, և հայկական կողմը ձգձգելու հիմքեր չունի»[14]: Վերոնշյալ Konkret.az կայքէջի վերլուծության համաձայն՝ «Զանգեզուր-Լաչին համեմատությունն իսկապես տեղին չէ: Զանգեզուրի միջանցքը անցնում է Ադրբեջան-Հայաստան-Ադրբեջան երթուղով, իսկ Լաչինի ճանապարհը Հայաստան-Ադրբեջան ուղղությամբ է: Հստակ բացատրությունն այն է, որ Նախիջևանը և Ղարաբաղի տնտեսական շրջանը Ադրբեջանի բաղկացուցիչ մասերն են»[15]: Milli.az կայքէջի վերլուծությամբ՝ «Զանգեզուրի միջանցքը արտատարածքային նախագիծ է: Անթույլատրելի է նման կարևոր նախագիծը համեմատել Հայաստանի Գորիսի շրջանի կենտրոնը Ադրբեջանի Խանքենդի քաղաքին կապող ճանապարհի հետ: 2025 թ. Գորիս-Լաչին ճանապարհահատվածն ամբողջությամբ կվերահսկվի պաշտոնական Բաքվի կողմից: Այդ դեպքում նշյալ ճանապարհը «միջանցք» անվանելն առնվազն անհեթեթություն է»[16]: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական կողմը Սյունիքով ճանապարհ ստանալու հարցում սպառնալիքների նոր փուլ է մտել, որտեղ քարոզչական մակարդակում պահպանվել և առավել ակտիվացել է «միջանցքային տրամաբանության» մեջ Բաքվի կողմից համեմատականներ անցկացնելու և հավասարակշռություն ստեղծելու գործելակերպը: Մյուս կողմից՝ Քաշաթաղի միջանցքի նշանակությունը ստորադասվում է Ադրբեջանի պահանջած միջանցքի կարևորությանը:

Քաշաթաղի միջանցքի փակումից հետո Սյունիքով ճանապարհ ստանալու, ինչպես նաև միջազգային լսարանի ուշադրությունը գրավելու նպատակով ադրբեջանական կողմը փորձում է համեմատության լույսի ներքո ներկայացնել Արցախում և Նախիջևանում տիրող իրավիճակները, բնակչության կենսապայմանները: Ըստ այդմ՝ «Սպուտնիկ Ադրբեջանի» հաղորդմամբ՝ «Խանքենդիի բնակիչներին Հայաստանի հետ անխոչընդոտ կապուղի է տրամադրվել՝ ի տարբերություն ադրբեջանական էքսկլավի: Հետևաբար հումանիտար իրավիճակը Նախիջևանում շատ ավելի բարդ է, քան Խանքենդիում: Պարզապես դրա մասին միջազգային ասպարեզում նախընտրում են լռել: Եվ սա այն դեպքում, երբ ի տարբերություն Ղարաբաղի, որի բնակիչներին Հայաստանի հետ կապում է միայն բնակչության որոշակի մասի էթնիկ մերձավորությունը,

Նախիջևանը Ադրբեջանի անբաժանելի մասն է»[17]: Բացի այդ՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆան ընդգծել է. «Նախիջևանում պետք է հանրահավաք անցկացնել՝ ճանապարհը բացելու պահանջով: Եվ պետք է աշխարհին տեղեկացնել, որ Նախիջևանը շրջափակման մեջ է: Մենք չպետք է պարտվենք հայերի հետ քարոզչության մեջ»[18]: Իսկ փաստաբան Ասաբալի Մուստաֆանն ասել է. «Հայաստանը Լաչինի միջանցքի հարցով մշտապես դիմում է միջազգային դատարաններ, ինչու՞ մենք էլ Զանգեզուրի միջանցքի հարցով չդիմենք: Նախիջևանի բնակչությունը տասնամյակներով է ապրում Ղարաբաղի հայերի մի քանի օրվա չափազանցրած դժվարություններով»[19]: Ադրբեջանական կողմը վերոգրյալ տեսակետներով ձգտելով բարձրաձայնել Նախիջևանի, այսպես կոչված, «շրջափակման մեջ գտնվելը»՝ անուղղակիորեն խոստովանում է Արցախի շրջափակված լինելու փաստը:

Քաղաքագետ Գաբիլ Հուսեյնլին նշել է. «Ժամանակին, երբ Փաշինյանն առանց կռվի հանձնեց Քելբաջարը, Լաչինը, Աղդամը, ասացին, որ դա հայկական 30 հազարանոց զորքը դուրս բերելու համար է արվում: Հիմա նրանք կբացեն Զանգեզուրի միջանցքը և կասեն, որ դա անհրաժեշտ է Լաչինի միջանցքի բացման համար: Վերջին շրջանում ի հայտ եկած անալոգիայի համաձայն՝ եթե չլինի Զանգեզուրի միջանցք, երկաթուղային և մայրուղային ճանապարհ, ապա չի գործի նաև Լաչինի ճանապարհը»[20]:

Բացի այդ՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Արզու Նագիևը հայտարարել է. «Հայաստանը կրկին փորձում է շահարկել իրադարձությունները. նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ անկախ նրանից, դուր է գալիս, թե ոչ, Հայաստանը կբացի Զանգեզուրի միջանցքը: Ադրբեջանի համար «Լաչինի միջանցք» հասկացություն գոյություն չունի: Սա Ադրբեջանի տարածքն է: Նախկինում գոյություն ունեցող միջանցքի փոխարեն այլընտրանքային ճանապարհ է կառուցվել, և հայերն այն օգտագործում են: Վերջին 25 օրերին ադրբեջանցի էկո-ակտիվիստներն ակցիաներ են անցկացնում այդ ճանապարհին, ինչը խոչընդոտել է այդ ճանապարհով խաղաղապահների կողմից վերահսկվող տարածք զենք տեղափոխելուն, ինչպես նաև անօրինական գործունեության իրականացմանը: Լաչինի ճանապարհին էկոակտիվիստների ակցիան լուրջ հարված հասցրեց անջատողականներին և Հայաստանի կառավարությանը»[21]: Ի շարունակություն՝ Հարավային Կովկասի հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ֆարհադ Մամեդովը դեկտեմբերին հայտարարել է. «Երկու տարվա ընթացքում Լաչինի ճանապարհը ազատ գործել է: Բայց Ադրբեջանը մատնանշեց, որ այն նպատակային չեն օգտագործում. 2021 թ. ականներ և այլ սպառազինություն են տեղափոխել այդ տարածքներով: Ուստի նման խնդիրները բացառելու համար պետք է փակել ապօրինի օգտագործվող հանքը և Լաչինի ճանապարհի վերահսկողությունը հանձնել Ադրբեջանին»[22]: Այս ուղերձները Քաշաթաղի միջանցքը վերահսկելու, վերջինիս իրավական կարգավիճակը հարցականի տակ դնելու, ինչպես նաև Արցախը հայաթափելու քաղաքականության շարունակությունն են:

Այնուհետև հունվար ամսին վերոնշյալ Ֆարհադ Մամեդովը հայտարարել է. «Ռուսաստանը դեռ կարող է լուծել Զանգեզուրի միջանցքի հարցը, սակայն չի կարող փոխել իրականությունը Լաչինի ճանապարհին. պետք է հաշվի առնել, որ բնապահպանները Լաչինի ճանապարհին են: Եթե Մոսկվային չհաջողվի ստիպել Հայաստանին գնալու ապաշրջափակման, ապա Մոսկվան ստիպված կլինի կիսել վերահսկողությունը Լաչինի ճանապարհին: Լաչինի ճանապարհի էկոակցիան նաև հասցեատեր ունի՝ ի դեմս Ռուսաստանի, որի «Վարդանյան նախագիծը» չի հաջողվելու: Լուծումների բացակայության դեպքում Ադրբեջանն ինքնուրույն կվերահսկի Լաչինի միջանցքի ելումուտը»[23]: Իսկ Ադրբեջանի նախկին արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարել է. «Իրավիճակի զարգացման տրամաբանությունը հուշում է, որ էկոլոգիական առաքելության առկայությանը զուգահեռ պետք է մաքսակետեր տեղադրել ադրբեջանա-հայկական սահմանին: Լաչինի ճանապարհը գործում է, և նրանով իրականացվում է տրանսպորտային միջոցների երթևեկությունը: Ադրբեջանը ոչ մի կերպ չի խախտում վեցերորդ կետը: Ռուսական խաղաղապահ զորքերն ապահովում են երթևեկության անվտանգությունը, բայց ճանապարհը Ադրբեջանն է վերահսկում: Այնպես որ, ռուս խաղաղապահները պետք է պատասխանատվություն կրեն անվտանգության համար այնպես, ինչպես պետք է անեն Զանգեզուրի միջանցքում»[24]: Այս նույն համատեքստում «Ադրբեջանի ազգային անկախություն» կուսակցության առաջնորդ Արզուխան Ալիզադեն հայտարարել է. «Զանգեզուրի միջանցքը պետք է բացվի: Եթե այն չբացվի, ապա Լաչինի ներկայիս ճանապարհը (միջանցքը) պետք է փակ լինի: Կարծում եմ՝ պաշտոնական Բաքուն կարող է քայլեր ձեռնարկել պահվող մարդասիրական միջանցքը փակելու ուղղությամբ: Եթե անգամ Զանգեզուրի միջանցքը չբացվի բանակցությունների միջոցով, մենք դրան կհասնենք այլ միջոցներով»[25]: Եթե այս բոլոր ուղերձներից, հայտարարություններից զատ, ուշադրություն դարձնենք նաև, այսպես կոչված, «բնապահպանների» հնչեցրած կարգախոսներին, ապա կնկատենք, որ դրանցից ոչ մեկը Քաշաթաղի միջանցքը բացելու համար պայմաններ չի առաջադրում, առհասարակ, ակնարկ չկա այն բացելու վերաբերյալ, այսինքն՝ Բաքուն չի թաքցնում, որ մտադիր չէ բացել Քաշաթաղի միջանցքը և հրաժարվել այնտեղ վերահսկողություն հաստատելուց:

Հերթական համեմատությունը հունվարի 27-ին ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության անդամ Քյամալ Զաֆարովի հայտարարությունն է. «Լաչինի ճանապարհը բաց է, վերջին երկու ամսում այնտեղով անցել է ավելի քան հազար ավտոմեքենա...: Հայաստանը չի կատարում Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ իր պարտավորությունները և տված խոստումները»[26]:

Ամփոփելով ադրբեջանական պաշտոնական ու փորձագիտական շրջանակների հայտարարությունները և կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ Քաշաթաղի միջանցքի փակումը տեղակայվում է ադրբեջանական մեդիա հարթակներում տարածված «Եթե չկա Զանգեզուրի միջանցք, չի լինի նաև Լաչինը» կարգախոսի ներքո: Այս մտքից բխում են հետևյալները:

Նախքան Քաշաթաղի միջանցքի փակումը հնչել են վերջինս փակելու սպառնալից հայտարարություններ և ուղերձներ: Փորձ է արվել Քաշաթաղի միջանցքի և Սյունիքով ճանապարհի միջև հավասարության նշան դնելով՝ նպաստել վերջինիս բացմանը:

Ադրբեջանը, Քաշաթաղի միջանցքը արգելափակելով, ձգտում է Հայաստանին ներքաշել Սյունիքի ճանապարհի հարցով բանակցային գործընթացի մեջ, ճանապարհ հարթել՝ քանիցս հիշատակած նույն կարգավիճակով և իրավական կանոններով վերահսկվող արհեստածին միջանցքի գաղափարն իրագործելու համար:

Ադրբեջանի կողմից Քաշաթաղի միջանցքի և Սյունիքով ճանապարհի հարցերը միևնույն հարթության վրա դնելու քաղաքականության մեջ չպետք է բացառել նաև մարդկանց զգացական բաղադրիչը, այսինքն՝ Հայաստանի և Արցախի համար Քաշաթաղի միջանցքի կենսական նշանակությունը համեմատել արհեստածին միջանցքի բացման կենսական նշանակության հետ:

Էկոակցիա իրականացնելու միջոցով առավել կարևորել Սյունիքով ճանապարհի հարցի քննարկումը՝ այն հասցնելով միջազգային լսարանին, Հայաստան-Արցախ և Ադրբեջան-Նախիջևան հավասարեցման խորապատկերին, տնտեսական, ռազմավարական շահերից զատ, առաջ մղել «Ադրբեջանը տրամադրում է մարդասիրական միջանցք, իսկ Հայաստանը՝ ոչ» ձևակերպումը՝ իր բաղադրիչներով:

Կարելի է նաև ընդգծել, որ Քաշաթաղի միջանցքի փակումից հետո առաջադրվեց այն Սյունիքով ճանապարհին ստորադասելու հռետորաբանությունը: Այդ համատեքստում Սյունիքում միջանցքային կարգավիճակով ճանապարհի բացման հարցն էլ ավելի է սրվում՝ ներառելով ավելի կոշտ ուղեգծեր:

Հարկ է նշել, որ Քաշաթաղի միջանցքի փակումից հետո Ի. Ալիևի ելույթներում այս թեմայի ակտիվացում է նկատվում, սակայն, ի տարբերություն միջանցքի փակումից առաջ ընկած ժամանակահատվածի, այժմ ուղիղ զուգահեռներ չեն տարվում Քաշաթաղի միջանցքի և Սյունիքով ճանապարհի միջև:

Հղումներ

Բոլորի համար վերջին մուտք՝ 28.01.2023

1. http://interfax.az/view/884352:
2. https://report.az/ru/karabakh/politolog-esli-ne-budet-otkryt-zangezurskij-koridor-my-dolzhny-zakryt-lachynskij/:
3. https://report.az/ru/karabakh/politolog-lachinskij-koridor-dostavit-eshe-mnogo-golovnyh-bolej-esli-ne-budet-vzyat-pod-kontrol/:
4. https://report.az/ru/infrastruktura/ekspert-azerbajdzhan-dolzhen-usilit-davlenie-na-armeniyu-cherez-lachinskij-koridor/:
5. https://report.az/xarici-siyaset/ferid-sefiyev-zengezur-ve-lacin-dehlizlerinde-tetbiq-olunacaq-qaydalar-eyni-olmalidir/:
6. https://report.az/xarici-siyaset/azerbaycan-prezidentile-nato-nun-bas-katibinin-birge-metbuat-konfransi-olub/:
7. https://report.az/ru/karabakh/musabekov-armeniya-dolzhna-potoropitsya-chtoby-uspet-zaprygnut-v-othodyashij-poezd/:
8. https://report.az/xarici-siyaset/cavusoglu-cenubi-qafqazdaki-sulh-muzakireleri-suretlenerek-davam-etmelidir/:
9. https://report.az/ru/vneshnyaya-politika/nachalsya-ix-global-nyj-bakinskij-forum/:
10. https://report.az/daxili-siyaset/prezidenti-ilham-eliyevin-sedrliyi-ile-bu-ilin-alti-ayinin-yekunlarina-hesr-olunan-musavire-kecirilib/:
11. https://report.az/ru/vnutrennyaya-politika/azerbajdzhanskij-lider-zangezurskij-koridor-obyazatelstvo-armenii/:
12. https://report.az/xarici-siyaset/xin-pasinyanin-zengezur-dehlizi-ile-bagli-esassiz-iddialarina-cavab-verib/:
13. https://konkret.az/lacin-yolunun-baglanmasi-zengezur-dehlizinin-acilmasidir-serh/:
14. https://teleqraf.com/news/qarabagh/352444.html:
15. https://konkret.az/kremlin-zengezur-lacin-niyyeti-turkiye-faktorunu-da-unutmaq-olmaz-serh/:
16. https://news.milli.az/politics/1098345.html:
17. https://az.sputniknews.ru/amp/20221214/pozitsiya-zapada-po-situatsii-na-lachinskoy-doroge---ocherednaya-demonstratsiya-dvoynykh-standartov-449629345.html:
18. https://apa.az/ru/vneshnyaya-politika/deputat-armyanam-nado-dat-adekvatnyi-otvet-v-naxcyvane-neobxodimo-provesti-miting-s-trebovaniem-otkryt-dorogu-505447:
19. https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02sF2jQHocmHbUj9ixHvSRttWPGyDNLEYjTCbNcoA3siAW62K7AFRVoUXxESdHV3Q7l&id=100000047800578&mibextid=Nif5oz:
20. https://publika.az/news/sosial/426357.html:
21. https://sputnik.az/20230105/bir-beyanatin-izi-ile---pasinyan-ne-isteyir-450349370.html:
22. https://www.rbc.ru/politics/27/12/2022/63ab057d9a794751b871740f
23. https://caliber.az/post/135308/:
24. https://report.az/xarici-siyaset/elmar-memmedyarov-ekoloqlarin-aksiyasi-artiq-mueyyen-netice-verib/:
25. https://www.dia.az/8/363848-zengezur-dehlizi-azerbaycan-oz-movqeyinden-geri-chekilmeyecek.html:
26. https://apa.az/ru/vneshnyaya-politika/azerbaidzanskii-deputat-otvetil-v-pase-na-obvineniya-po-povodu-lacinskoi-dorogi-508415:

*Սույն ակնարկում ադրբեջանական արհեստածին խոսույթի շրջանառմանը չնպաստելու նպատակով մեր մեկնաբանություններում «Զանգեզուրի միջանցք» կեղծ ձևակերպման փոխարեն կիրառվել է «Սյունիքով ճանապարհ» ձևակերպումը:

ԱՄՆ-ի արձագանքն Արցախի շրջափակմանը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Երկու ամիս է ինչ Արցախի բնակչությունը գտնվում է շրջափակման մեջ: Հայաստանն Արցախին կապող միակ ճանապարհը արգելափակվել է ադրբեջանցի պսևդոբնապահպանների կողմից՝ բողոքի ակցիա իրականացնելու պատրվակով: Արցախի այդ շրջափակման հետևանքով այնտեղ բնակվող 120 հազար հայեր կտրվել են ողջ աշխարհից: Սույն հոդվածում անդրադարձ կկատարվի Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի շրջափակմանը, սույն խնդրին Միացյալ Նահանգների իշխանությունների և միջազգային կազմակերպությունների անդրադարձին, ինչպես նաև այդ ուղղությամբ ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունների և հայ համայնքի տարած ջանքերին:

Իրավիճակը Արցախի շուրջ

2022 թվականի դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի իշխանությունները, կոպտորեն խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, արգելափակել են Լաչինի միջանցքը՝ Արցախը Հայաստանի և արտաքին աշխարհի հետ կապող միակ միջանցքը: Արդեն գրեթե երկու ամիս տևող շրջափակումը 2020 թվականի 44-օրյա պատերազմի ավարտից ի վեր ամենամեծ հարձակումն է Արցախի ժողովրդի դեմ: Օրեցօր ավելի է սրվում առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղերի, սննդի և վառելիքի պակասը: Նպատակ ունենալով արցախահայերի իրավիճակը վատթարացնել՝ Ադրբեջանը խոչընդոտում է Արցախի գազամատակարարմանը, ինչպես նաև Հայաստանից եկող Գորիս-Ստեփանակերտ միակ բարձրավոլտ գծի՝ իրենց վերահսկողության տակ գտնվող հատվածի վերականգնմանը (հունվարի 9-ին այնտեղ իբր թե վթար էր տեղի ունեցել): Ադրբեջանի կողմից արտակարգ և վերականգնողական աշխատանքներին խոչընդոտումը վկայում է այդ քայլերի միտումնավորության մասին: Իսկ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը չդադարեցնելը անխուսափելիորեն հանգեցնելու է, ըստ էության, արդեն իսկ հանգեցրել է հումանիտար ճգնաժամի[1]:

Միջազգային արձագանք

Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամը թեև գնահատական է ստացել պետությունների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից, այնուամենայնիվ, դա դեռևս բավարար չէ Արցախի ապաշրջափակումը ապահովելու համար: Արցախի շրջափակմանն անդրադարձել են միջազգային և տարածաշրջանային այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը, ԵՄ-ն, ինչպես նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ՝ «Freedom House», «Amnesty International» և «Human Rights Watch»: Հստակ արձագանքներ եղել են տարբեր երկրների կառավարությունների կողմից, այդ թվում՝ Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան, Հնդկաստան, Հունաստան, Կիպրոս և այլն:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի խոսնակը, առանց որևէ հստակ կոչի՝ ուղղված Ադրբեջանին, հորդորել է կողմերին դեէսկալացնել իրավիճակն ու ապահովել Լաչինի միջանցքով ազատ ու անվտանգ տեղաշարժը[2]: Մյուս կողմից՝ դեկտեմբերի 27-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ը անդրադարձել է երեխաների իրավունքների ոտնահարմանը՝ պայմանավորված այս իրավիճակով.«Որքան երկար շարունակվի իրավիճակը, այնքան շատ երեխաներ կզգան տարրական սննդի պակասը… Բացի այդ՝ շատ երեխաներ զրկվել են ծնողական խնամքից, քանի որ բաժանվել են իրենց ծնողներից կամ օրինական խնամակալներից»[3]: Հունվարի 18-ին իրավիճակին անդրադարձավ նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը՝ կոչ անելով անմիջապես ապահովել Լաչինի միջանցքով ազատ և անվտանգ տեղաշարժը[4]: Այսպիսով՝ չնայած ՄԱԿ-ի կողմից արված մի քանի հայտարարություններին, որոնք նաև ընդգծում էին հումանիտար աղետի փաստը Արցախում, այս հայտարարությունները հստակորեն ուղղված չէին Ադրբեջանի կառավարությանը և որևէ լուրջ ազդեցություն չունեցան Արցախի ապաշրջափակման հարցում:

ՄԱԿ-ից բացի արձագանքել է նաև ԵՄ-ն՝ ուղղակիորեն կոչ հղելով Ադրբեջանին. «Ապահովել ազատ և անվտանգ տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ 2020 թ. նոյեմբերի եռակողմ հայտարարության համաձայն»[5]: Այս հայտարարությունը ևս մեկ անգամ հաստատվել է Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձևում, որտեղ դատապարտվել է Ադրբեջանի կողմից Արցախի ապօրինի շրջափակումը[6]:

Ինչ վերաբերում է տարբեր երկրների կողմից Արցախի շրջափակման անդրադաձին, ապա ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Հունաստանի և Կիպրոսի կողմից հայտարարություններ եղել են ԱԳՆ մակարդակով: Արցախի շրջափակման հարցը բարձրաձայնվել է նաև ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակում, որտեղ դատապարտող հայտարարություններ եղել են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Հնդկաստանի, Իռլանդիայի կողմից: Եղել են հայտարարություններ նաև այլ երկրների կողմից[7]:

Արցախի շրջափակմանն անդրադարձած միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների շարքում են «Freedom House», «Amnesty International», «Human Rights Watch» կազմակերպությունները: Առաջինն ուղղակիորեն կոչ է արել Ադրբեջանին դադարեցնել շրջափակումը և վերականգնել գազամատակարարումը՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքների իրացումը[8]: «Amnesty International»-ը հանդես է եկել համանման հայտարարությամբ մեկ ամիս անց[9]: Իսկ «Human Rights Watch»-ը շրջափակումից մի քանի օր անց արդեն իսկ ահազանգում էր հնարավոր սարսափելի հումանիտար հետևանքների մասին շրջափակման շարունակման պարագայում[10]:

Այսպիսով՝ միջազգային և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարբեր կազմակերպությունների կողմից ընդհանուր առմամբ հստակորեն արձանագրվել է շրջափակման փաստը, դրա մարդասիրական աղետի վերաճելու մեծ հավանականությունը և շրջափակման անհապաղ դադարեցման անհրաժեշտությունը: Չնայած այս բոլոր արձագանքներին միջազգային դերակատարների կողմից՝ Ալիևը դեռևս չի դադարեցնում Արցախի շրջափակումը՝ ակնկալելով ստանալ որոշակի զիջումներ:

ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակմանը և հնարավոր հումանիտար աղետին ԱՄՆ իշխանությունները սկսեցին անդրադառնալ շրջափակման երկրորդ օրվանից:

Արձագանքները սկսել են Պետդեպարտամենտից՝ խոսնակի մակարդակով և Կոնգրեսից՝ հայամետ կոնգրեսականների մակարդակով: Շրջափակումից ավելի քան մեկ ամիս անց ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հեռաձայնել է Ադրբեջանի նախագահին՝ վերջինիս հորդորելով անհապաղ բացել Լաչինի միջանցքը[11]: Սպիտակ տան կողմից դեռևս որևէ անդրադարձ կամ հայտարարություն չի եղել՝ չնայած հայ լոբբիստների և հայ համայնքի ջանքերին:

ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Նեդ Փրայսը դեկտեմբերի 13-ին թե՛ իր թվիթերյան էջում[12] և թե՛ մամլո ասուլիսի ժամանակ կոչ արեց Ադրբեջանի կառավարությանը. «Վերականգնել (Լաչինի) միջանցքով ազատ տեղաշարժը[13] :

Այնուհետև դեկտեմբերի 16-ի մամլո ասուլիսի ժամանակ Պետդեպարտամենտի մամուլի խոսնակի գլխավոր տեղակալ Վեդանտ Պատելը, պատասխանելով Արցախի շրջափակման հետ կապված հարցին, հայտարարեց, որ Լաչինի միջանցքի փակումը պոտենցիալ ծանր հումանիտար հետևանքներ ունի և, ակնհայտորեն, հետ է մղում խաղաղության գործընթացը: «Մենք ուրախ ենք, որ Լեռնային Ղարաբաղ բնական գազի մատակարարումը վերականգնվել է: Էներգետիկ ենթակառուցվածքների խափանումները կարող են հումանիտար ճգնաժամ առաջացնել, և մենք կոչ ենք անում հնարավորինս շուտ վերականգնել միջանցքով ազատ տեղաշարժը, և դրան հասնելու ճանապարհը բանակցություններն են»[14]:

Հաջորդող հայտարարություններում ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակը հանդես է եկել համանման հայտարարություններով՝ շեշտելով, որ ԱՄՆ-ն պատրաստ է օժանդակելու Հայաստանին և Ադրբեջանին բանակցային գործընթացը շարունակելու հարցում՝ Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու համար[15]:

Արցախի շրջափակմանը նաև անդրադարձել է ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Սամանթա Փաուերը, ով իր թվիթերյան էջում տարածել էր հայտարարություն առ այն որ.«Ավելի քան մեկ ամիս է, ինչ արգելափակված է Լաչինի միջանցքով տեղաշարժը: Ամեն օր առևտրային երթևեկությունը և մարդասիրական օգնությունը չեն կարողանում անարգել հասնել Լեռնային Ղարաբաղ, որը մեծացնում է հումանիտար ճգնաժամի հավանականությունը: Միջանցքով ազատ տեղաշարժը պետք է վերականգնվի»[16]: Այս հայտարարությունը մեծապես ԱՄՆ-ի հայ լոբբիստների ու հայկական համայնքի համատեղ ջանքերի արդյունք էր: Հայ լոբբիստները, սակայն միայն հայտարարություն չէ, որ ակնկալում էին Սամանթա Փաուերից:

Կոնգրեսի երկու պալատների անդամների արձագանքը Արցախի շրջափակմանը

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակմանը անմիջապես արձագանքել են ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամները, հատկապես՝ Հայկական հանձնախմբի ներկայացուցիչ-

ները: Կոնգրեսմենները հանդես են եկել հայտարարություններով, որոնք դատապարտում են Ադրբեջանի գործողությունները, ինչպես նաև նամակներ են հղել ԱՄՆ վարչակազմի անդամներին:

Շրջափակման մասին անմիջապես հայտարարությամբ հանդես եկան ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնը, Գաս Բիլիրակիսը, Ջեքի Սփիերը, Դեյվիդ Վալադաոն, ինչպես նաև՝ Ադամ Շիֆը: Կոնգրեսականները հայտարարությամբ դատապարտում են Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները՝ նշելով, որ անհանգստացնող է այն, որ ադրբեջանցիներին թույլ են տալիս ազատորեն բողոքել միայն այն դեպքում, երբ դա սպառնում է հայերի կյանքին...»[17]:

Ադամ Շիֆի գլխավորությամբ կոնգրեսականների կողմից նամակ է ուղարկվել ԱՄՆ նախագահ Բայդենին՝ պահանջելով դադարեցնել Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը, դադարեցնել ԱՄՆ աջակցության տրամադրումն Ադրբեջանին և Արցախին տրամադրել մարդասիրական օգնություն[18]:

Առանձին հայտարարություններով հանդես են եկել մի շարք կոնգրեսականներ, այդ թվում՝ Բրեդ Շերմանը, Ջուդի Չուն, Աննա Էշուն՝ անդրադառնալով շրջափակման դադարեցման անհրաժեշտությանը և դրա ծանր հումանիտար հետևանքներին: Կոնգրեսական Ջիմ Կոստան այս հարցը բարձրաձայնել է նաև Կոնգրեսում՝ քննարկումներից մեկի ժամանակ հարց ուղղելով ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդին:

ԱՄՆ սենատորները ևս անարձագանք չեն թողել Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության նկատմամբ իրականացվող ագրեսիան: Սենատորներ Բոբ Մենենդեզը և Ջեք Ռիդը համատեղ նամակ են ուղղել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին՝ նշելով.«Միացյալ Նահանգները չի կարող կողքից նայել, թե ինչպես է Ալիևի ռեժիմը անգթորեն սպառնում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների կյանքին: Փոխարենը պետք է պատասխանատվության ենթարկի Ադրբեջանին՝ խաղաղ բնակչությանը սննդամթերքից և առաջին անհրաժեշտության ապրանքներից զրկելու համար»[19]:

Սենատորներն անհատապես ևս հանդես են եկել Ադրբեջանի գործողությունները դատապարտող հայտարարություններով, նրանց թվում՝ Բոբ Մենենդեզը, որը նաև Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավարն է, սենատորներ Էդ Մարքլին, Ջեք Ռիդը, Գերի Փեթերսը և այլք: Բոլորն իրենց հայտարարություններում դատապարտում են Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակումը և ընդգծում այդ իրավիճակի անընդունելիությունը սենատորների համար:

Այսպիսով՝ Կոնգրեսի մակարդակով Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը դատապարտվել է հիմնականում Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամների և հայ համայնքի, ինչպես նաև լոբբիստների հետ սերտ կապեր ունեցող ներկայացուցիչների և սենատորների կողմից:

ԱՄՆ-ում հայ լոբբիստների ջանքերն ու ակտիվությունը Արցախի ապաշրջափակումն ապահովելու հարցում

ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունները և հայ համայնքը Արցախի և արցախահայության շրջափակման առաջին օրվանից մեծ ջանքեր են գործադրում՝ փորձելով ԱՄՆ պետական կառույցների վրա իրենց ազդեցության միջոցով հասնել Արցախի ապաշրջափակմանն ու Արցախին լրացուցիչ աջակցության տրամադրմանը:

Մասնավորապես ԱՄՆ-ում Հայ դատի հանձնախումբը դեկտեմբերի 12-ից սկսած կոչ է անում հայ համայնքին կապ հաստատել Կոնգրեսում իրենց ներկայացուցիչների հետ՝ Արցախին շտապ աջակցություն ցուցաբերելու և Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու համար: Նրանք նաև պարբերաբար հորդորում են ԱՄՆ փոխնախագահ Քամալա Հարիսին՝ անդրադառնալու Արցախի շրջափակման հարցին և քայլեր ձեռնարկելու ապաշրջափակման ուղղությամբ: Նրանց թիրախում է գտնվում նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) ղեկավար Սամանթա Փաուերը, ումից վերջիններս պահանջում են օգնություն ուղարկել Արցախ՝ հումանիտար աղետը կանխելու նպատակով[20]:

ԱՄՆ-ում Հայ դատի հանձնախումբը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով ցանկանում է հասնել Ստեփանակերտին օդային ճանապարհով օգնության հասցնելուն և Լաչինի միջանցքի հայկական կողմում հումանիտար օգնության նախնական տեղակայմանը՝ շրջափակումից հետո օգնությունը Արցախ անհապաղ հասցնելու համար:

Հայ լոբբիստներն իրենց պահանջը պայմանավորում են այն հանգամանքով, որ նման գործողություն արդեն իսկ իրականացվել է Սարևանդի պաշարման ժամանակ, երբ «Provide Promise» օպերացիայի շրջանակներում 1992 թ. և 1996 թ. Միացյալ Նահանգներն իր գործընկերների հետ հումանիտար օդային փոխադրումներ է իրականացրել պաշարված Սարևանդ: Մարտական պայմաններում ավելի քան 12.886 թռիչքների միջոցով մատակարարվել է 159.000 տոննա սննդամթերք, դեղորայք և այլ պարագաներ: Այժմ ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի պահանջն է ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Սամանթա Փաուերին՝ տրամադրելու նման օդային օգնություն շրջափակված Արցախի ժողովրդին[21]:

ԱՄՆ-ում Հայ դատի հանձնախումբը նաև պարբերաբար հրապարակում է ԱՄՆ պետական մարմինների համապատասխան վարչությունների հանրային աշխատակիցների հեռախոսահամարները, որպեսզի ԱՄՆ-ի հայ համայնքը, զանգահարելով նրանց, տեղյակ պահի Արցախում տիրող իրավիճակի մասին և պահանջի համապատասխան քայլերի իրականացում՝ հումանիտար աղետը կանխելու ուղղությամբ: Ամերիկայի Հայկական համագումարը ևս հորդորում է

հայկական համայնքի ներկայացուցիչներին կապ հաստատել իրենց կոնգրեսականների և վարչակազմի պաշտոնյաների հետ՝ կոչ անելով բարձրաձայնել Ադրբեջանի կողմից իրականացվող ագրեսիայի մասին, պահանջել Հայաստանի և Արցախի միջև անխափան կապ, ինչպես նաև կիրառել 907-րդ բանաձևը[22]: Լոբբիստական այս արշավի մեջ ներառված է նաև Գլենդելի քաղաքապետ, ազգությամբ հայ Արդաշես (Արդի) Քասախյանը, որ նախաձեռնել է նամակ կազմել՝ ուղղված ԱՄՆ նախագահ Բայդենին՝ անհապաղ դադարեցնելու Ադրբեջանին տրամադրվող օգնությունը և տրամադրելու շտապ հումանիտար աջակցություն Արցախին: Նամակը ստորագրել է նաև Փասադենայի քաղաքապետ Վիկտոր Գորդոն[23]:

Բացի այդ՝ ԱՄՆ-ում հայկական համայնքի ներկայացուցիչները նաև կազմակերպել են բողոքի ակցիաներ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում՝ հաջակցություն Արցախի բնակչության[24]: Այս ամենին զուգահեռ հայկական լոբբիստական կազմակերպությունները շարունակում են իրականացնել հանդիպումներ ԱՄՆ-ի ներկայացուցիչների և սենատորների հետ[25]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ Արցախի շրջափակումը լուսաբանում է ստանում տարբեր երկրների և միջազգային, և տարածաշրջանային կառույցների կողմից: Այդուհանդերձ, այդ արձագանքը դեռևս որևէ ազդեցություն չի թողնում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի վրա, որն, ակնհայտորեն, իրավիճակից զիջումներ կորզելու նպատակ ունի: Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներին, ապա հասցեական հայտարարություններ եղել են ԱՄՆ Պետդեպարտամենտից և Կոնգրեսի որոշ ներկայացուցիչների և սենատորների կողմից: Արցախի շրջափակման հարցում ԱՄՆ-ի կողմից իրականացված գործողությունների թվում կարելի է առանձնացնել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հեռախոսազրույցը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ՝ Արցախի անհապաղ ապաշրջափակման պահանջով:

Սրան զուգահեռ ԱՄՆ-ում հայ համայնքն ու լոբբիստները ջանքեր են գործադրում, որպեսզի կոնգրեսականներն ու ԱՄՆ վարչակազմը դատապարտեն Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակումը, հումանիտար օգնություն տրամադրեն Արցախին և այլևս չշրջանցեն 907-րդ բանաձևը՝ կասեցնելով Ադրբեջանին հետագա օգնության տրամադրումը: ■

Հղումներ

1. Հայտարարություն՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետի մեկնաբանման կապակցությամբ, http://www.nkr.am/hy/news/2023-01-24/Statement, (մուտք՝ 24.01.2023):
2. Statement attributable to the Spokesperson for the Secretary-General – on the Lachin corridor [Armenia/Azerbaijan], https://www.un.org/sg/en/content/sg/statement/ մուտք՝ 2022-12-14/statement-attributable-the-spokesperson-for-the-secretary-general-%E2%80%93-the-lachin-corridor-armeniaazerbaijan%C2%A0, (մուտք՝ 18.01.2023):
3. With The Lachin Corridor Blockage, Nagorno-Karabakh Close To A Humanitarian Catastrophe, https://www.forbes.com/sites/ewelinaochab/2022/12/29/with-the-lachin-corridor-blockage-nagorno-karabakh-close-to-a-humanitarian-catastrophe/?sh=53505b9b6c90, (մուտք՝ 18.01.2023):
4. The United Nations HumanRights office High Commissioner statement https://twitter.com/UNHumanRights/status/1615740942618615808?s=20&t=WzGqs5ON6K2DT6Gukii15WA, (18.01.2023).
5. Lead spokesperson for the external affairs of the EU statement, https://twitter.com/ExtSpoxEU/status/1602704438816292866?s=20&t=9BU4NmmO2f2gUl6vg2QGkQ, (մուտք՝ 19.01.2023).
6. European Parliament strongly condemns Azerbaijani blockade of Lachin Corridor, demands immediate restoration of movement, https://www.armenpress.am/eng/news/1102022/, (մուտք՝ 19.01.2023):
7. The International Community is Unequivocally United in calling to End the Blockade of Artsakh, https://sites.google.com/view/opentheroad/home?authuser=0, (մուտք՝ 19.01.2023):
8. Freedom House statement, https://twitter.com/freedomhouse/status/1603146203293777921?s=20&t=sKWbLf6uvzpG29LzxQhNeA, (մուտք՝ 19.01.2023)
9. Amnesty International Statement, https://twitter.com/amnestypress/status/1613202615076020224?s=20&t=61G1AsrAYCKr98BIf9za-Q, (մուտք՝ 19.01.2023):
10. Azerbaijan: Nagorno-Karabakh Lifeline Road Blocked, Ensure Access to Essential Goods and Services, https://www.hrw.org/news/2022/12/21/azerbaijan-nagorno-karabakh-lifeline-road-blocked, (մուտք՝ 20.01.2023):
11. Secretary Blinken's Call with Azerbaijani President Aliyev, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-azerbaijani-president-aliyev-10/, (մուտք՝24.01.2023):
12. Ned Price, twitter statement, https://twitter.com/StateDeptSpox/status/1602752717734105089?s=20&t=ILD7j0A1ncU6_wOBoxv9Bg, (20.01.2023):
13. Department Press Briefing – December 13, 2022 , https://www.state.gov/briefings/department-press-briefing-december-13-2022/, (մուտք՝ 20.01.2023):
14. Vedant Patel, Principal Deputy Spokesperson, Department Press Briefing – December 16, 2022, https://www.state.gov/briefings/department-press-briefing-december-16-2022/, (մուտք՝ 20.01.2023):
15. Ned Price, Department Spokesperson, Department Press Briefing – January 4, 2023, https://www.state.gov/briefings/department-press-briefing-january-4-2023/, (20.01.2023):
16. Samantha Power, twitter statement, https://twitter.com/PowerUSAID/status/1614022058781949953?s=20&t=2PyRUL8v-aCyTI1LGxOtSw, (մուտք՝ 21.01.2023):
17. Armenia Caucus Co-Chairs Issue Statement on Escalation of Azerbaijani Humanitarian Abuses in Artsakh, https://pallone.house.gov/media/press-releases/armenia-caucus-co-chairs-issue-statement-escalation-azerbaijani-humanitarian, (մուտք՝ 21.01.2023):
18. Schiff Asks Biden to Force Azerbaijan to End Blockade, https://mirrorspectator.com/2022/12/22/schiff-asks-biden-to-force-azerbaijan-to-end-blockade/, (մուտք՝ 21.01.2023):
19. Letter text, https://www.foreign.senate.gov/imo/media/doc/01-12-23_rm_reed_letter_to_secretary_blinken_re_blockade_on_nagorno-karabakh.pdf, (մուտք՝ 22.01.2023):
20. Azerbaijan Blockades Artsakh: Contact Your Legislators Now to Send Emergency Aid to Artsakh; Sanction Azerbaijan, https://anca.org/blockade-alert/?fbclid=IwAR1CyUt8KuavIyjQeCRflUYO67elHrmcEIYLcEpNBcvpXYq64iPB-grizrg, (մուտք՝ 22.01.2023):
21. Armenian Caucus Leaders Urge Biden Administration to Consider Emergency Airlift; Azerbaijan Sanctions to End Artsakh Blockade, https://anca.org/press-release/armenian-caucus-leaders-urge-biden-administration-to-consider-emergency-airlift-azerbaijan-sanctions-to-end-artsakh-blockade/, (մուտք՝ 22.01.2023):
22. Armenian Assembly of America Action Center, https://action.aaainc.org/, (մուտք՝ 23.01.2023):
23. Letter text, https://anca.org/assets/pdf/122122_MayorKassakhian_ArtsakhBlockade.pdf?fbclid=IwAR1EsXx1vUWNrsF2s6RV8YVJyPT1_IdXGERS5GMJUfkAo-AG8e-z71UJWDHw, (մուտք՝ 23.01.2023):
24. AYF Washington, DC blocks traffic to Azerbaijani Embassy, demands end to Artsakh blockade, https://armenianweekly.com/2023/01/17/ayf-washington-dc-blocks-traffic-to-azerbaijani-embassy-demands-end-to-artsakh-blockade/, (մուտք՝ 24.01.2023):
25. Armenian Community Meets with Senator Peters & Discusses Humanitarian Crisis in Artsakh, https://www.armenian-assembly.org/post/armenian-community-meets-with-senator-peters-discusses-humanitarian-crisis-in-artsakh, (մուտք՝ 24.01.2023):

Ովքեր են թուրք մեսխեթցիները և ինչպիսի գործոն կարող են դառնալ տարածաշրջանում

Սաբինա Մուրադյան
Թուրքագետ

Թուրքիայի կառավարությունը, Խորհրդային Միության փլուզումից հետո և անգամ խորհրդային ժամանակաշրջանում, միշտ ուշադրության կենտրոնում է պահել մեսխեթցի թուրքերի խնդիրը: Սակայն այդ հետաքրքրությունն առավել աշխուժացավ Խորհրդային Միության անկումից հետո՝ ձեռք բերելով ավելի կոնկրետ և ծրագրային բնույթ: Թուրքիան ձգտում է թուրք մեսխեթցիներին վերադարձնել Վրաստան, ինչի մասին վկայում է 2021 թ. նոյեմբերի 15-ին թուրք-մեսխեթցիների տեղահանման տարելիցի կապակցությամբ թուրքական իշխանամետ «Daily Sabah»[1] թերթում հրապարակված հոդվածը:

Ինչպես նշված է ԱԳՆ հաղորդագրության մեջ. «Թուրքիան նշում է Խորհրդային Միության տարիներին Ահըսկա (մեսխեթ) թուրքերի տեղահանման 77-րդ տարելիցը»: Հայտարարության համաձայն. «1944 թվականի նոյեմբերի 14-ին մոտ 100.000 Ահըսկա թուրքեր աքսորվեցին Վրաստանի Մեսխեթի շրջանի իրենց պապենական հողերից Խորհրդային Միության հեռավոր շրջաններ»: Հայտարարության մեջ նաև ասվում է. «Թուրքիան կշարունակի ուշադիր հետևել Ահըսկա թուրքերի վերադարձին իրենց հայրենիք և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել նրանց հարազատներին»[2]:

Մեսխեթցի թուրքերի վերադարձին հիմնական խոչընդոտ են Վրաստանի իշխանությունները: Վրացական վերնախավի էական մտահոգությունն այն է, որ խիտ բնակեցված թյուրքալեզու մահմեդական փոքրամասնությունը կարող է բարձրացնել Թուրքիային միանալու հարցը: Հաշվի առնելով Աբխազիայի և Հարավային Օսիայի կորուստները՝ կարելի է հասկանալ վրացական կողմի անհանգստությունը: Առավել ևս, որ Աջարիայում աճող թուրքական գործոնը նույնպես նման ռիսկերի համար պարարտ հող է ստեղծում: Իսկ Թուրքիան իր հերթին հայտնի է նրանով, որ օգտագործում է իր էթնիկ տարրերի գործոնը՝ համապատասխան հող նախապատրաստելով ռազմական ներխուժման համար (Սիրիա, Լիբիա, Հյուսիսային Կիպրոս)[3] :

Թուրքիան որևիցե երկիր ներխուժումը հիմնավորելու և արդարացնելու համար միշտ օգտագործում է թյուրքական ծագում ունեցող տարրերի հանգամանքը՝ հանդես գալով որպես իր ցեղակիցների շահերի, իրավունքների և անվտանգության երաշխավոր: Օրինակ՝ Սիրիա ներխուժումը հիմնավորվում էր, այսպես կոչված, «պետական ռեժիմի» կողմից բռնաճնշումների ենթարկվող թուրքոմանների-թուրքմենների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Միայն վերջին տարիներին Սիրիայի տարածք ներխուժման հիմնավորման նարատիվի մեջ փոփոխություններ կատարվեցին: Սիրիայի հյուսիսային հատվածում որպես ռազմական գործողությունների հիմնավորում է ներկայացվում քուրդ ահաբեկիչ զինյալներին չեզոքացնելու անհրաժեշտությունը՝ սեփական երկրի անվտանգությունն ապահովելու համար:

Թուրքիայում պետական ամենաբարձր մակարդակով բազմիցս հայտարարվել է, որ Թուրքիայի անվտանգությունն իր տարածքներից դուրս է սկսվում, և դա վերաբերում է ոչ միայն Սիրիային: Թուրքիայի նախագահի խոսնակ Իբրահիմ Քալընի խոսքերով՝ գլոբալիզացիայի դարաշրջանում «Ազգային ուխտի»[4] անվտանգությունը սկսվում է դրա սահմաններից անդին: Այլ կերպ ասած՝ այս դարաշրջանում Թուրքիայի անվտանգությունը սկսվում է «Ազգային ուխտի» սահմաններից դուրս[5]: Թուրքիան վերադառնում է այն հողերը, որտեղից 100 տարի առաջ օսմանցիները հետ քաշվեցին: Ռազմավարական քայլեր կատարելով թե՛ ռազմական, թե՛ տնտեսական ոլորտներում՝ Թուրքիան իր ռազմական հզորությամբ սկսել է ամուր դիրքեր գրավել աշխարհում՝ 12 երկրներում տեղակայելով ռազմական հենակետեր: Մեծ նշանակություն ունեն հատկապես Մերձավոր Արևելքում, Կովկասում և Բալկաններում գծված կրիտիկական գծերը[6]:

Այսպիսով՝ Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Վրաստանում, մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումը առավել քան արդիական է դառնում Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության տեսանկյունից: Հարավային Կովկասով դեպի Միջին Ասիա էքսպանսիոնիզմը տեղավորվում է պանթուրքիզմի կամ պանթուրանիզմի[7], իսկ Բալկանյան և այլ ուղղությունները՝ նեոօսմանիզմի[8] գաղափարախոսության շրջանակներում:

Թուրքիան իր սահմանների երկայնքով բուֆերային գոտիներ է ստեղծում՝ անվանելով դրանք ան-

Պաստառի վրա գրված է «Օսմանցիների թոռներ՝ մեսխեթցի թուրքեր»

վտանգային գոտիներ, և իր գործողությունները որակում է որպես ահաբեկչության դեմ պայքար, կամ էլ՝ իր ցեղակիցների անվտանգության ապահովման անհրաժեշտություն: Այսպիսով՝ Անկարան իր համար ռազմավարական դաշնակիցներ է ստեղծում իր հետաքրքրության կենտրոնում հայտնվող ցանկացած տարածաշրջանում: Թուրքիայի նախագահ Ռեջեպ Թայիփ Էրդողանի համար Սիրիայում թուրքմենները բնական դաշնակիցներ էին ոչ միայն իրենց էթնիկական ժառանգականության պատճառով, այլ նաև այն պատճառով, որ նրանք ունեին նույն թշնամին՝ Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը: Անկարան Ասադի ռեժիմի դեմ պայքարում ակտիվորեն աջակցել է թուրքմենական զինված խմբավորումներին, որոնք նաև հայտնի էին որպես «Սիրիայի թուրքմենական բրիգադներ»: Նրանց նույնիսկ թույլ էր տրվում մուտք գործել Թուրքիա և տեղակայվել այնտեղի բազաներում: Բացի այդ՝ թուրքմենները, ինչպես նաև Թուրքիայից կողմից աջակցություն ստացող այլ զինյալ խմբավորումները կարևոր էին Էրդողանի կառավարության համար՝ սահմանի երկայնքով անվտանգությունը ապահովելու նպատակով: Նրանց շարունակական վերահսկողությունը Սիրիայի տարածքի, հատկապես՝ սիրիա-թուրքական սահմանի հատվածների վրա, ռազմավարական նշանակություն ունի Թուրքիայի համար: Թուրքիան նաև ցանկանում էր թուրքմեններին օգտագործել որպես «պոտենցիալ բուֆեր ցանկացած քրդական ինքնավար շրջանի դեմ» սահմանի երկայնքով: Թուրքմենները հուսալի պրոքսի ուժ են Թուրքիայի համար ոչ միայն Սիրիայում, այլ նաև Իրաքի նման այլ վայրերում, որտեղ պայքար էր մղվում «Իսլամական պետություն» (ԻՊ) ահաբեկչական կազմակերպության դեմ[9]:

Նույն թուրքմենների կամ թուրքոմանների գործոնը դերակատար է եղել նաև Լիբիա զորք ուղարկելու համար: Հայտնի է, որ Սիրիայի սահմաններից դուրս թուրքմենները համագործակցել են Թուրքիայի հետ նաև Լիբիայում, որտեղ Անկարան տեղակայել է հազարավոր սիրիացի վարձկանների, որոնց մեծամասնությունը թուրքմեններ էին: Թուրքիայի նպատակն է եղել օգնել Լիբիայի Ազգային համաձայնության կառավարությանը, որը վայելում էր Արևմուտքի աջակցությունը՝ գեներալ Խալիֆա Հաֆթարի ուժերի դեմ պատերազմում[10]: Թուրքիայի աջակցությամբ թուրքմենները ստեղծել են բազմաթիվ ապստամբական խմբավորումներ՝ բրիգադներ՝ վերապատրաստված Թուրքիայի կողմից, որոնց թիվը մոտ 2000-ից 10.000 մարդ է[11]:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ նույն քաղաքականությունը կարող է իրականացվել նաև մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման դեպքում, քանի որ այդ ծրագիրը կոնկրետ նպատակներ է հետապնդում՝ ա) տիրանալ Հարավային Կովկասին, ինչը պլացդարմ կլինի դեպի Հյուսիսային Կովկաս ծավալվելու համար, որտեղ վաղուց տարվում են համապատասխան աշխատանքներ՝ փափուկ ուժի գործիքակազմի կիրառմամբ, բ) անխափան կապի հաստատում Կենտրոնական Ասիայի հետ՝ կյանքի կոչելով թուրանական նախագիծը:

Մեսխեթցի թուրքերի գործոնը կարող է կարևոր դեր ունենալ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական ուժերի և հատկապես Թուրքիայի շահերի և ռազմավարական ծրագրերի իրականացման տեսանկյունից: Բնական է, որ Թուրքիան շահագրգիռ է Վրաստանի հարավ-արևմուտքում, այսինքն՝ Սամցխե Ջավախքում և հարակից շրջաններում մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման հարցում: Անկարան ձեռք կբերի մի լծակ, որը կկարողանա օգտագործել ամեն հարմար պահի՝ ակտիվացնելով իրեն հավատարիմ հինգերորդ շարասյունը Վրաստանում՝ ի դեմս մեսխեթցի թուրքերի: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ապագա վերաբնակիչներից շատերը Վրաստան են գնալու հենց Թուրքիայից, ինչպես դա տեղի է ունեցել Հյուսիսային Կիպրոսի դեպքում, որը թուրքական ներխուժումից հետո մեծ մասամբ վերաբնակեցվել է Թուրքիայի քաղաքացիներով, քանի որ Կիպրոսում բնակվող թուրքերը սակավաթիվ էին[12]: Դա առավելագույն չափով կերաշխավորի մեսխեթցի թուրքերի հուսալիությունը և հավատարմությունը Անկարային:

Անկարան նաև շահագրգռված է Ջավախքի հայաթափմամբ: Հաշվի առնելով Թուրքիայի ագրեսիվ ծավալապաշտական հակումները՝ հայ և մեսխեթցի թուրքերի միջև անխուսափելիորեն սադրանքներ կկազմակերպվեն, և բախումներ տեղի կունենան կենցաղային տարբեր պատճառներով, ինչի հետևանքով թուրքերի համար լեգիտիմ հիմքեր կստեղծվեն վրաց-թուրքական սահմանամերձ Ջավախքի երկրամաս ռազմական ներխուժման համար՝ մեսխեթցի թուրքերի շահերը և անվտանգությունը ապահովելու նպատակով (նույն Հյուսիսային Կիպրոսի և Սիրիայի սցենարը): Բնականաբար, թուրքական զինված ուժերը այլևս դուրս չեն գա տվյալ տարածքից, ինչպես դուրս չեն եկել բոլոր այն վայրերից, ուր ռազմական ներխուժում են իրականացրել: Այսպիսով՝ Անկարան Վրաստանում՝ Հայաստանի հետ սահմանակից շրջաններում, մեսխեթցի թուրքերի միջոցով բուֆերային գոտի կկարողանա ստեղծել, ինչպես անում է Սիրիայի հյուսիսում՝ հենվելով իր անվտանգության հայեցակարգի վրա, որի

համաձայն՝ Թուրքիայի անվտանգությունը սկսվում է նրա սահմաններից դուրս:

Տեսնելով, թե ինչպես են թուրքերը օգտագործում այլ երկրներում թյուրքական ծագում ունեցող փոքրամասնությունների գոյության հանգամանքը քաղաքական և ռազմավարական նպատակներով և ինչպիսի պատրվակներ են մեջբերում ռազմական ներխուժումներն արդարացնելու համար՝ անհրաժեշտ է դառնում ավելի մեծ ուշադրություն դարձնել մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման խնդրին, քանի որ դա ևս մեկ քայլով մոտեցնելու է թուրքական գերիշխանությունը Հարավային Կովկասում, իսկ Հայաստանը հայտնվելու է թուրքական օղակի մեջ՝ հյուսիսից կտրվելով Վրաստանից: Հայաստանի հարավային սահմանների նկատմամբ նույնպես Թուրքիան չի թաքցնում իր նկրտումները՝ նպատակ ունենալով կտրել Հայաստանի բոլոր հաղորդակցական ուղիները արտաքին աշխարհի հետ, ինչպես նաև ամբողջությամբ զրոյացնել հյուսիս-հարավ ծրագիրը, որի ճանապարհներից մեկը պետք է անցնի Հայաստանով: Իսկ Թուրքիան հակա-ռակը՝ ամբողջությամբ իր վերահսկողության տակ կառնի Միջին Ասիայից Կասպյան ավազանով, Ադրբեջանով, Վրաստանով դեպի Արևմուտք երկարող էներգակիրների և, առհասարակ, տրանսպորտային լոգիստիկայի բոլոր տարանցիկ ուղիները՝ լուսանցք մղելով Հարավային Կովկասում նույնպես կենսական շահեր ունեցող Իրանին և Ռուսաստանին: Նույն քաղաքական տրամաբանության մեջ է նաև Սյունիքում «թուրանական միջանցքի» ստեղծման ակնկալությունը, որի շուրջ պայքարում են գլոբալ մասշտաբի աշխարհաքաղաքական հսկաներ, և դա լոկ մի ճանապարհի կամ միջանցքի խնդիր չէ:

Թուրքիայի արտաքին ռազմավարությունը բոլոր ուղղություններով մնում է նույնը: Փոխվում են միայն աշխարհագրությունը և մարտավարական քայլերը, իսկ գործելաոճը անփոփոխ է: Այս կոնտեքստում կարևոր է հասկանալ, թե ովքեր են մեսխեթցի թուրքերը, ինչ ծագում ունեն նրանք և ինչպիսի սպառնալիք կարող են դառնալ Հարավային Կովկասի համար թուրքական քաղաքական, տնտեսական և մշակութային ծավալապաշտության տեսանկյունից, ինչի հետևանքով Կովկասը կվերածվի թուրքական ազդեցության հերթական գոտիներից մեկի:

Ներկայում կրկին ակտիվացել է թուրք-մեսխեթցիների հարցը: 1999 թ. միանալով Եվրոպայի խորհրդին՝ Վրաստանը պարտավորություն ստանձնեց ապահովելու բռնագաղթի ենթարկված այդ ժողովրդի հայրենադարձությունը: Հատկանշական է, որ նույն 1999 թ. Վիեննայում կազմակերպվել է հատուկ գիտաժողով, որի թեման եղել է մեսխեթցի թուրքերի կամ «Ախալցխայի թուրքերի» էթնոգենեզի հարցը: Վրացական կողմը, փաստարկելով իր դիրքորոշումը, «Մեսխի» էթնոնիմի ներկայությամբ հայտարարել է, որ «մեսխեթների» մոտ գերիշխում են քարթվելական արմատները՝ դրանով առաջացնելով վերջիններիս սուր վրդովմունքը: Ի վերջո, ինչ կարելի է ասել մեսխեթցի թուրքերի էթնոգենեզի մասին[13]:

Մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խումբը կազմավորվել է Վրաստանի պատմական Մեսխեթի շրջանում: 16-18-րդ դարերում ժամանակակից Վրաստանի հարավարևմտյան շրջաններում ապրող բնակչության որոշակի հատված ընդունել է Օսմանյան Թուրքիայում դավանած սունիական իսլամը: Սա հենց այն ժամանակաշրջանն է, երբ վրացական պետականությունը վերջնականապես տրոհվել է առանձին վարչատարածքային միավորների, որոնք վրացական աղբյուրներում հիշատակվում են որպես Քարթլիի, Կախեթիի, Իմերեթիայի թագավորություններ և, այսպես կոչված, «Սամցխեի աթաբեկություն» Մեսխեթիում[14]: Իսլամ ընդունած վրաց մեսխեթցի իշխաններն իրենց կոչում էին «մեսխերի և թուրքերի տիրակալներ», այնուհետև ընդունեցին աթաբեկների թյուրքական տիտղոսը, և նրանց տիրույթը կոչվեց Սամցխե-Սաատաբագո (Սամցխեի աթաբեկություն): 1639 թ. Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև կնքված պայմանագրով այդ շրջանը դարձավ թուրքական փաշալիկություն (paşalik):

Մեսխեթցի թուրքերը սունիական մահմեդականներ են և խոսում են թուրքերենի արևելաանատոլական բարբառներից մեկով: Նրանց ծագման հարցում հետազոտողներն ընդհանուր հայտարարի չեն կարողանում գալ, քանի որ այդ հարցը քաղաքական շահարկումների առարկա է: Վարկածներից մեկի համաձայն՝ նրանք մահմեդականացած և թրքացած վրացիներ են, իսկ երկրորդի համաձայն՝ էթնիկ թուրքեր: Մեսխեթցի թուրքերի ծագման առավել խորքային ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նրանց կազմավորման գործընթացին մաս են կազմել ինչպես վրացիներն ու եկվոր թյուրքական տարրերը, այնպես էլ տեղաբնակ այլ էթնիկ խմբերը, այդ թվում՝ հայերը, հույները և քրդերը: Հետևաբար, թուրք-մեսխեթների էթնոգենեզը պետք է դիտարկել բացառապես այս խայտաբղետ պատկերի հարթության վրա: Նրանք հայտնի են նաև մի շարք անվանումներով՝ «մեսխեր», «մեսխեթցիներ», «թուրք-մեսխեթցիներ», «Ահիսկա թուրքեր»: «Ահիսկա» (Ahiska) Ախալցխա քաղաքի թուրքերեն անվանումն է, որի շրջակայքում էլ բնակվել են մեսխեթցի թուրքերը: Ներկայիս էթնոլեզվաբանական հանրությունը, որը կոչվում է մեսխեթցի թուրքեր, ձևավորվել է երեք տարբեր լեզվաընտանիքների ներկայացուցիչներից՝ կովկասյան - մեսխի (վրացիներ), հնդեվրոպական - հայեր, հույներ, քրդեր, ալթայական - ղպչակներ, թաթարներ, օսմանցիներ: Որոշ հետազոտողներ հակված են կարծելու, որ ամբողջովին օսմանցիների կենսակերպին և հավատքին անցած ժողովուրդները դեռևս որոշ ժամանակ պահպանում էին իրենց ավանդույթներն ու սովորույթները[15]:

Աստիճանաբար շրջանի ժողովրդագրական խայտաբղետ պատկերը բնական ուծացման գործընթացների հետևանքով սկսեց օսմանացվել: Սամցխեի և մասամբ Ջավախքի օսմանացված բնակչությունը աստիճանաբար կորցնելով ազգային ինքնությունը՝

ինքն իրեն սկսեց անվանել «բնիկ թուրքեր» (yerli türkler), ի տարբերություն եկվոր թուրքերի, որոնք կրում էին «ահիսկա թյուրքլերի» էթնոնիմը (ahiska türkleri, Ահիսկա՝ Ախալցխայի թուրքեր)[16]: Արդեն 19-րդ դարում կրոնի և ազգության միջև ձևավորվել էր սերտ փոխկապվածություն, և մեսխեթցի մուսուլմանների մեծ մասն իրեն համարում էր ավելի շատ թուրք, քան վրացի՝ չնայած կրում էր վրացական անուններ[17]: Նույնը վերաբերում է նաև մյուս էթնիկ խմբերին, որոնք բնակվում էին տվյալ շրջանում և պատկանում էին «բնիկ թուրքերի» (yerli türkler) թվին: Այսինքն՝ բնիկները կամ ավտոխտոն տարրերը օսմանյան ասիմիլյացիայի հետևանքով դարձել էին մի սուբէթնիկ միավոր, որն արդեն իրեն նույնականացնում էր մեսխեթցի կամ ահիսկա թուրքերի հետ:

Ռուս-թուրքական պատերազմի (1828-1829) ավարտից հետո Ռուսական կայսրությունը ընդլայնեց իր սահմանները մինչև «թուրքական Վրաստան» (Ախալցխա փաշալիկություն): 1829-1917 թթ. Մեսխեթիան մտնում էր Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ հետո կարճ ժամանակով գտնվում էր Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմում (1918-1921 թթ.): 1918 թ. երբ Վրաստանը անկախություն ստացավ, Թուրքիայի հետ հարակից հարավային շրջաններում բնակվող մահմեդականներին իր կողմը գրավելու համար թուրքերի և վրացիների միջև գաղափարական և էթնո-մշակութային մրցակցություն էր սկսվել:

Վրաստանի ղեկավարությունը 1918 թ. ցանկանում էր Վրաստանին միացնել, այսպես կոչված, մուսուլմանական Վրաստանը՝ Աջարիան և Սամցխե-Մեսխեթին: Սակայն Բաթումի կոնֆերանսի ժամանակ՝ 1918 թ. հունիսի 4-ին, վրաց իշխանությունները ստիպված էին զիջել օսմանցի թուրքերի ճնշմանը և նրանց հետ ստորագրել «հաշտության և բարեկամության» համաձայնագիր, որի համաձայն՝ վերոնշյալ շրջանները մնում էին օսմանյան կայսրության տիրապետության տակ: Թուրքերի հետագա էքսպանսիան Վրաստանում հաջողվեց կասեցնել Կայզերական Գերմանիայի քաղաքական ազդեցության շնորհիվ, որին անհանգստացնում էր Կովկասում թուրքական ազդեցության սրընթաց աճը[18]: 1921 - 1991 թվականներին Մեսխեթիի շրջանը գտնվել է Վրացական ԽՍՀ կազմի մեջ:

Ռուսական կայսրության աղբյուրներում և փաստաթղթերում այս ժողովուրդը հայտնվում է երեք հիմնական անվանումներով՝ ա) «մուսուլմաններ», բ) «թուրքեր», գ) «սուննի վրացիներ»: «Մեսխեթցի թուրքեր» կամ «թուրք մեսխեթցիներ» էթնոնիմը առավել լայն տարածում գտավ միայն 1980-ականների վերջին: Վաղ խորհրդային շրջանում նման եզրույթ գոյություն չուներ, և այն արտահայտվում էր «թուրք» տերմինով: 1930-ականների երկրորդ կեսից, երբ առաջին անգամ հայտնվեց «ադրբեջանցի» արհեստական էթնոնիմը, Մեսխեթիայի և մասամբ Ջավախքի թուրքացած բնակիչներին երբեմն անվանում էին «սուննի ադրբեջանցիներ»: Ամեն դեպքում, այս ժողովրդի ներկայացուցիչներն իրենց նույնականացնում էին թուրքերի հետ՝ անկախ սեփական էթնոգենեզից, և մեսխեթցի թուրքերը գործնականում առիթը բաց չէին թողնում հանդես գալու թուրքական բանակի հետ, այսպես կոչված, «ընդհանուր թշնամու» դեմ: Թուրքական կառավարությունը կովկասյան իր արշավներում միշտ հենվել է այս ժողովրդի աջակցության վրա: Դեռ նախորդ դարասկզբին նա հատուկ նախագծեր էր մշակում՝ տարածաշրջանում վարվող քաղաքականության մեջ մեսխեթցի թուրքերին ներգրավելու համար: Մասնավորապես 1917 թվականի դեկտեմբերին Ախալցխայի դեմ արշավ նախապատրաստելիս Թուրքիան մեսխեթցիներին դրդեց ապստամբության: Նրանք օգնություն ստանալով՝ դեկտեմբերի 27-ին հարձակվեցին քաղաքի վրա: Հայերը վրացիների հետ կազմակերպեցին զինված ինքնապաշտպանություն, որի արդյունքում որոշակի հաջողություն գրանցվեց, սակայն 1918 թվականի հունվարին զինված մեսխեթցիները փակեցին Ածգուր և Ախալքալաք տանող ճանապարհները, ընդհատվեց Թիֆլիսի հետ հեռախոսակապը: Ավելի քան 20 մահմեդական գյուղերի բնակիչներ սկսեցին թալանել ու ավերել մոտակա ու հեռավոր հայկական ու վրացական գյուղերը, բնաջնջել տեղի բնակիչներին: Մեծ թվով գյուղացիներ ապաստան գտան Ախալցխայում[19]:

1944 թ. նոյեմբերին Վրաստանի ԽՍՀ Ադիգենի, Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում բնակվող մեսխեթցի թուրքերը արտաքսվեցին Ղազախստան, Ուզբեկստան և Ղրղզստան: Ընդհանուր առմամբ բռնագաղթի ենթարկվածների թիվը հասնում էր մոտ 100.000-ի: Պաշտոնական մեղադրանքներն էին բնակչության զգալի մասի մաքսանենգությամբ զբաղվելը, արտագաղթի ցանկությունը և թուրքական հետախուզական մարմիններին ծառայելը[20]: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին տարածաշրջանում արդեն աշխատում էին գերմանացի և թուրք հրահանգիչներ, որոնք թուրքացված ժողովրդին ամեն տեսակի աջակցություն էին խոստանում Մոսկվայի դեմ գործողությունների դեպքում: Այս աշխատանքն իրականացվել է նաև Հյուսիսային Կովկասի մահմեդական բնակչության շրջանում: Պատերազմի տարիներին գերմանական գործակալները ինտենսիվ աշխատել են ոչ միայն Սամցխեում, այլև Ջավախքում (Ախալքալաքի գյուղերում՝ Օկամի, Կարծեվի, Գոգաշեն և Կակիյա): ԽՍՀՄ-ի պարտության դեպքում մահմեդականներին երաշխավորվում էր լիակատար կրոնական և քաղաքական ազատություն: 1942 թվականին պայմանավորվածություն ձեռք բերվեց Ստալինգրադում գերմանացիների հավանական հաջողությունից անմիջապես հետո Սամցխեում, այսպես կոչված, «կովկասյան ճակատ» բացելու մասին: Մեսխեթցի թուրքերի ապստամբությունը պետք է օժանդակություն ստանար Հյուսիսային Կովկասի մահմեդականների կողմից՝ հզոր ապստամբության տեսքով, ինչի հետևանքը լինելու էր Թուրքիայի ներխուժումը: Ստալինգրադի

մոտ գերմանացիների պարտությունից հետո տվյալ համաձայնությունը ուժը չկորցրեց և որոշվեց մշակված սցենարը գործարկել Կուրսկի ճակատամարտից անմիջապես հետո: 1943 թվականին Կուրսկի մոտ ձախողումը, որը նշանավորեց պատերազմի ընթացքի արմատական փոփոխության անշրջելիությունը, 1944 թվականին հանգեցրեց ֆաշիստների հետ համագործակցած ժողովուրդների արտաքսմանը: Մեսխեթցի թուրքերը վերաբնակեցվեցին Ղազախստանում և Միջին Ասիայի այլ հանրապետություններում[21]:

Նշված շրջաններում մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումը միտված էր նաև սուբէթնիկ այդ ենթախմբի ինտեգրմանը և ձուլմանը իր համար հոգեհարազատ միջավայրում: Սակայն դա տեղի չունեցավ, քանի որ «բնիկ» և «եկվոր» հասկացությունների սոցիալ-հոգեբանական հակադրությունից բացի, մեծ դեր խաղաց նաև մարդաբանական գործոնը և էթնոհոգեբանական հակադրությունը՝ եվրոպեոիդ-մոնոդոլոիդ տեսակների միջև[22]: Վերը նշվածում արդեն անդրադարձել ենք թուրք մեսխեթցիների կամ մեսխեթցի թուրքերի՝ որպես սուբէթնիկ խմբի, առաջացման պատճառներին և պատմականորեն ձևավորված հանգամանքներին: Դրանով է բացատրվում, թե ինչու մեսխեթցի թուրքերը չինտեգրվեցին «հոգեհարազատ» թյուրքական միջավայրին, մինչև վերջ օտար համարվեցին, և նաև իրենք օտար համարեցին այն միջավայրը, ուր վերաբնակեցվել էին: Դրա հետևանքը դարձավ 1989 թ. Ուզբեկստանում գտնվող Ֆերգանայի հովտում տեղի ունեցած ողբերգությունը: Մեսխեթցի թուրքերը ստիպված էին լքել բնակելի տարածքները և ապաստան գտնել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ադրբեջանի, Կենտրոնական Ասիայի և Ղազախստանի շրջաններում:

Հարցը հայտնվեց նաև Թուրքիայի իշխանությունների ուշադրության կենտրոնում: Սկզբնական փուլում թուրքական կառավարությունը փորձեց մեսխեթցի թուրքերին բնակեցնել Թուրքիայում: 1992 թ. ընդունվեց օրենք, որը նպաստում էր նախկին խորհրդային հանրապետություններից մեսխեթցի թուրքերի ներգաղթին: Նրանց մեծ մասը բնակեցվեց պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում: Վերջին մի քանի տարիներին Թուրքիա տեղափոխված մեսխեթցի թուրքերի մեծ մասը Ուկրաինայի արևելյան շրջաններից է, որին նույնպես Թուրքիայի իշխանությունները փորձում են բնակեցնել երկրի արևելյան շրջաններում՝ պատմական Արևմտյան Հայաստանում՝ չնայած որ մեսխեթցի թուրքերի մեծ մասը ձգտում է տեղափոխվել տնտեսապես ավելի զարգացած շրջաններ[23]: Ակնհայտ է, որ մեսխեթցի թուրքերին Արևմտյան Հայաստանի տարածքում վերաբնակեցնելով՝ Թուրքիան մտադրվում էր ներազդել տեղի ժողովրդագրական կազմի վրա, որտեղ գերակշռում են քրդերը: Հոդվածի սկզբում արդեն անդրադարձել ենք այն խնդրին, թե ինչպես է Թուրքիան քաղաքական հարցեր լուծում թյուրքական ծագում ունեցող փոքրամասնությունների միջոցով, և թուրք մեսխեթցիները ևս այս հարցում բացառություն չեն:

Հատկանշական է, որ երբ Վրաստանը 1999 թ. դարձավ Եվրախորհրդի անդամ, ԵԽԽՎ-ում թուրք պատվիրակները լատվիացի գործընկերների հետ նախաձեռնեցին մեսխեթցի թուրքերի՝ իրենց նախնիների հայրենիք վերադառնալու հարցը: Սակայն վրացական իշխանությունները առ այսօր ձգձգում են ստանձնած պարտավորությունների կատարումը, քանի որ հասկանում են, թե Սամցխե-Ջավախքում թուրք-մեսխեթցիների կոմպակտ բնակեցումն ինչպիսի վտանգներով է հղի: Վրացական իշխանությունները առաջ են քաշում նախապայման, ըստ որի՝ հանրապետությունը պատրաստ է ընդունել միայն այն մեսխեթցի ընտանիքներին, որոնք իրենց պատմական հայրենիքն են համարում ողջ Վրաստանը, այլ ոչ թե նրա առանձին շրջանը: Վրաստանի այն ժամանակվա պետնախարար Գեորգի Խաինդրավան, որը զբաղվում էր մեսխեթցիների հայրենադարձության հարցով, հայտարարել է, որ երկրի իշխանությունները, իհարկե, ողջունում են թուրք մեսխեթցիների վերադարձը Վրաստան, սակայն նշել է, որ Թբիլիսին չի դիտարկում Սամցխեի (Մեսխեթիա) շրջանում մեսխեթցի թուրքերի բնակեցման հնարավորությունը: Խաինդրավայի խոսքով՝ երկրի ղեկավարությունը ողջունում է բոլոր այն մարդկանց վերադարձը, որոնք ամբողջ Վրաստանն են համարում իրենց հայրենիքը, այլ ոչ թե նրա առանձին վերցրած շրջանը[24]:

Ակնհայտորեն, խնդրի վերաբերյալ այս տեսակետը աջակցություն չգտավ Վրաստան վերադառնալու մտադրություն ունեցող մեսխեթցի թուրքերի մեծամասնության մեջ: Հետաքրքիր են Թուրքիայից «Մեսխեթցի թուրքերի միությունների ֆեդերացիայի» նախագահ Օսման Չելիքի, «Վաթան» (vatan-հայրենիք) կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղի նախագահ Իբրահիմ Բուրխանովի, ինչպես նաև Ինգուշեթիայում թուրք մեսխեթցիներին ներկայացնող Քամալ Ամրիևի հայտարարությունները: Օսման Չելիքը ասաց հետևյալը. «Մենք ցանկանում ենք վերադառնալ Ահիսկայի (Ախալցխա) հողեր: Մեր ժողովուրդը չի գնա այլ շրջաններ: Մենք տեղյակ ենք, որ վերադարձին դեմ է տեղի հայ բնակչությունը: Ես կարծում եմ, որ Վրաստանի իշխանությունները պետք է աշխատեն այդ ուղղությամբ»[25]: Նույնաբովանդակ էին նաև մյուսների հայտարարությունները: Բոլորը միակարծիք էին կոնկրետ Սամցխեի շրջան վերադառնալու հարցում:

Թուրքիայի կառավարությունը 1990-ական թվականների երկրորդ կեսին սկսեց ավելի ակտիվ աջակցել Սամցխե-Ջավախեթի վերադառնալու պահանջով հանդես եկող կազմակերպություններին: Այս կազմակերպություններից Անկարայի աջակցությունը ստացան Թուրքիա տեղափոխվելու և բացառապես Սամցխե-Ջավախեթի վերադառնալու կոչ անող կազմակերպությունները: Թուրքիան նաև փորձեց քայլեր ձեռնարկել իրարից անկախ կազմակերպություններին համախմբելու և ավելի արդյունավետ գործելու ուղղությամբ: Այդ նպատակով 2003 թ. օգոստոսին Թուրքիայում գործող մեսխեթցի թուրքերի

շուրջ 20 կազմակերպություններից ինը ձևավորեց «Ահիսկա թուրքերի կազմակերպությունների միությունը»[26]:

Անկարան, անտարակույս, պնդելու է իր դիրքորոշումը Սամցխե-Ջավախքի սահմանամերձ շրջաններ թուրք մեսխեթցիների վերադարձի հարցում, քանի որ դրա շնորհիվ Վրաստանի հարավում, հաշվի առնելով նաև Քվեմո-Քարթլիի (Մարնեուլի) ադրբեջանաբնակ շրջանը, կձևավորվի թյուրքական գոտի, որը կկապի Թուրքիան Ադրբեջանի հետ, իսկ այնտեղից էլ՝ Միջին Ասիայի թյուրքական հանրապետությունների հետ: Հայաստանում ադրբեջանցիների վերաբնակեցման հետ կապված խոսակցությունները նույնպես հարկավոր է դիտարկել նույն քաղաքական համատեքստում, այսինքն՝ նպատակը Հայաստանի դեմոգրաֆիկ կազմի փոփոխությունն է և Անկարայի քաղաքականությանը լոյալ տրամադրված բնակչության թվաքանակի աճը: Թուրքիան շահարկելով թյուրք փոքրամասնությունների խնդիրը՝ դեմոգրաֆիկ ականներ է տեղադրում իր ազգային շահերի գոտու ողջ պարագծով և ցանկացած ժամանակ սադրանքների միջոցով կարող է պայթյունավտանգ դարձնել այդ ականները՝ ռազմական ինտերվենցիա իրականացնելու համար: Արդեն անդրադարձել ենք այն խնդրին, թե ինչպես է Անկարան իրեն դրսևորում իր ցեղակիցների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու պատրվակի ներքո: Թուրքիան իրականացնում է հստակ և նպատակաուղղված քաղաքականություն, որի սլաքները ուղղված են գլխավորապես Հայաստանի դեմ: Իսկ Հայաստանին որպես գործոն չեզոքացնելուց հետո հերթը կհասնի (կարող ենք ասել՝ արդեն հասել է) Վրաստանին, քանի որ Հայաստանը միակ պատնեշն է Հարավային Կովկասի թյուրքացման ճանապարհին: ■

Հղումներ

1. https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-marks-77th-anniversary-of-deportation-of-ahiska-turks:

2. Տես նույն տեղում:

3. Ս.Մուրադյան, « Թուրքը ոչ միայն յաթաղանով, այլև փափուկ ուժի միջոցով՝ բամբակով է վիզ կտրում», Երկիր օրաթերթ, 10-11-2022 https://www.yerkir.am/public/hy/article/2022/11/10/2740:

4. http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Azgayin_uxt:

5. https://www.aa.com.tr/tr/turkiye/cumhurbaskanligi-sozcusu-kalin-turkiyenin-guvenligi-misak-i-milli-sinirlarinin-otesinde-baslar/1686836:

6. https://www.ozgidais.org.tr/makale/674/turkiye-osmanli-topraklarina-geri-donuyor:

7. Հայ քաղաքական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը 1924թ. հրատարակած իր «Հայ-թուրքական կնճիռը» աշխատությունում գրում էր հետևյալը պանթուրքիզմի մասին. «Նրանք ռուսին համարում էին իրենց մահացու թշնամի, որովհետև նա իր ծոցում ուներ 26 միլիոնից ավելի իրենց ցեղակից հպատակներ, որոնք գլխավորապես ապրում էին Տաճկաստան սահմանամերձ վայրերում, ինչպես, օրինակ, Պարսկաստանի Ատրպատականը և Անդրկովկասի Ադրբեջանն էր: Այդ երկրամասերի բնակչության ճնշող մեծամասնությունը ցեղակից թաթարներ էին, և եթե նրանց մեջտեղը չլինեին հայերը, վրացիները, քրդերը և պարսիկները, այն ժամանակ Պոլսից մինչև Չինական պատերը նրանք կունենային կրոնով իսլամ ու ցեղակից միապաղաղ ազգություն: Երբ իրագործվի այդ միությունը, մյուս իսլամներն էլ պիտի համախմբվեն և ենթարկվեն այդ միության, և մոտիկ ապագայում, ինչպես Լենկթեմուրի ժամանակները, այդ հսկա ուժը տեր և տիրական պիտի դառնա ամբողջ Արևելքին»:

8. Նեոօսմանիզմ, թուրքերեն՝ Yeni Osmanlicilik. քաղաքական գաղափարախոսություն Թուրքիայում, որի բովանդակությունը կայանում է նախկին Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող երկրներում քաղաքական ազդեցության մեծացման մեջ, որի իրավահաջորդը ժամանակակից Թուրքիան է: Վերջերս փորձ է արվում Թուրքիայի սահմաններում նույնպես վերականգնել նեոօսմանիզմ հասկացությունը՝ Օսմանյան կայսրության մշակույթին և ավանդույթներին համահունչ:

9. https://www.dw.com/en/turkmens-an-ethnic-group-at-the-center-of-the-syrian-conflict/a-18876277:

10. https://today.lorientlejour.com/article/1207121/the-turkmen-their-heart-in-syria-their-mind-in-turkey.html:

1.1 https://www.bbc.com/news/world-middle-east-34910389:

12. https://www.aljazeera.com.tr/haber-analiz/kibris-sorunu-ve-turkiyeli-gocmenler, տես նաև https://www.kibrispostasi.com/c35-KIBRIS_HABERLERI/n91101-turkiyelikibrisli-tartismasi-kimliksiz-kibrislilar:

13. Арис Казинян, Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность https://regnum.ru/news/polit/671851.html:

14. Տես նույն տեղում:

15. Арис Казинян նշվ. աշխ., տես նաև Կ. Գալոյան «Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Թուրքիայի քաղաքականության համատեքստում», http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019.3_41_45.pdf:

16. Տես Арис Казинян, նշվ. աշխ.,:

17. Stephen F. Jones. Meskhetians: Muslim Georgians or Meskhetian Turks? A Community without a Homeland https://www.jstor.org/stable/45411878:

18. Б. Маилян, Между Грузией и Турцией: особенности ирредентизма в Аджарии и Самцхе-Месхетии:

19. Տես . Տես Арис Казинян, նշվ. աշխ.,:

20. Տես Կ. Գալոյան նշվ. աշխ., տես նաև Докладная записка наркома внутренних дел Л.П. Берии И.В. Сталину, В.М. Молотову, Г.М. Маленкову о проведении операции по переселению турок, курдов и хемшинов из пограничных районов Грузинской ССР / Архив Александра Н. Яковлева - www.alexanderyakovlev.org/fond /issues-doc/1022541 (07.01.2019):

21. Տես Арис Казинян, նշվ. աշխ.:

22. Նույն տեղում:

23. Տես Կ. Գալոյան, նշվ. աշխ.:

24. Տես Арис Казинян, նշվ. աշխ.:

25. Նույն տեղում:

26. Տես Կ. Գալոյան, նշվ. աշխ.:

Պենտագոնի վիրուսային ծրագրի նոր փուլը Հայաստանու՞մ

Վլադիմիր Պետրով

https://vpoanalytics.com/2023/02/11/novyj-etap-virusnoj-programmy-pentagona-v-armenii/

Հանրապետությունում ստեղծվում է «Մանրէների ռեսուրսների տարածաշրջանային կենտրոն»:

Մեկ տարի առաջ Համառուսաստանյան պետական հեռուստառադիոհեռարձակման ընկերության հեռուստալիքով հեռարձակած Արկադի Մամոնտովի «Անդրոմեդայի շտամը» վավերագրական ֆիլմ-հետաքննությունը ուշացած և ոչ արժանահավատ արձագանք ստացավ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում: «Լուրեր» լրատվական ծրագրի ռեպորտաժներից մեկի հեղինակները փորձեցին հերքել ՀՀ տարածքում գտնվող ռազմակենսաբանական օբյեկտների մասին «կեղծիքը»: Նշյալ օբյեկտները սարքավորված են Պենտագոնի «կենսաբանական սպառնալիքների նվազեցման» ծրագրերի շրջանակներում: Ըստ հայ լրագրողների վարկածի՝ բիոլաբորատորիաներն իբրև ոչ մի կապ չունեն ո՛չ այդ ծրագրերի, ո՛չ ամերիկացիների հետ, առհասարակ, Հայաստանի սեփականությունն են ու ամբողջությամբ վերահսկվում են ՀՀ իշխանությունների կողմից: Ակնհայտ փաստերը հերքող հեղինակներին հավանաբար նյարդայնացրել է հայտնի վիրուսաբան, Հայաստանի սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նախկին ղեկավար, անասնաբուժական առողջապահության կազմակերպման միջազգային փորձագետ, «Միասնական առողջություն» ՀԿ ղեկավար Գրիգոր Գրիգորյանի՝ ֆիլմում լայն լսարանի համար հնչեցրած գնահատականը. «Սա երկրի ինքնիշխանության կորստի սկիզբն է: Լաբորատորիաների ցանցի տեղակայումից հետո երկու-երեք տարվա ընթացքում երկիրը լիովին կախյալ է դառնում և դե ֆակտո գաղութացված: Դե յուրե այն համարվում է ինքնիշխան երկիր, և դե յուրե լաբորատորիաները պատկանում են տվյալ երկրին, բայց դե ֆակտո երկիրը գերության մեջ է ընկնում, այն փաստացի դառնում է գաղութ»: Գ. Գրիգորյանը խիստ դեմ է ՀՀ-ում ամերիկացի զինվորական կենսաբանների ներկայությանը:

Նրանց հիմնական թիրախը, իհարկե, Ռուսաստանն է՝ պատասխանատվության ոլորտների հստակ բաշխմամբ (Արևելյան Եվրոպան հսկում են Ուկրաինայում գտնվող գլխամասային օբյեկտները, Կովկասը՝ Թբիլիսիի մոտակայքում գտնվող «Լուգարա կենտրոնը», Կենտրոնական Ասիան՝ կենտրոնական ռեֆերենս լաբորատորիան Ալմաթիում): «Ուսումնասիրությունների շրջանակը կախված է նրանից, թե կոնկրետ ինչ նպատակ են հետապնդում այս կամ այն տարածաշրջանում,— շարունակում է Գրիգորյանը,— օրինակ՝ հայտնի է, որ Կենտրոնական Ասիայի պետությունների, ինչպես նաև Մոնղոլիայի տարածքում անցկացվում են ժանտախտի ցուպիկի մարտական շտամների փորձարկումներ: Հայաստանի տարածքում հիմնականում փորձարկումներ են կատարվում բրուցելոզի,

տուլարեմիայի, սիբիրախտի հարուցիչների հետ: Այս բոլոր միկրոօրգանիզմները համարվում են պոտենցիալ պաթոգեններ, որոնք կարող են օգտագործվել հակառակորդի կենդանի ուժի վրա կենսաբանական ազդեցություն ունենալու, ինչպես նաև թիրախային երկրի տնտեսական համակարգը (գյուղատնտեսություն) խաթարելու համար: Մասնավորապես 2017-ին Հայաստանում տեղի է ունեցել դաբաղի բռնկում, որը երկրի այն ժամանակվա ղեկավարությունը փորձել է ամեն կերպ քողարկել՝ հերքելով տվյալ հիվանդության ակնհայտ կլինիկական նշանները: Փաստաթղթերից մեկի համաձայն՝ ամերիկյան «կենսաանվտանգության» ծրագրի էմիսարներն ուղղակիորեն հրամայել են Հայաստանի համապատասխան մարմիններին ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի ժողովուրդը չընդդիմանա, և ծրագիրն իրականացվի ըստ ժամանակացույցի»:

Գրիգորյանի կարծիքով՝ մանրէաբանական զենքի հիմնական «առավելությունը» նրանց համար, ովքեր ձգտում են այն կիրառել ռազմական նպատակներով, համապատասխան փաստերի և դեպքերի դժվար ապացուցելիությունն է: Վարակները լայնորեն շրջանառվում են բնության մեջ, և նրանց այդ հատկությունը դեռևս մի քանի դար առաջ անգլոսաքսերն օգտագործեցին Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների նկատմամբ տարվող ցեղասպանության քաղաքականության ժամանակ: Առավել ևս օրինաչափ է նման պրակտիկան այսօր՝ հաշվի առնելով կենսատեխնոլոգիաների զարգացման ներկայիս մակարդակը (ներառյալ «էթնիկ զենքի» զարգացումը), որը բազմապատկվում է «սպիտակ տերերի» գաղութատիրական ոգով, նրանց ցինիկ ռացիոնալիզմով և պրագմատիզմով...

Ռուսաստանի պաշտպանության նախարարության տվյալներով՝ ներկայում Ուկրաինայի տարածքից ԱՄՆ ռազմակենսաբանական լաբորատորիաները

տեղափոխվում են Լեհաստան և Մերձբալթյան երկրներ, ինչը միայն հաստատում է մեր մտահոգությունները՝ Ռուսաստանի սահմանների մոտ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների սադրիչ գործունեության վերաբերյալ: ԵԱՀԿ համաժողովի վերջին լիագումար նիստում անվտանգության ոլորտում համագործակցության հարցերով Ռուսաստանի ներկայացուցիչ Կոնստանդին Գավրիլովը հայտարարել է. «Մենք տեղեկություններ ենք ստացել ուկրաինացի ուժայինների կողմից Արտյոմովսկի և Սոլեդարի մերձակայքում ընթացող մարտերում քիմիական զենքի կիրառման մասին, ինչի հետևանքով ռուս զինծառայողները լուրջ այրվածքներ են ստացել և թունավորվել»:

Հաշվի առնելով արևմտյան գործընկերների հետ Հայաստանի իշխանությունների սերտ փոխգործակցությունը՝ ամենևին էլ զարմանալի չի թվում 2021-ին երկար ձգձգումներից հետո ստորագրված կենսաանվտանգության հարցերով ռուս-հայկական հուշագրի իրականացման, մեղմ ասած, ձևական բնույթը: Մասնավորապես՝ իրականությանը չեն համապատասխանում ռուս մասնագետների արտատարածքային օբյեկտներ իբր լիարժեք մուտքի թույլտվություն ունենալու մասին հայտարարությունները, ինչին ուշադրություն է դարձնում նաև Գրիգորյանը. «Մանիպուլյատիվ տեղեկատվություն է ստացվում, մասնավորապես խոսվում է Սարատովից երկու կամ երեք մանրէաբանների այցի մասին (եթե չեմ սխալվում 2018-ին): Սակայն սա ճանաչողական այց էր և ոչ մի ընդհանրություն չուներ երկակի նշանակության օբյեկտների տեսչության հետ, որոնք, ըստ իս՝ Հայաստանի առողջապահական համակարգի բժշկակենսաբանական լաբորատորիաներն են»: Թեև ռուս միկրոբիոլոգները այցելել են լաբորատորիաներ, բայց նրանց թույլ չեն տվել ներս մտնել՝ սահմանափակվելով իրականացվող փորձերի բնույթի մասին բանավոր բացատրություն տալով: «Այս մակերեսային և ճանաչողական այցը Հայաստանի այսօրվա իշխանությունները ներկայացնում են որպես ռուս մասնագետ-տեսուչների ընդունելություն: Նրանք փորձում են հավաստիացնել, որ իբր տեսչական մարմինը ոչինչ չի գտել»: Մինչդեռ հասկանալի է, որ կենսաբժշկական օբյեկտների փոքրիշատե արժեք ունեցող տեսչական մարմնի ցանկացած ստուգայց պետք է բոլորովին այլ կերպ տեղի ունենա, և յուրաքանչյուր նման տեսչական մարմին պետք է առնվազն հաշվետվություն ներկայացնի, ինչը, իհարկե, այս դեպքում նույնպես չի եղել:

Հայտնի է, որ ամերիկյան օժանդակությամբ ստեղծված լաբորատորիաները գործում են հանրապետության բոլոր մարզերում: 12 լաբորատորիաներից 3-ը Երևանում է: «Տարօրինակ պատահականությամբ ռազմավարական նշանակության օբյեկտները հայտնվել են բնակելի թաղամասերի մոտ, օրինակ՝ Գյումրիում ռեֆերենս լաբորատորիան գտնվում է հենց դպրոցի հարևանությամբ»,— նշում է «Ժողովրդի ձայն» հասարակական ակումբի փորձագետ Արման Ղուկասյանը: Ակումբի ներկայացուցիչների եզրահանգումների համաձայն՝ լաբորատորիաներում կատարվող աշխատանքները խնամքով թաքցվում են հայ հասարակությունից, դրանք տեղակայված են խիտ բնակեցված վայրերում, ինչպես նաև մանկապարտեզների և խաղահրապարակների մոտ:

«Սպիտակ պարոններին» ուղղված հարցերը, բնականաբար, մնացին առանց հասկանալի պատասխանների: Նույնիսկ ավելի վաղ «Infoport.am»-ը, հղում անելով ինսայդերական աղբյուրներին, պատմել է կենսաբանական հետազոտությունների ոլորտում Հայաստանի ռեսուրսներին Պենտագոնի մասնագետների անսահմանափակ հասանելիության և հատկապես վտանգավոր պաթոգենների հետ աշխատելու նրանց ծայրահեղ շահագրգռվածության մասին, որոնք վաղուց ուսումնասիրվում և փորձարկվում են որպես կենսաբանական զենք: ՀՀ ԱԱԾ պահեստազորի սպաների միությունը ևս կոչ է արել ստուգել հանրապետությունում գործող կենսալաբորատորիաների գործունեությունը՝ տագնապով մատնանշելով վերջին տարիներին Վրաստանում՝ կարմրուկի, Հայաստանում՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի և սիբիրախտի դեպքերը և այլն:

2022-ի մայիսին Հայաստանում Ռուսաստանի դեսպանությունը ահազանգեց ՀՀ տարածքում բժշկակենսաբանական ցանցի հաստատություններում որոշ կազմակերպությունների մասնագետների և նախկին Ուկրաինական ԽՍՀ տարածքում ռազմակենսաբանական հետազոտություններով զբաղվող մասնագետների ակտիվ գործունեության մասին: Դիվանագիտական ներկայացուցչության հայտարարության մեջ նշվել է ՀՀ-ում ուկրաինացի, ամերիկացի և արևմտյան կենսաբանների «այդ գործունեության մանրակրկիտ վերլուծության» անհրաժեշտության մասին: Եվ կարճ ժամանակ անց՝ 2022-ի հուլիսի 27-29-ին, Հայաստան են ժամանել Պենտագոնի սպառնալիքների նվազեցման գործակալության «պաշտոնական» ռազմական վիրուսաբանները: Այնուհետև ամերիկյան «Bei Resources» ռազմական ընկերությունը ՀՀ է տեղափոխել կոնգո-ղրիմյան հեմոռագիկ



տենդի և գրամ-բացասական բակտերիաների խիստ վտանգավոր պաթոգենները, որոնք հանգեցնում են վերոհիշյալ տուլարեմիայի բռնկումների:

Ամենայն հավանականությամբ՝ Պենտագոնի ռազմակենսաբանական գործունեությունը Հայաստանում ակտիվորեն ծավալվում է տեղական իշխանությունների լիակատար թողտվությամբ, որոնք Մոսկվայի հետ երկխոսելիս գիտակցաբար ընտրել են վստահության վերջին նշույլների խարխլման ուղին: Մասնավորապես ԱՄՆ պաշտպանության նախարարության ռազմական սպառնալիքի նվազեցման գործակալությունը (DTRA), որն անմիջականորեն վերահսկում է նշյալ բիոլաբորատորիաները, Հայաստանում «Մանրէաբանական ռեսուրսների տարածաշրջանային կենտրոնի» կառուցման նախագիծ է առաջադրել:

2023 թ. հունվարին կենսաբանական սպառնալիքների նվազեցման, այսպես կոչված, ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել «Հայաստան-ԱՄՆ» աշխատանքային խմբի հերթական նիստը: «DTRA»-ի երևանյան գրասենյակի ղեկավար, մայոր Քրիսթեն Սմիթը հայտարարել է, որ հայ-ամերիկյան փոխգործակցության ներկայիս մակարդակը թույլ է տալիս ինտեգրել հանրապետության առողջապահության նախարարությանը և արտակարգ իրավիճակների նախարարության արտակարգ իրավիճակների վաղ նախազգուշացման համակարգը ԱՄՆ և ԵՄ համանման կառույցներին:

«Մանրէաբանական ռեսուրսների տարածաշրջանային կենտրոնի» ստեղծումը կնպաստի այդ նախագծի իրականացմանը: Այս կառույցի հիմնական խնդիրներն են Եվրոպայի և Կովկասյան տարածաշրջանի մանրէների հավաքածուների տեղեկատվական ցանցի ստեղծումը, հետազոտությունների անցկացումը, հատկապես վտանգավոր վիրուսների շտամների նույնականացումը և դեպոնացումը:

Կենտրոնի կառուցումը նախատեսվում է սկսել արդեն այս տարվա ամռանը ՀՀ ԳԱԱ «Հայբիոտեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի հիման վրա (ստեղծվել է 2010 թ. պետական ոչ առևտրային կազմակերպության տեսքով): Որպես Պենտագոնի կապալառուներ՝ տվյալ նախագծին կմասնակցեն «Black &Veatch» և «SN2M» ընկերությունները, ինչպես նաև քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ, միջուկային ռիսկերի նվազեցման Եվրոպական միության առաջավոր փորձի կենտրոնը և Համբուրգի տեխնիկական համալսարանի կենսաբանական լուծումների կենտրոնը:

Հայտնի է, որ աշխատանքային խմբի նիստին մասնակցող ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը և «Մանրէաբանության և մանրէների դեպոնացման կենտրոնի» վարիչ Վալերի Բաղյանը դրական են վերաբերվել ներկայացված նախաձեռնությանը և ամերիկացի հյուրերին հավաստիացրել են, որ կաջակցեն «Մանրէաբանական ռեսուրսների տարածաշրջանային կենտրոնի» կառուցման նախագծին, երբ այն քննարկվի Հայաստանի կառավարությունում: Պետք է ենթադրել, որ Փաշինյանն ու Արմեն Գրիգորյանը չեն առարկի…

Հավանաբար Պենտագոնի ռազմակենսաբանական ծրագիրը Հայաստանում թևակոխում է նոր փուլ, որը ենթադրում է ավելի սերտ տարածաշրջանային ինտեգրում: Տարածաշրջանում ռազմաքաղաքական տուրբուլենտության, շատ սահմանների դե ֆակտո թափանցելիության, չդադարող ռազմական հակամարտությունների համատեքստում այս ամենն ինչպես բացահայտ, այնպես էլ լատենտ ձևով, առանձնահատուկ տագնապ է ներշնչում: ■

Թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

Ամերիկյան կենսալաբորատորիաները նախկին ԽՍՀՄ հանրապետություններում

Մտածումներ. Հայութեան իրավիճակն ու պլոք-տիեզերքի տեսութիւնը

Սիւզան Խարտալեան
Ռեժիսոր-վավերագրող, սցենարիստ, փաստագրական կինոյին նվիրված գրքերի հեղինակ, հրապարակագիր

Ժամանակի և տիեզերագիտութեան փիլիսոփայութեան մէջ կայ պլոք-տիեզերքի տեսութիւնը: Սա ժամանակի հասկացութիւն է, որու համաձայն՝ ամբողջ տիեզերքը կը բացուի տարածութիւն-ժամանակ շարունակականութեան մէջ, ուր միաժամանակ կը գոյակցին եւ ներկան, եւ անցեալը, եւ ապագան: Այս մօտեցումը թոյլ կուտայ տիեզերքի գոյութիւնը դիտարկել իր ամբողջ ժամանակային տարածութեան մէջ՝ առանց յատուկ նշանակութիւն տալու ներկային: Բոլոր իրադարձութիւնները գոյութիւն ունին միաժամանակ եւ հիմա, եւ վաղը, եւ անցեալին: Ուրեմն այս համատեքստի մէջ ներկան կը դառնայ յարաբերական հասկացութիւն, երբ նոյն իրադարձութիւնը կրնայ միաժամանակ լինել դիտորդի եւ անցեալի, եւ ապագայի մէջ, հետևաբար դժուար կը դառնայ պնդել, որ իրականը միայն այսպահականն է, հիման է:

Պլոք-տիեզերքի տեսութիւնը կապուած է աշխարհի ընկալման քառաչափ հայեցակարգի հետ, ուր իւրաքանչիւր առարկայ կը ներառէ ոչ թէ երեք, այլ չորս չափումներ՝ (dimensions) ներառելով ժամանակի երկարութիւնը: Այս տեսանկիւնէն դիտուած՝ ոչ միայն առարկաները, այլ նաև մարդիկ փուլերու ամբողջութիւններ կը կազմեն, և այդ մարդկանց մտային կապ-յարաբերութիւնները ժամանակ տարածութեան վրայ շարունակական մէկ միասնութիւն կը կազմեն:

Այս ակնոցներով ահա կ'ուզեմ նայիլ մեր այսօրուան հայկական իրականութեան՝ այսօրուան հայկական իրականութիւնը ժամանակ-տարածութեան մէջ, ուր անցեալը, ներկան ու ապագան միաժամանակ կը գոյակցին:

Ինչու՞ չտեսնել կը ձևացնենք

Վերջին հինգ տարիներու ընթացքին հայկական հաւաքական կեանքի մէջ տեղի ունեցող երկրաշարժային չափի իրադարձութիւնները շփոթի մատնած են բոլորիս. ինչպէս շատերու, այնպէս և իմ մտածումներու առանցքը կը կազմէ մեր լինելիութեան տագնապը, և տպաւորութիւնս այն է, կարծես թէ հաւաքական ինքնասպանութեան գացող անկասելի այս շրջանիւը, որուն մէջ ենք այսօր, պիտի աւարտի մեր վերջակէտով:

Շփոթի և տատամսումի այս զսպաշապիկին մէջ բռնուած՝ երկար մոլորումներէ ետք յստակ դարձաւ, որ լուծումը կամ գոնէ անկման կասեցումը իրենք իրենց չեն գար, յստակ դարձաւ մի բան, որ մեր ինքնութիւնը ոչ միայն վերամեկնաբանելու խնդիր ունինք, այլև հրատապ խնդիր է մեր ինքնութեան արմատները վերագտնելն ու այն նորովին ներկայացնելը: Իմ առաջարկն է նայիլ մեր ինքնութեան և մեր գոյութեան, նայիլ ժամանակի և տարածութեան պլոք-տիեզերքի տեսութեան ընդմէջէն:

Շրջապատս կան բազմաթիւ մտածող մարդիկ, որոնք արդէն կը խօսին նոր պատումի մասին. առկայ հայկական պատումը ջախջախուած է, քար քարի վրայ չէ մնացած, իսկ նոր պատումի մասին թէև շատերը կը խօսին, բայց անկեղծ ըսեմ, որ շատ հասկնալի չէ, թէ ինչ կ'առաջարկեն: Հինը մեռած է, նորը չկայ, կայ միայն մէկ իրականութիւն: Սկսած ենք հասկնալ, որ գալիքը, այսինքն՝ ապագան, կախեալ է մեր այսօրուան, այս պահին ընելիքներէն: Ամերկբայօրէն, սկսած ենք նաև մէկ այլ բան լաւ հասկնալ. կը հասկնանք, որ այնքան ալ լաւ չենք ըմբռներ, որ անսպասելի ու անհասկնալի ձևերով մենք և մեր ապագան աւելի ու աւելի կախեալ են «բաներէ», որոնք իրենք կախեալ են մեր ընելիքներէն, մեզմէ, մեր իւրաքանչիւրէն:

Ինչպէ՞ս խօսիլ ապագայի մասին, որ կախեալ է մեր հիմիկուան ընելիքներէն: Սկսած ենք ըմբռնել, որ մենք ագահօրէն կը լափենք ու հիմա արդէն վերջին պատառիկները կը կրծենք մեզի տրուած այն երկրային պտուղին, որ մեզի կեանք պարգևեց, բառացիօրէն կենդանի պահեց: Սկսած ենք հասկնալ, որ մեր աստուածատուր ընծան ու բանը սահմանափակ է, յավիտենական չէ, անվերջանալի չէ:

Հասկցած ենք, որ մեր վարքը տասնամեակներ շարունակ շատ վատ էր ու կը մնայ շատ վատ, սակայն չենք գիտեր՝ ինչպէ՞ս կասեցնել այն: Գիտակցելով հանդերձ մեր վատ վարքը՝ պատասխան չունինք, թէ ինչպէս կարելի է այն կասեցնել: Ունինք նախազգացում, որ ապագան մեր ընտրութիւններով

և գործելակերպով ու գործողութիւններով կրնայ արմատապէս փոխուիլ, և այդ պատճառով իսկ կը վախնանք ապագայէն: Վախը միայն մեր խնդիրը չէ, օրինակի համար՝ մարդիկ այնքան կը վախնան, որ կը նախընտրեն մնալ ու ապրիլ ներկային մէջ: Կան հարցախոյզներ, որոնք ցոյց կ'ուտան, որ Եւրոպայի բնակչութեան 67 տոկոսը կը վախնայ ապագայէն, իսկ ամէնէն ահաւորը այն է, որ երիտասարդներու միայն 16 տոկոսը կ'ուզէ ապրիլ ապագային մէջ: Անհաւատալի է ու նաև անհեթեթ, որովհետև երբ երիտասարդ ես, ու՞ր կրնաս ապրիլ, եթէ ոչ ապագային մէջ, ապագային համար, ապագայի հեռանկարով:

Վերադառնանք մեր իրականութիւն: Ներկայ, թէ՛ ապագայ, անցեալ, թէ՛ ապագայ հարցը կը դրուի, կարծես թէ կարելի է ընտրել գալիք ապագայի և այլ ժամանակներու միջև:

Որոշներու համար անցեալը ապահով կը թուի, և կը հաւատան, որ հոն պէտք է փնտռել լուծումները: Սա թերևս Սփիւռքի իրականութիւնն է: Միւս կողմէ՝ ներկայիզմի հաւատացողներուն համար կեանքի առանցքը հիման է, մարդիկ պինդ կառչած են հիմային ու կը նախընտրեն խուսափիլ եւ անցեալէն, եւ ապագայէն: Հայաստանի բնակչութեան կենցաղը ասոր վառ օրինակն է: Անցեալին մէջ ուզել ապրիլ կը նշանակէ վերադառնալ 100 տարի առաջ, առանց գիտնալու, թէ ինչպիսին եղաւ այդ անցեալի պատմութեան շարունակութիւնը: Կը կարծեմ, որ ոչ մէկը, ապրելով 2023 թուականին, կը հանդուրժէ կամ կը համակերպի ապրիլ 1915ի, 1921ի, 1945ի կամ 1960ի անցեալին մէջ: Անվտանգութիւն, սպանդ, ցեղասպանութիւն, հիւանդութիւն, բժշկութեան բացակայութիւն, անբաւարար կենսամակարդակ, սով և այլն, մեզմէ ո՞վ կրնայ երազել վերադառնալու թրքական տիրապետութիւն: Ուրեմն ֆիզիքապէս և հոգեպէս չենք կրնար անցեալը տեսնել: Եթէ 1915ի ցեղասպանութեան օրերուն ապրէի, ես կ'ուզէի նոյն վայրկեանին վերադառնալ 2018:

Մեր այսօրուան մտածողութեամբ՝ եթէ ապագան վախ կը պատճառէ բոլորիս, ուրեմն չենք կրնար ապրիլ ապագային համար, կը մնանք հիմային մէջ, չենք շարժիր ո՛չ առաջ, ո՛չ ետ, որպէսզի եւ նախորդը, եւ գալիքը մնան հեռու, անմտածելի և անցանկալի: Սա անտրամաբանական յոռետեսութիւն է:

Ի՞նչն է պատճառը այս յոռետեսութեան: Գիտենք, որ Հայաստանը աշխարհի ամէնէն վատատես երկիրներէն մէկն է: Կարելի՞ է ըսել, թէ մեր ժողովուրդը կը փորձէ պայծառատեսութիւն գտնել ներկային մէջ մնալու իր մարմաջով: Մարդիկ կ'ապրին վարկով, ապագայի հաշուոյն, դրամական վարկի մասին չէ խօսքը: Փաստօրէն, մենք կը մսխենք մեր անփոխարինելի ռեսուրսները, մեր հողերը, ջրային հարստութիւնը, ընդերքի պաշարները, մեր սերունդները.... Տասնամեակներ շարունակ անխնայ շահագործեցինք ամէն բան, իսկ յետոյ շատ հանգիստ դրանք նուիրաբերեցինք թշնամիին: Ապագայ սերունդներու հաշուին մենք կը շարունակենք մսխումը՝ փչացնելով ամէն բան, անհնար դարձնելով մեր մսխածը վերարտադրելու և կամ վերադարձնելու հնարաւորութիւնը:

Այս մտածելաեղանակով ինչպէ՞ս կարելի է մեր գոյութիւնը պահպանել, կամ խօսիլ յարատևութեան մասին: Մեր գոյութեան ժամանակն ու տարածութիւնը անդադար կը նեղանան, կը չքանան: Կը փլուզի մեզի ժառանգուած դարաւոր համակարգը՝ բնութիւնը, ջուրը, հողը, օդը. ապացոյցները մեր քթին տակ են, ահազանգը կը հնչէ շատոնց, սակայն լսող չկայ: Մեր ժողովուրդը խուլ ու համր, սարսռած կը սպասէ, որ ապագան չգայ:

Այս ախտաճանաչումը նոր չէ, սակայն հիմա իր մէջ ունի մէկ կարևոր նորութիւն: Մօտիկ անցեալին՝ 1980ականներն ի վեր, մենք կը հաւատայինք, որ մեր անհատական ու հաւաքական կեանքը մշտապէս դէպի լաւը կ'ընթանայ, իսկ հիմա կայ վերնիվայր շրջադարձութիւն, հիմա դժոխքը կը սպասէ սեմին, աւելի ճիշդ՝ դժոխքը արդէն հոս է. մենք մեքենայաբար լծուած ենք ինքաջնջումի գործին՝ պղծելով ու վերջնական փճացնելով այն ամէնը, որ անհրաժեշտ է մեր անհատական գոյութեան և հաւաքական կեանքի երկարացման համար:

Այսօր ակամայ մեր խօսոյթին մէջ, երբ ապագան կը յիշուի, կը խօսուի միայն կորուստի մասին, անվերականգնելիութեան մասին, մինչ ներկան



կ'երթայ դէպի անդունդ. Իսկ ինչու՞ է այս արհամարհանքը և սարսափը ապագայի՝ գալիքի նկատմամբ: Ժամանակէն կտրուած կապրինք միայն այսպահականի կեանքով, կորսնցնելու վրայ ենք մեր գոյութիւնը մեկնաբանելու բանալիները: Երբ կը կարդանք Նարեկացի, տարօրինակ է, չէ՞, որ կը հասկնանք ամէն մի բառ, տարօրինակ է, չէ՞, որ քանի դարեր առաջ մի գրուած խօսք ժամանակի ու գոյութեան մասին հասկնալի կը մնայ մինչև այսօր: Ինչու՞: Բնական պիտի ըլլար այն, որ Նարեկացիէն ետք եկողները փոխէին ժամանակի մեր ըմբռնման և նկարագրութեան ձևը, չէ՞ որ Նարեկացիէն ետք եկան գիտարարներ, որոնք ժամանակի և տարածութեան միջև կապի մասին յայտնաբերեցին նոր բաներ, որոնք մինչ այդ չէին ըսուած խօսքով: Եթէ մեր լեզուն լուրջի առած ըլլար այդ յայտնաբերումները, ապա այսօր մենք պիտի փոխէինք ժամանակի մասին խօսելու մեր ձևը, այնքան մը, որ այսօր՝ 2023ին, պիտի չկարենայինք հասկնալ Նարեկացիի խօսքը Աստուծոյ և ժամանակի մասին: Պիտի որ այն օտար լեզուի պէս մի բան ըլլար, բայց մենք կը հասկնանք այդ հին գիրն ու բանը. բացատրութիւնը շատ պարզ է՝ կամ այն է, որ ան կը խօսի մեր նման, կամ մենք կը խօսինք իր նման: Այսինքն՝ այն արտայայտութիւնները, որ այնտեղ կան, այսօր ևս կան մեր լեզուին, մեր ինքնութեան մէջ, բառեր, որոնք չեն փոխեր իրենց իմաստը կամ գիտութեան յայտնաբերումները չեն ազդեր անոնց վրայ: Այսինքն՝ լեզուն իր հետ կը շալկէ ժամանակ-տարածութիւններ՝ անյայտ կամ գաղտնածածկ, որոնք մենք կը պահպանենք, այսօր իսկ կը սահմանեն ժամանակի մասին մեր մտածողութիւնը: Եւ երբ ըսենք, որ հայրենիքը կ'ապրի վատ օրեր, մեր այս ժամանակը վատ է, ուրեմն նաև մեր մտածողութիւնը ժամանակի մասին վատ է:

Ուրեմն պիտի ուշադիր ըլլալ լեզուի հետ և եթէ գրաւը դնենք վատին վրայ, ապա ֆիզիքայի հաւասարութիւնները, ֆորմիւլաները մեզի ըսելիք ունին, ըսելիք, որ մեր լեզուն առ այս չըսեր: Հետաքրքրական պիտի ըլլայ փորձել երևակայել, թէ ինչ կ'ըսեն անոնք, եթէ այս հաւասարութիւնները կարենան խօսիլ մեր հետ: Օրինակ՝ ապագայի մասին կարելի է բազմաթիւ հարցեր տալ, մի՞թէ ապագային սպասելով, որ այն վերածուի ներկայի, արդէն տեղ մը գոյութիւն ունի կամ այս պահին այն դեռևս միայն բացարձակ ոչինչ է, դատարկ և կը սպասէ մեր քայլերուն:

Այս հարցերը չենք տար, քանի որ սովոր ենք մտածելու, որ ժամանակը տարածութիւն է, մի բան, որ լրիւ հակադիր է ժամանակի բնութեան: Թերևս բոլոր ժամանակները միաժամանակ առկայ են, իսկ ներկան միայն կը պտտի շրջանակի մը նման՝ գծելով իր առանցքը: Ներկան կը շարժի մեր նախընտրած առանցքին շուրջ: Սա արդէն շատ կարևոր դերակատարութիւն կը վերապահէ մեզի, մենք կրնանք որոշել մեր նախընտրած ներկան:

Հարց՝ եթէ ապագան արդէն իսկ առկայ է մի տեղ, ապա ու՞ր է անոր տեղը, ո՞ւր կ'երթայ ներկան, երբ այն կը դառնայ անցեալ և ո՞ւր կ'երթայ անցեալը:

Այս հարցերը կրնան անիմաստ թուիլ և երբ պատասխան չունինք, կը փորձենք ձևակերպել, խուսափողական մի բան գտնել: Բայց կարելի է երևակայել, որ մեր ընկալումներու և մեր յիշողութեան նշումներու բերումով ապագան իսկապէս գոյութիւն ունի նոյնքան, ինչքան անցեալը: Անհեթեթ կրնայ թուիլ, սակայն սա կ'ենթադրէ մեր սովորական բանականութեան հակառակ մտածել, այսինքն՝ մեր ուղեղի կողմէ մերժուած միտքերը արտաբերել, ընդունիլ, որովհետև մեր ուղեղները կան, որպէսզի յարմարինք մեր շրջապատին և ժամանակի փոփոխութիւններուն:

Մի խօսքով՝ ժամանակի և տարածութեան շարժիչը մենք ենք՝ ես ու դուն: Պլոք-տիեզերքի տեսութեան համաձայն՝ բոլոր ժամանակները՝ ներկան, ապագան և անցեալը, կը գոյակցին, իսկ մարդը կրնայ ներկան գծագրել՝ հիմնուելով իր գիտելիքներուն, տեղեկացուածութեան և համարժէքային դիտարկումներու ճամբով:

Այս ընթացքին մենք պէտք է շարունակենք ապրիլ, չենք կրնար սպասել: Ապրիլը կ'ենթադրէ ապագային տալ որոշակի կարգավիճակ, որ իր կարգին կ'ենթադրէ նոր գաղափարներու ներդրում, նոր նախագիծեր, նոր հաստատութիւններ, նոր երազանքներ: Նոր զարգացում:

Մենք պէտք չէ անմշակ հողի նման ապագան ձգենք ճակատագրի տնօրինութեան և ապրինք սոսկ ներկայիզմի կեանքով, ուր կայ միայն ու միայն ներկան:

Լաւագոյնն այն է, որ համադրենք ներկայիզմը և պլոք-տիեզերքի տեսութիւնը, միաձուլենք աշխարհընկալման այս երկու մօտեցումները, որպէսզի հիմնաւորենք այն գաղափարը, որ անտեսանելի ապագան իրական է նոյնքան, ինչքան ներկան: Այն շօշափելի իրականութիւն է, այլ կերպ՝ ապագան հոն է, բայց այն ամբողջովին կազմաձևուած չէ: Այն լիովին որոշուած չէ, և որ այնուամենայնիւ, կան նոր մտային տարածքներ նուաճելու, նոր գիտերու, խաղալու, մանևրելու հնարաւորութիւններ:

Մի խօսքով՝ հայկական աշխարհի վերջնամուտի ուրուականի հետ սիրաբանելու կամ անդամալուծութեան մատնուելու փոխարէն պէտք է վերականգնենք մեր «գոյութենական տարածութիւն-ժամանակը»՝ որպէս պատմական ուժ:

Զարգացման գաղափարը ոչ հեռու անցեալին կար մեր բոլորի ծրագիրներուն մէջ. ինչ էր մեր որդեգրած զարգացման գաղափարը, այն, որ ժամանակ-տարածութիւնը ինքնին պատմական ուժ է: Սա այն գաղափարն էր, որ կառաջադրէր անձնական ներկան զոհաբերել յանուն հաւաքական ապագայի: Այսպիսով՝ ապագայ հաւաքականը պէտք էր նախագծել, որպէսզի ունենայինք այն ապագան, որ կերազէինք, կառուցել դեռ չգրուած ապագան ներկայի ընդմէջէն:

Բաղձալի ապագան ինքն իրեն չի գար, ապագան պէտք է կերտել, քար առ քար կառուցել: Հիմա կրաւորական են բոլորը: Կան կրաւորականութեան տարբեր ձևեր, մէկը կը սպասէ Գոդոյին, միւսը կը սպասէ նոր թագաւորին, մի ուրիշը համապարփակ փլուզման, որպէսզի սկսի նոր ինչ որ բանի հաւատալ…իւրաքանչիւրս կը սպասենք մի բանի՝ համապատասխան մեր ճաշակին:

Բայց սպասելու փոխարէն, ամէն ինչ պիտի ընենք, որ օրինակ՝ 2070 թուականը յայտնագծուի այսօր՝ մեր ներկային մէջ, և փորձենք հիմայի և գալիքի միջև կառուցել կապ մը, որ եւ մտային է, եւ հոգեկան, եւ զգացմունքային: Այսինքն՝ ինչպէս կառուցել հայ մարդուն 2070 թուականը, որ հայ մարդը սիրէ ու փայփայէ այդ ապագան և ուզէ ապրիլ 2070 թուականին որպէս հայ:

Սա հիմնական հարցադրում է, որ մենք մեզի պիտի տանք հաւաքականօրէն, քանի որ ապագան չի կրնար ըլլալ միայն անհատական խնդիր: Միասնաբար պարտաւոր ենք մենք մեզի այսօր ճիշդ հարցեր տալ:

Իսկ որո՞նք են բնութեան մեջ ամրագրուած օրէնքները: Որո՞նք են այն բաները, որոնք ամրագրուած են ֆիզիքայի օրէնքներով: Մենք քաջ գիտենք եւ խնդիրները, եւ լուծումները, իրերու զարգացման միտումը յայտնի է բոլորիս: Կան խնդիրներ, որոնք պատասխանի կը սպասեն հիմա, օրինակ՝ պատրա՞ստ ենք հայրենիքի վերջնական կորուստին, հայութիւնը կրնա՞յ դիմանայ նոր մէկ ցեղասպանութեան, պատրա՞ստ ենք մեր հայրենիքի չարաշահման առաջքը առնելու, պատրա՞ստ ենք արդարութիւն ծնելու, պատրա՞ստ ենք մոլորակի դիմագրաւած բնական աղէտին մեզի բաժին ինկածին առաջքը առնելու: Հայ մարդը ինչպէ՞ս պիտի արձագանքէ առաջիկայի այս գերխնդիրներուն: Ուստի մեր իրական խնդիրը ճակատագրապաշտութեան հետ է:

Յաջորդ հարց՝ ի՞նչ կըլլան մեր կամայականութեան, սխալներու, մեր քմահաճոյքներու և մեր կուրութեան հետևանքները: Միթէ կա՞յ մանևրելու տեղ, և ո՞վ ունի այն: Երբ կը խօսիմ մեր ընտրովի կուրութեան մասին, կը մտածեմ ինքնախաբեութեան մասին, որ մենք ընդունակ ենք մշակելու կամ ընդունելու բոլոր տեսակի մտային մարզանքներ և ռազմավարութիւններ, որպէսզի չհաւատանք վտանգին, չվստահինք մեր բանականութեան և ճշմարտութեան: Պատասխանները ակնյայտ են, շատ լաւ գիտենք, բայց վարպետ ենք չհաւատալու, դրժելու, մենք մեզի խաբելու համար ամէն այլասիրութեան դիմելու: Չհաւատալու համար կը ծնինք անվերջ միջոցներ: Այսօր չես կրնար քննադատել գիտական կամ քաղաքական մէկ պնդում, քանի որ մարդիկ առողջ բանականութիւնը ի սկզբանէ ծաղրի կ'ենթարկեն: Կը հաւատանք ու կը կը լսենք մարդոց, որոնք առաջ կը մղեն այնպիսի անհիմն ու կեղծ փաստարկներ, որոնք քաջայայտ են, մեր շուրջ կը ծաղկի անամօթ մէկ հռետորաբանութիւն, որ կը սպաննէ ողջմտութիւնը ինքնին:

Բայց մենք պիտ հասկնանք, որ սուտի ու կեղծիքի հետ ապագայ չունինք:

Կայ մի հիմնագոյն խնդիր՝ այն, որ զարգացում (development) բառը վերացեր է հանրային մեր խօսոյթէն, մենք չենք խօսիր ծրագրերու մասին: Կարծես թէ մենք այլեւս չենք հաւատար զարգացման: Զարգացումի գաղափարը ինքն իր մէջ կը պարունակէ եւ մխիթարութեան, եւ զոհաբերութեան գաղափարները: Այսինքն՝ ապագայի պայմաններու բարելաւման յոյսով ներկային մէջ ցանկալի ապագան գծելով՝ զարգացումը մարդկայնօրէն աւելի տանելի կը դարձնէ անողոք պատմութիւնը: Մենք կը հաւատանք զարգացման, քանի որ գիտենք, որ մեր երեխաները մեզմէ աւելի լաւ կեանք պիտի ունենան: Ուրեմն ներկայի դժբախտութիւններն ու դժուարութիւնները դիմագրաւելու պահին զարգացման գաղափարը նաև կը մխիթարէ մեզ: Սա կրկնակի մխիթարական է, որովհետև զարգացումը զոհողութիւններ կը պահանջէ: Ապագայի որոշակի գաղափարի անուան տակ մարդկութիւնը կոչուած է աշխատելու զարգացման ուղղութեամբ, քանի որ շահառուն անհատը չէ, անհատը չէ, որ պիտի վայելէ զոհողութեամբ ձեռք բերուած բարիքները, շահողը գալիք սերունդներն են: Այսպէս մենք պատրաստ պիտի ըլլանք զոհաբերել անձնական ներկան յանուն հաւաքական ապագային: Որպէսզի մեր զոհաբերութիւնը իմաստալից ըլլայ, պէտք է ունենանք հաւաքական ապագայի տեսլական:

Մենք այսօր չունինք հաւաքական ապագայի տեսլական: Մենք յուսալի ու գրաւիչ հաւաքական ապագայ չենք գծած: Որովհետև զոհաբերուելու համար ապագան պէտք է յուսալի և գրաւիչ ըլլայ:

Որոշ ժամանակ՝ 1980էն 2000 թուականներուն, ապագայի մասին հայկական հանրային խօսոյթը գրաւիչ էր և մանաւանդ հնարաւոր կը թուէր հայ մարդուն: Այսօր ապագան արժանահաւատ չէ, գրաւիչ չէ, քանի որ յարաբերականացուած կը թուի ըլլալ: Նոյնիսկ երբ նշուող ապագայի առաջարկը արժանահաւատ է, այն հայ մարդոց համար ցանկալի չէ: Երբեմն ապագայի մասին խօսքը գրաւիչ է կամ ցանկալի, բայց այն վստահելի չէ: Շուռ եկած աշխարհի մէջ կ'ապրինք այսօր ազգովին: Կարծես թէ ինչ որ բան պակաս է, խորհրդանշական մէկ բան, նուիրուածութիւն մեր հայաշխարհին և անոր ապագային, մի բան, որ մղէ քեզի ապագան

իմաստաւորելու, մեր ցանկութիւններուն համապատասխան հայաշխարհ կերտելու:

Այսօր մեր ծրագիրը, մեր նպատակը ոչ թէ նոր հայաշխարհ ստեղծելն է, այլ հին աշխարհի քայքայումը կասեցնելը: Կը վկայակոչենք ներկայի ճգնաժամային իրավիճակը, բայց չկայ ապագայի որոշակի պատկերացում, այսինքն՝ կը սենք, որ ճգնաժամ կայ, և քայլեր առնենք՝ ապա միայն չկորսուելու համար: Այսպիսով՝ մեր մտահորիզոնը եղածը պահելու հռետորաբանութիւն է, մի բան ընենք, որպէսզի ամէն ինչ չի փոխուի, որպէսզի պահպանենք իրերու ներկայ դրութիւնը:

Մինչդեռ զարգացումի գաղափարը պահպանելու մասին չէ, այլ կառուցելու գաղափարն է, մշտական առաջընթացի սկզբունքը, որ հնարաւոր է և անսահման: Անցեալին զարգացման մոտէլը եւ գծային էր, եւ կայուն, իսկ խորհրդանիշը՝ լոյսը: Սակայն այսօր զարգացումի սկզբունքը ինքնին կարիք ունի վերատեսութեան. պէտք է զարգացնենք զարգացումի գաղափարը: Թերևս փորձենք նոր խորհրդանիշ գտնել, ուր մեր ներկան, ապագան և անցեալը շաղախուած են և անբաժանելի, իմաստութեան արեգնային հրագունդ մը, որ ոչ միայն լոյսի, այլև տիեզերական նոր ուժի աղբիւր է և մեզի բոլորիս կը տանի իսկական աննախադէպ զարգացման: ■

Սա Գանձասարն է՝ մեր անցեալը, մեր ներկան, մեր ապագան: Մենք մեր եկեղեցիներուն կը նայինք Այնշտեյնի յարաբերականութեան տեսութեան ընդմէջէն՝ անգիտակցաբար.

1./ Գանձասարը որպես շէնք ստատիկ չէ, այլ իրադարձութիւններու յաջորդականութիւն է տարածութիւն-ժամանակին մէջ.

2./ այն եռաչափ չէ, քառաչափ է, որ սկսեր է է ձևաւորուիլ անցեալի խորքերէն և երբեք չի դադրեր ժամանակի ընթացքին մեկնաբանուելէ, պահ առ պահ, միաժամանակ նոյն տեղը անփոփոխ մնալով: Այս մեծ անշարժ ճարտարապետական գործի հաստատակամութիւնը կը թաքցնէ անտեսանելի, խորը մէկ դինամիկա՝ այն պահերու անխափան յաջորդականութիւնը, որոնք այս գործի առկայութիւնը, առաջին ի յայտ գալէն ի վեր, փոխադրեր են ժամանակ-տարածութեան մէջ:

1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերը, «երկաթե շերեփի» գաղափարը և խաղաղության օրակարգը հայ իրականության մեջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցը մտավ միջազգային դիվանագիտական օրակարգ: Դրա համար հիմք հանդիսացավ Սան Ստեֆանոյի համեմատաբար հայանպաստ պայմանագրից և դրանով տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումից մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի անհանգստությունը: Վերջիններս դիմեցին Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկին՝ Բեռլինում վեհաժողով գումարելու և Սան Ստեֆանոյի պայմանագրի կետերը վերանայելու համար: 1878 թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ը Օտտո Բիսմարկի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Բեռլինի վեհաժողովը. «Հայկական հարցը Բեռլինում ներկայացնելու համար կազմավորվեց Ազգային պատվիրակություն: Այն գլխավորելու էր Տարոնի արքեպիսկոպոս և Կ. Պոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը: …. Պատվիրակությանը Բեռլինում պետք է միանար Խորեն արքեպիսկոպոս Նարբեյը, որը դիվանագիտական հանձնարարությամբ մեկնեց Պետերբուրգ…. Պատվիրակության թարգմանիչն ու քարտուղարն էր Մինաս Չերազը: Նա հետագայում աչքի ընկավ որպես գրող, թարգմանիչ, խմբագիր և հասարակական գործիչ»[1]: Հայերը բավականին ոգևորված էին Բեռլինի վեհաժողովով և հույսեր էին կապում մեծ տերությունների, հատկապես Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հետ:

Հայ պատվիրակները 1878 թ. մարտի 20-ին մեկնեցին Եվրոպա: Մարտի 26-ին Հռոմում նրանց ընդունեց Իտալիայի արտգործնախարար Լուիջի Կորտին, որը «խոստացավ Բեռլինի կոնֆերանսում պաշտպանել հայկական խնդիրը»[2]: Հայ պատվիրակները որոշ խոստումներ ստացան Ֆրանսիայում, իսկ Մեծ Բրիտանիայում գործող «Բրիտանա-հայկական ընկերությունը առաջարկում էր Հայաստանին տալ Լիբանանի կարգավիճակի նման ինքնավարություն»[3]: Անգլիայում Վիկտորյա թագուհին և վարչապետ Դիզրայելին հրաժարվեցին ընդունել հայ պատվիրակներին:

«1878 թ. մայիսի վերջին Մ. Խրիմյանը և Մ. Չերազը մեկնեցին Բեռլին…. Հունիսի 2-ին Բեռլին հասավ նաև Խ. Նարբեյը…. Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը, որը նախագահելու էր Բեռլինի վեհաժողովում, հայ պատվիրակներին չընդունեց»[4]:

Բեռլինի վեհաժողովը սկսվեց 1878 թ. հունիսի 1-ին և ավարտվեց նույն թվականի հուլիսի 1-ին: Այն սկզբից մինչև վերջ ընթացավ Մեծ Բրիտանիայի սցենարով, որը, առաջնորդվելով «Բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով, ապահովեց վեհաժողովում իր համար շահավետ արդյունք:

Բեռլինի պայմանագրում Սան Ստեֆանոյի համեմատաբար հայանպաստ 16-րդ հոդվածը վերափոխվեց 61-րդի և վերաշարադրվեց հետևյալ կերպ. «Բարձր դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[5]: Այսպիսով՝ Բեռլինի պայմանագրից հանվեց «Հայաստան» բառը, որի փոխարեն ամրագրվեց «հայաբնակ մարզեր» անորոշ ձևակերպումը: Անգլիայի ճնշմամբ Ռուսաստանը ստիպված էր իր գրաված տարածքները՝ Էրզրումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտն ու հարակից շրջանները, թողնել Թուրքիային: Բեռլինի վեհաժողովում փաստացի հաղթեց Անգլիան. «Անգլիան հաղթանակեց առանց մատը մատին խփելու, լոկ բանակցությունների ճանապարհով և ռուսական զորքի թափած արյունով նա կրակից իր համար շագանակներ հանեց»[6]: Հայ պատվիրակները, խոր հիասթափություն ապրելով, ձեռնունայն վերադարձան Հայաստան: Բեռլինի վեհաժողովից հետո Մկրտիչ Խրիմյանն առաջ քաշեց «երկաթե շերեփի» գաղափարը: Իր ելույթում նա հայ ժողովրդին բացատրում էր. «Գացի Եւրոպա ձեզ ազատութիւն բերելու, և ի՞նչ տեսայ այնտեղ. Պերլինի մէջ դրուած մի մեծ պղինձ՝ մէջը լիքը հարիսայ. զանազան ազգերու պատուիրակներ կու գային և երկաթէ շերեփներով հարիսայէն կը վերցնէին ու կ՚ուտէին: Գարատաղցին, Պուլկարը, Սերպը, ամէնն

Խրիմյան Հայրիկ

ալ առին իրենց մասերը: Կարգը գալով մեզ Հայոցս, ես ալ ձեռքիս աղերսաթուղթը ցուցնելով աղաչեցի, որ ամենս ալ լնուն հարիսայ: Յայնժամ կաթսայի գլուխն սպասող մեծաւորները ինձ հարցուցին, թէ ուր է քո շերեփը: Յիրաւի հոս հարիսայ կը բաժնուի, բայց շերեփ չունեցողն չի կարող անոր մօտենալ: Եւ յիրաւի տեսայ, որ Գարատաղցուն, Պուլկարին և այլոց պատուիրակներուն քով կային մի քանի քաջեր, որոնց վրայէն կախուած սուրերէն արիւն կը վազէր: Յայնժամ դարձրի իմ երես և իբր թէ կը փնտռէի իմ Զեյթունցի, Սասունցի և Մշեցի քաջերս. ո՞ւր էին, պէտք չէ՞ր որ անոնցմէ մէկ-երկու հոգի ալ իմ քովս գտնուէին և նոցա արիւնոտ թուրերը կրոպացոց աչքը խոթելով բարձրաձայն աղաղակէի թէ՝ տեսէ՛ք, հոս շերեփը: Բայց չկար…. Մի աղերսաթուղթ ունէի ձեռքս, ան ալ թրջուեց ու հարիսային մէջ մնաց, ուստի ես եկած եմ այսպէս դատարկաձեռն….»[7]:

Խրիմյանը հայ ժողովրդին կոչ էր անում զինվելու. «Ժողովուրդ հայոց, անշուշտ լաւ հասկցաք, թէ զէնքը ի՞նչ կրնար գործել և կը գործէ: Ուրեմն, սիրելի և օրհնեալ հայաստանցիներ, գաւառացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինէք, ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև՝ մէկ-մէկ զէնք տարէք, զէ՛նք առէք և դարձեա՛լ զէնք: Ժողովո՛ւրդ, ամէնէն առաջ քո ազատութեան յոյսը քո վերայ դիր. քո խելքին և բազուկին ո՛ւժ տուր: Մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի որ փրկուի»[8]: Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» գաղափարի գործադրման վառ օրինակը տվել է հերոսական Զեյթունը, որն իր մաքառումների շնորհիվ կարողացել էր պահպանել իր կիսանկախ վիճակը և փշի պես խրված էր թուրքական ջարդարար իշխանությունների կոկորդում: «Զեյթունը գրավելու, նրա հայ բնակչությունը սրի քաշելու իր ծրագիրը սուլթանական կառավարությունը որոշեց իրագործել 1862 թ. ամռանը: Մարաշի նոր կուսակալ Ազիզ փաշան կազմեց մի խոշոր բանակ և 1862 թ. հուլիսին պաշարեց Զեյթունը»[9]: Զինված պապենական հին հրացաններով՝ ընդամենը 7000 կովող ունեցող զեյթունցիները ամիսներ շարունակ հերոսաբար դիմադրեցին նախ Ազիզ փաշայի 40.000-անոց, հետո՝ Աշիր փաշայի 150.000-անոց զորքին, և միայն Ֆրանսիայի միջամտությունից հետո թուրքական կառավարությունը վերացրեց լեռնակղզու պաշարումը: Զեյթունը ժամանակավորապես կորցրեց իր կիսանկախ վիճակը: Զեյթունը թշնամուն իր «երկաթե շերեփը» ցույց տվեց նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ դարձյալ ապստամբեց թուրքական տիրապետության դեմ՝ հույս ունենալով, որ կկարողանա նաև ռուսական ուժերից օգնություն ստանալ, սակայն ինչ-ինչ պատճառներով Զեյթունը արտաքին օգնություն չստացավ, բայց և այնպես լեռնականներն իրենց կռիվը պատվով տարան մինչև վերջ:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հնարավորություն չէր տալիս թուրքական ուժերին ճնշելու ապստամբությունը: Հայերը փորձեցին կապ հաստատել Արևմտյան Հայաստանում գտնվող ռուսական զորքերի հետ՝ զենք ստանալու համար, սակայն օգնություն չստացվեց: Պատերազմից հետո թուրքական կառավարությունն ուժեր կենտրոնացրեց Զեյթունի դեմ, կարճ ժամանակում ճնշեց զեյթունցիներին միանալ ցանկացող թուրքմենական կոզանօղլու ցեղի ապստամբությունը, ապա գրավեց Զեյթունը: 400 ապստամբներ իշխան Պապիկ Եսիտունյանի գլխավորությամբ բարձրացան լեռները և շարունակեցին պայքարը: Բարձր դուռը Եվրոպային Թուրքիայի ներքին գործերին միջամտության համար նոր առիթ չտալու համար բանակցություններ սկսեց Պապիկ իշխանի հետ: Թուրքական կողմը Պապիկ իշխանին ճանաչեց քաղաքագլուխ, իջեցրեց հայերից գանձվող հարկի չափը, ազատեց Մարաշում բանտարկված զեյթունցիներին և փոխզիջումներով հանդարտեցրեց Զեյթունը:

Հետագա տասնամյակների ընթացքում ևս թուրքական իշխանությունները անդադար փորձեցին հնազանդեցնել Զեյթունը, ավելին՝ հայաթափել այն, ինչի հետևանքով 1890-ական թթ. բռնկվեց Զեյթունի նոր ապստամբություն. «Հարկային ծանր լուծը, հարստահարությունները, զեյթունցիների տնտեսական քայքայմանը միտված միջոցառումները, պարբերաբար հայատյաց կառավարիչների նշանակելը, հայ ազդեցիկ գործիչների նկատմամբ հալածանքները ստեղծել էին պայթյունավտանգ վիճակ…. Դժգոհության պատճառներից էր նաև այն, որ Հալեպի վիլայեթը, որտեղ գտնվում էր Զեյթունը, ներառված չէր Մայիսյան բարենորոգումների ծրագրում նշված շրջանների մեջ: Լեռնականների

Մեծն Մուրադ

պոռթկմանը միասնական, կազմակերպված բնույթ տալու գործում վճռական դեր խաղացին Զեյթուն ժամանած հնչակյան գործիչները՝ Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան), Հրաչյա Մարալը (Գրիգոր Ղարիբյան), Ապահը (Պետրոս Գմգմյան), Ձելլաթը (Կարապետ Ղրփանոսյան): Զգտելով ապստամբությանը տալ համահայկական հնչեղություն՝ նրանք լեռնականների մեջ արմատավորում էին այն գիտակցությունը, որ իրենք պայքարում են ոչ միայն Զեյթունի, այլև ողջ հայության համար: Այստեղ նրանք ստացան Եսիտունյան իշխանական գերդաստանի, հատկապես Նազարեթ Չավուշի անվերապահ աջակցությունը, որն անվիճելի հեղինակություն էր բոլոր զեյթունցիների համար»[10]: Ամիսներ տևած հերոսական պայքարից հետո հարցին խառնվեցին մեծ տերությունները, որոնք հերթական անգամ պետք է փրկեին սուլթանին. «Դեկտեմբերի 25-ին զեյթունցիներին հանձնվեց մեծ տերությունների՝ Հալեպում հավատարմագրված հյուպատոսների հեռագիրը: Ուշագրավ է, որ այդ հեռագիրը ուրախությամբ ընդունվեց թուրքական բանակի կողմից: Այն ոգևորությամբ ընդունեցին նաև զեյթունցիները՝ հյուպատոսների միջամտության փաստը մեկնաբանելով որպես կառավարության դեմ տարած հաղթանակ: Այսպիսով, զենքի ուժով լեռնականների ապստամբությունը խեղդելու և Զեյթունը գրավելու փորձերը ձախողվեցին, թուրքական կողմն, ի վերջո, ստիպված ինքն էր հաշտություն խնդրում:

1896 թ. հունվարի 22-30-ը եվրոպական տերությունների հյուպատոսների միջնորդությամբ թուրքական բանակատեղում տեղի ունեցան հաշտության բանակցություններ: Թուրքական կողմը պահանջեց վերադարձնել խլված զենքերը, վերականգնել զորանոցն ու ամրությունները և ռազմական ատյանին հանձնել ապստամբության կազմակերպիչներին: Այս ամենի դիմաց զեյթունցիներին ներում էին խոստանում: Թուրքական պայմանները զեյթունցիները վճռականորեն մերժեցին՝ հայտարարելով, որ ներում ստանալու համար չեն ապստամբել և որ իրենց համար գերադասելի է մեռնել կռվելով, զենքը ձեռքներին: Որպես հաղթողներ, նրանք առաջադրեցին իրենց պայմանները»[11]: Զեյթունցիների և Օսմանյան կառավարության միջև հունվարի 30-ին մեծ տերությունների միջնորդությամբ կնքվեց համաձայնագիր, ըստ որի. «1. Զեյթունցիները և գավառի մահմեդականները հանձնում են պատերազմական զենքերը, սակայն պահելով որսորդական զենքերը և հին տիպի հրացաններն ու ատրճանակները: 2. Հայտարարվում էր համընդհանուր ներում, իսկ դրսեկ հնչակյան գործիչները պետության ծախսերով պետք է հեռանային կայսրության տարածքից: 3. Բավարարվում էր «միրի» հարկի կրճատման և նախկին տուրքերը չեղյալ հայտարարելու մասին զեյթունցիների առաջարկը: Զորանոցը վերականգնվում էր պետության միջոցներով: 4. Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ (գայմագամ): 5. Չէր ընդունվում Զեյթունում թուրքական կայազորի վերացման առաջարկը: Դրանով հանդերձ, թուրքական բանակը զենքերը ստանալուց հետո պետք է հեռանար Զեյթունից՝ այնտեղ թողնելով միայն մեկ զորամաս»[12]: Այսպիսով՝ Զեյթունն իր օրինակով ցույց տվեց, որ «շերեփներից» ամենաարդյունավետը «երկաթե շերեփն է», որը «խաղաղության» կեղծ օրակարգին ստորադասելը կարող է ունենալ այնպիսի ողբերգական հետևանքներ, ինչպիսիք գրանցվեցին Սասունում: «Երկաթե շերեփի» գաղափարին միս ու արյուն տալու համար պարարտ հող էր ըմբոստ Սասունը, որը, ինչպես Զեյթունը, փշի պես խրված էր թուրք ցեղասպան իշխանության կոկորդում: «1893 թ. ամռանը Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան սասունցիներին ներկայացրեց իր պայմանները. 1. Հանձնել հեղափոխականներին, դրսից եկած գործիչներին ու նրանց համակիրներին: 2. Հանձնել զենքերը: 3. Վճարել այդ տարվա և նախկինում չվճարած բոլոր տուրքերը: 4. Ստորագրել հանրագրություն, համաձայն որի իրենք շատ գոհ են օսմանյան կառավարությունից և ըմբոստացել են Միհրան Տամատյանի թելադրանքով:

Առաջարկված պայմանները երկընտրանքի առջև կանգնեցրին սասունցիներին: Դրանց ընդունումը հավասարազոր էր անձնատվության, մերժումը կընկալվեր որպես ապստամբություն»[13]: Ազատատենչ Սասունն իհարկե չընդունեց թշնամու պայմանները: «1893 թ. վերջերին Սասունի համար զենք ձեռք բերելու նպատակով Թիֆլիս ժամանեց Մեծն Մուրադը

(Համբարձում Պոյաճյան), իսկ հաջորդ տարվա սկզբներին, նույն նպատակով, Կարս անցավ Հրայրը: Բայց Սասունը չստացավ ակնկալված օգնությունը: Շուտով Սասունը օղակի մեջ առնվեց. հայտարարվեց պատերազմական վիճակ: 1894 թ. հունիսին կառավարությունը դիմեց վճռական միջոցների: Սուլթանի հանձնարարությամբ Սասուն արշավող զորքերի ղեկավարությունը ստանձնեց Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար, ջարդարար Զեքի փաշան: Բացի նրա գլխավորած 12-հազարանոց զորամիավորումից, Սասունի վրա շարժվեցին նաև այլ զորամասեր՝ Դիարբեքիրից, Կաբինից, Երզնկայից, Մուշից, Վանից, անգամ Բաղդադից ու Հալեպից: Դեպի Սասուն շարժվեցին նաև ոստիկանական ուժեր, համիդիեական զորախմբեր և տասնյակ հազարավոր անկանոն քուրդ բաշիբոզուկներ: Այսպիսով, Սասունի դեմ դուրս բերվեց ժամանակի ռազմական տեխնիկայով զինված մի հսկա բանակ, որն իր թվաքանակով գերազանցում էր Սասունի հայությանը: Դա վկայում է այն մասին, որ սուլթանի համար որքան վտանգավոր էր ըմբոստ Սասունը: Օգոստոսի սկզբներին թուրքական կանոնավոր զորքերը հարձակման անցան: Մուրադի և մյուս հրամանատարների գլխավորությամբ կայծքարե հրացաններով, դաշույններով, կացիններով զինված սասունցիները շուրջ մեկ շաբաթ շարունակ աներևակայելի խիզախությամբ ու անձնազոհությամբ կռվում էին թշնամու դեմ՝ մնալով իրենց դիրքերում: Ի վերջո, սակայն, նրանք ստիպված էին մարտերով նահանջել անմատչելի լեռները: Անհավասար գոտեմարտը շարունակվեց ևս 15 օր»[14]:

Տեսնելով, որ անգամ այս ծանր վիճակում սասունցուն զենքի ուժով հաղթել չի կարողանում, թշնամին որոշեց դիմել խորամանկության. «….Թուրք բանակի հրամանատարը խաղաղութեան փող կը հնչեցնէ և դրօշակը կը պարզէ: Ներում կը խոստանայ ապստամբներուն, եթէ վար իջնեն….»[15]: Եղան դյուրահավատներ (մոտ 200 հոգի), որ հավատացին թշնամու ոչնչով չերաշխավորված սին խոստումներին ու «օգոստոսի 15-ին լքեցին դիրքերը և շարժվեցին դեպի թուրքական բանակատեղի: Այստեղ նրանց շրջապատեցին ու սրի քաշեցին»[16]: Հավատ ընծայելով թշնամու կեղծ խոստումներին, ինչպես նաև մնալով միայնակ և ոչ մի տեղից օգնություն չստանալով՝ օգոստոսի 24-ին Սասունն ընկավ: Սասունում սկսված ջարդերին զոհ գնաց շուրջ 7000 հայ: Զեյթունից ու Սասունից հետո «երկաթե շերեփի» ամենափայլուն օրինակը տվեց Վան-Վասպուրականը: Իր զգուշավորությամբ աչքի ընկնող Վանը, թեև սովորաբար չէր ապստամբում, բայց ինքնապաշտպանության փայլուն օրինակ տվեց. «Ջարդերի բոթը և գավառներից տեղահանված բնակչության մուտքը Վան անհանգստացրին վանեցիներին՝ հարկադրելով մտահոգվել ինքնապաշտպանության մասին: Տեղի Արմենական, Դաշնակցական և Հնչակյան կառույցները եռանդուն քայլեր ձեռնարկեցին զենք ու զինամթերք ձեռք բերելու և բնակչությանը զինելու ուղղությամբ: 1895 թ. աշնանը հայդուկային ու զինատար մի շարք խմբեր՝ Ներսեսի (Գ. Պեռզիկյան), Վազգենի (Տ. Տերոյան), Նիկոլ Դումանի (Ն. Տեր-Հովհաննիսյան) և այլոց գլխավորությամբ, հատեցին թուրք-պարսկական սահմանը և շտապեցին Վան:

Քաղաքում և մերձակա գավառներում մինչ այդ գործում էին նաև հիմնականում տեղացիներից կազմված մի քանի զինյալ խմբեր:

Նույն տարվա վերջին, երկարատև բացակայությունից հետո, Վան վերադարձավ և արմենական կուսակցության ղեկավարությունը ստանձնեց Մկրտիչ Ավետիսյանը»[17]: Նախապատրաստվելով Վանում ջարդեր իրականացնել՝ թուրքերը դրա համար պատեհ առիթ էին փնտրում, և «1896 թ. հունիսի 2-ին իշխանությունները խուզարկեցին դաշնակցական գործիչ Տիգրան Տերոյանի տունը և ձերբակալեցին վերջինիս քրոջը՝ Զարուհի Տերոյանին: Այդ դեպքը սրեց իրավիճակը Վանում: Հունիսի լույս 3-ի գիշերը զինյալ բախում տեղի ունեցավ թուրքական պահակախմբի և Պարսկաստանից Վան աղ փոխադրող մաքսանենգ քրդերի միջև: Եղան սպանվածներ ու վիրավորներ: Այգեստանի զորահրամանատար Հալիմը շտապեց մեղքը բարդել հայերի վրա: Խաչ փողոցի հրապարակում, թուրք խուժանին ի տես, ցուցադրվեցին սպանված և մահամերձ թուրք զինվորների մարմինները: Վաղօրոք զենք ստացած խուժանը՝ ծպտյալ զինվորների ու ժանդարմների առաջնորդությամբ, հունիսի 3-ին համատարած գրոհ ձեռնարկեց հայաբնակ թաղամասերի վրա:

Շուտով, հրի մատնելով Նորդուզն ու Հայոց ձորը, իր հրոսակախմբով Վան ներխուժեց նաև բալաքցի քուրդ ավազակապետ Շաքիրը: Այգեստանի Հայկավանք, Նորշեն և Կլոր Դար թաղերի հայ բնակչությունը, որն ապրում էր թուրքերի հետ կողք կողքի, սկզբում խուճապի մատնվեց և մեծ կորուստներ ունեցավ: Բայց հունիսի 4-ի առավոտվանից հայկական ինքնապաշտպանությունը կանոնավոր մարտերի բնույթ ստացավ: Այգեստանում հրավիրված արտակարգ ժողովում ստեղծվեց միացյալ պայքարի ճակատ՝ Մկրտիչ Ավետիսյանի, Պետոյի և Մարտիկի գլխավորությամբ: Նրանց համատեղ ջանքերով կյանքի կոչվեց նախապես պատրաստված դիմադրության ծրագիրը: Երեք կուսակցություններն իրենց տրամադրության տակ ունեին շուրջ հինգ հարյուր տարբեր տիպի հրացաններ ու ատրճանակներ»[18]: Հունիսի 5-6-ին թուրքերը բազմիցս փորձեցին գրավել Այգեստանը, բայց մատնվեցին անհաջողության: Պաշտպանները հերոսաբար հետ էին մղում թշնամու բոլոր գրոհները: Սակայն գործին միջամտում է Մեծ Բրիտանիան: Վանի բրիտանական հյուպատոսը ինքնապաշտպանության ղեկավարներին առաջարկում է դադարեցնել դիմադրությունը և հեռանալ Պարսկաստան: Ուժերը խիստ անհավասար էին, զինամթերքը սպառվում էր, իսկ բրիտանական հյուպատոսը երաշխավորում էր հայդուկների անվտանգ անցումը Պարսկաստան և կառավարության անունից խոստանում, որ ջարդեր չեն լինի:

Հունիսի 8-ին մոտ 1500 հայեր դուրս եկան Վանից և

շարժվեցին դեպի Վարագա վանք: Սբ Բարդուղիմեոս վանքի մոտ թշնամին շրջափակեց նրանց և կոտորեց, միայն 30 հոգու հաջողվեց փրկվել և անցնել Պարսկաստան: Թուրքերը հրո ճարակ դարձրին Վան քաղաքը, Վասպուրականի շրջանում կոտորվեց շուրջ 20.000 հայ, իսկ բրիտանական հյուպատոսը ոչինչ չձեռնարկեց ջարդերը կանգնեցնելու համար: Ահա թե ինչ հետևանքներ ունեցավ իր հեռատեսությամբ աչքի ընկնող Վան-Վասպուրականի համար Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ոչնչով չերաշխավորված խոսքերին ու թուրքական իշխանությունների կեղծ խոստումներին անսալը: Թշնամու կեղծ խաղաղության թեզին հավատ չընծայելու մեկ այլ դաս է Ուրֆան, որը ևս ինքնապաշտպանության երկու փայլուն օրինակ է տվել՝ 1896 թ. և 1915 թ.: 1896 թ. հոկտեմբերին թուրքական զորքը և մահմեդական խուժանը հարձակվում են Ուրֆայի հայ բնակչության վրա: Ուրֆացիները երեք ամիս շարունակ հետ էին մղում ջարդարարների գրոհները:

Հասկանալով, որ զենքի ուժով հնարավոր չէ ընկճել ուրֆացիներին, տեղի գավառապետը որոշում է հարցը լուծել խաբեությամբ ու նենգությամբ. «Նա հայկական թաղամաս է ուղարկում 5000 զինվորներ և համիդեականներ, իբր ուրֆացիներին մահմեդական ամբոխից պաշտպանելու համար: Հավատալով գավառապետի խոստումներին՝ հայերն ընդունում են զինվորներին: Մտնելով թաղամաս՝ թուրքերն ու քրդերը սկսում են կոտորածը: Կանանց ու երեխաների մի մասն ապաստանում է եկեղեցում, որը հրկիզվում է ջարդարարների կողմից: Ելուզակները սրի են քաշում ավելի քան յոթ հազար հայի»[19]:

Ուրֆան դաս է՝ թշնամուն չվստահելու և «երկաթե շերեփը» «թղթե շերեփով» չփոխարինելու մեծ դաս, որը հայության մի ստվար հատված հարյուրամյակից ավելի է համառորեն չի կարողանում սերտել:

Հետագա շրջանի մանրամասներին չանդրադառնալով՝ միանգամից խոսենք «թղթե շերեփի» հետ հույսեր կապող մեկ այլ շրջանակի՝ հայ բոլշևիկների մասին, որոնք արեցին ամեն ինչ Հայաստանը պաշտպանող ու կազմակերպող «երկաթե շերեփից», ասել է թե՝ բանակից, անկախությունից զրկելու համար, իսկ հետո նրանց «թղթե շերեփը» ի զորու չեղավ պաշտպանելու Լենին-Աթաթուրք դաշինքի կողմից բզկտվող Հայաստանի տարածքները:

1920 թ. սեպտեմբերին, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա, հայ բոլշևիկներն արեցին ամեն ինչ՝ աջակցելու թուրքերին՝ դյուրահավատների գլուխները լցնելով հայ-թուրք բարեկամության մասին հեքիաթներով ու կեղծ խաղաղության մասին խոստումներով:

Հայ բնակչությանը հղած իր կոչում բոլշևիկյան կուսակցության Ալեքսանդրապոլի կոմիտեն պնդում էր, որ թուրք ասկյարը հայ ժողովրդի բարեկամ է. «….եկողները ոչ թե թալանի ավազակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորի և բանուորների ընկերներ՝ թուրք աշխատաւորներ են: Նրանք գալիս են ոչ թէ ձեզ կոտորելու, այլ թալանչի Դաշնակների ձեռքից ազատելու: Դուք լաւ հաւատացէք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում և գրաւած միւս տեղերում նրանք ոչ թալանել են և կոտորել, այլ հաստատել են բանուորագիւղացիական կարգ ու կանոն»[20]: Այս հատվածի վրա հատուկ ուշադրություն ենք հրավիրում, որովհետև «թղթե շերեփի» մերօրյա քարոզիչները գրեթե նույնն են կրկնում 2018 թվականից առ այսօր: Խաղաղության կեղծ օրակարգի «մարտիկներից», այսպես ասած, «ազգային դիմագիծ» ունեցող Ալ. Մյասնիկյանը հեգնում էր, թե «Հայաստանի խորհրդայնացումը, կարելի է համարձակորեն ասել, վճռել է կամ վերացրել այսպես կոչված Հայկական Հարցը»[21], ապա՝ շարունակում. «Տաճկահայաստանի՞ խնդիր: Ա՛յդ էլ է լուծուած: Նորից թող հայհոյեն մեզ դաշնակցականները»[22]:

«Թղթե շերեփի» մեկ այլ հավատարիմ գաղափարախոս՝ կեղծ խաղաղության հովերով տարված Պողոս Մակինցյանը, 1925 թ. Արևմտյան Հայաստանի մասին խոսելիս նշում էր. «Այս ամէնը ներկայիս կորցրել է իր այժմէականութիւնը: Հայկական Հարցը լուծուած է միանգամ ընդմիշտ Խորհրդային Հայաստանի գոյութեամբ»[23]: Տասնամյակներ անց հայ ժողովուրդը Արցախում պետք է ցույց տար ինքն իրեն ու աշխարհին, որ ընդունակ է իր հարցը լուծելու «երկաթե շերեփի» միջոցով: Անգամ Արցախի ազատագրումից հետո Հայաստանում շարունակեցին ակտիվորեն գործել «թղթե շերեփի» գաղափարախոսները, որոնց ամենակարկառուն ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն էր, որն իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում «թղթե շերեփի» տրամաբանությամբ պնդում էր, թե «Ղարաբաղին և Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգավորված վիճակը, որովհետև դա զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի, հետևաբար նաև Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդություններ ստեղծում միջազգային հանրության և մանավանդ հարևան երկրների հետ հարաբերություններում, որոնք կարող են ճակատագրական նշանակություն ունենալ.

- Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ և մյուսի պարտություն, այլ հակամարտության հագեցման վիճակում ձեռք բերված հնարավոր համաձայնություն»[24]:

Ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, 1998 թ. Հայաստանն ու Արցախը տնտեսապես զարգացան ու միջազգային հանրության հետ բարեհաջող դիվանագիտական հարաբերություններ կառուցեցին առանց փոխզիջման: Հայաստանին հարգում ու նրա հետ հաշվի էին նստում միայն այն ժամանակ, երբ նա կարծր դիրքորոշում ուներ Արցախի հարցում և առաջնորդվում էր «երկաթե շերեփի» սկզբունքով, մինչդեռ Լևոն Տեր-Պետրոսյանի հոդվածի մեջբերված հատվածն ամբողջությամբ տեղավորվում է նրա քաղաքական հոգեզավակի՝ Նիկոլ Փաշինյանի «թղթե շերեփի» գաղափարի և «այո՛, մենք պարտվել ենք, բայց

Վազգեն Տերոյան

հաղթել ենք» տրամաբանության շրջանակներում, որի հետևանքները տեսնում ենք՝ կազմաքանդված բանակ, անվերջանալի պատերազմ, Հայաստանն ու հայ ժողովրդին արհամարհող միջազգային հանրություն, ցեղասպանական գործողություններ իրականացնող պատերազմական հանցագործ թշնամի և անդադար զիջող ու թշնամու դեմ ծնկող Հայաստանի իշխանություն, որը չունի համարձակություն, քաջություն, հեռատեսություն ու շրջահայացություն «երկաթե շերեփի» գաղափարը պետական և ազգային գաղափարախոսություն դարձնելու համար:

«Ինչ անել» հարցի պատասխանը, մեր կարծիքով, հետևյալն է. պետք է իշխանությունից հեռացնել «թղթե շերեփի» ու խնդրագրերի սկզբունքով շարունակ այս կամ այն երկրի դուռը թակող, բոլորի առաջ նվաստացող իշխանությանը, ձևավորել նոր կառավարություն՝ արտակարգ լիազորություններով, որի կազմում չեն լինի «թղթե շերեփի» գաղափարախոսության ազդեցությունը կրողներ, կլինեն մարդիկ, որոնք չեն վախենա թշնամու հետ «երկաթե շերեփի» լեզվով խոսելուց, և պարտադրել հաշվի նստել հայկական շահերի հետ, քանզի, ինչպես ցույց է տվել և տալիս է իրականությունը, «թղթե շերեփն» ու «խաղաղության օրակարգը» ապագա չունեն, իսկ խաղաղություն հնարավոր է պարտադրել միայն ու միայն «երկաթե շերեփի»՝ հայկական զենքի զորությունը թշնամուն զգացնել տալով, հակառակ դեպքում կլինի այն, ինչ ունենք այսօր՝ քանդված պետություն, կազմալուծված բանակ, անդադար շարունակվող պատերազմ, արյունահեղություն, տարածքային ու մարդկային անհամար կորուստներ, նվաստացում և ի վերջո վերադարձ թուրքական ստրկության հին ու «բարի» ժամանակներ: Որն է հայ ժողովրդի ընտրությունը՝ պետք է կողմնորոշվել հնարավորինս արագ:

Հղումներ

1. Պողոսյան Ս., Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ. Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին, էջ 72-73, http://publications.ysu.am/wp-content/uploads/2018/12/Poxosyan.pdf (մուտք՝ 20.12.2022):
2. Զերազ Մ., Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879, էջ 41:
3. ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 63, թթ. 7-8:
4. Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 78:
5. Կիրակոսյան Ջ., Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972, էջ 20:
6. Սառիկյան Հ., Հիշողություններ, Եր., 2015, էջ 120:
7. Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը, Գահիրէ, 1946, էջ 98-99:
8. https://www.aztagdaily.com/archives/437639:
9. Ներսիսյան Մ., Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը, https://web.archive.org/web/20200111014332/http://hpj.asj-oa.am/447/1/62-4(59).pdf (մուտք՝ 20.12.2022):
10. «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», խմբ.՝ Հր. Սիմոնյան, Եր., 2012, էջ 406-407:
11. Նույն տեղում, էջ 410:
12. Նույն տեղում, էջ 410-411:
13. Նույն տեղում, էջ 402-403:
14. Նույն տեղում:
15. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 123:
16. «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», էջ 403:
17. Նույն տեղում, էջ 413:
18. Նույն տեղում, էջ 414:
19. https://bit.ly/3FW4CBm (մուտք՝ 20.12.2022):
20. Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը: Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1958, էջ 262:
21. Մյասնիկյան Ալ., Երկեր, հ. 5, Եր., 2007, էջ 443:
22. «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, նոյ. 29:
23. «Նորք», Եր., 1925, № 5-6, էջ 418:
24. Տեր-Պետրոսյան Լ., Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը, https://bit.ly/3Z1IXAz (մուտք՝ 20.12.2022):

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», խմբ.՝ Հր. Սիմոնյան, Եր., 2012:
2. Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը, Գահիրէ, 1946:
3. Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը: Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1958:
4. Կիրակոսյան Ջ., Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972:
5. Մյասնիկյան Ալ., Երկեր, հ. 5, Եր., 2007:
6. Զերազ Մ., Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879:
7. Սառիկյան Հ., Հիշողություններ, Եր., 2015:
8. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992:

բ) Մամուլ

1. «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, նոյ. 29:
2. «Նորք»,Եր., 1925, № 5-6:

գ) Արխիվային նյութեր

1. ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 63, թթ. 7-8:

դ) Համացանցային նյութեր

1. Պողոսյան Ս., Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ. Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին, էջ 72-73, http://publications.ysu.am/wp-content/uploads/2018/12/Poxosyan.pdf (մուտք՝ 20.12.2022):
2. Ներսիսյան Մ., Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը, https://web.archive.org/web/20200111014332/http://hpj.asj-oa.am/447/1/62-4(59).pdf (մուտք՝ 20.12.2022):
3. Տեր-Պետրոսյան Լ., Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը, https://bit.ly/3Z1IXAz (մուտք՝ 20.12.2022):
4. https://www.aztagdaily.com/archives/437639 (մուտք՝ 20.12.2022):
5. https://bit.ly/3FW4CBm (մուտք՝ 20.12.2022):

Ազգային մտավորականութիւնը եւ անոր դերը գաղափարական կազմակերպուածութեան մէջ

Աւօ Գաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

Մտաւորականութիւնն է, անկասկած, հանրային միտքեր, զգացումներ, մտահոգութիւններ արտայայտողը, գաղափարներ մշակողը, ազգութիւնը մէկ մտքի, համոզման շուրջ հաւաքողը և հոգևոր աշխարհի ղեկավարը:

Անցեալի պատմութեան մէջ թագաւորներու, իշխաններու և երկիրը ղեկավարողներուն մօտ կը տեսնենք մտաւորականութիւնը. այսօր անոնք բացակայ են թէ՛ քաղաքականութենէն և թէ՛ մեր կեանքէն:

Ի զուր չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ առաջին անգամ մտաւորականութիւնը ձերբակալեցին, որովհետև ժողովուրդ մը առանց մտաւորականութեան ատակ է կորուստի:

Ուսուցիչ, խմբագիր Բենիամին Թաշեան առիթով մը մէջբերած է Է. Ակնունիի (Խաչատուր Մալումեան) մտաւորականութեան մասին բնութագրումն ու ընդգծումը Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ մտաւորականութեան թիւի և անոնց արժէքին նկատմամբ: Վերոնշեալ ընդգծուած միտքը, մենք ևս խիստ կարևոր նկատելով, ստորև կը մէջբերենք՝ պարզապէս պարզաբանելու, որ բազմաթիւ մտաւորականութիւն ունեցող Հ.Յ.Դ.-ն կուսակցութենէ անդին եղած է:

Թաշեան կը գրէ. «Ատեն մը, 1912-ին կամ 1913-ին, Ակնունի կը յայտարարէր Պոլսոյ մէջ, ի լուր բոլորին. «Դաշնակցութիւնը միայն մի տեղում և մի ժամանակում իր շարքերի մէջ համրում էր աւելի քան վեց հարիւր մտաւորական: Սա կը նշանակի, որ Դաշնակցութիւնը կուսակցութիւն չէ, ազգ է»» :

Եթէ թուրքը Հայոց ցեղասպանութեամբ ծանր հարուած հասցուցած էր հայ մտաւորականութեան, գլխատած էր այն խաւը, որ կը մշակէր հոգևոր արժէքներ և կը հաւաքէր հայութիւնը անոնց շուրջ, այսօր ան կը դիմէ տարբեր միջոցներու. հայկական որոշ հատուածի մը ուղեղները լուալով՝ ջլատել զանոնք հայկական ինքնութենէ և դարձնել Թուրքիոյ համակիրներ, բարեկամներ:

Այսօր հայուն թշնամին ու հակառակորդը ևս բոլոր բնագաւառներում ամէն ջանք կը թափեն՝ մեր մէջէն վերացնելու արժէքը՝ մտաւորականութիւնը, և հաւանաբար այդ պակասն է, որ մեր ազգը կամաց-կամաց կը տանի դէպի կորուստ:

Դժբախտաբար, կ'ապրինք այնպիսի ժամանակ մը, որ անձը աւելի՛ կարևոր է հաւաքականութեան համար, քան անոր իմացական կարողութիւնները, որովհետև



մենք անձն է, որ սկսած ենք կարևորել ու սիրել՝ իր իմացութենէն առաջ:

Վերջին շրջանին համաշխարհային առումով ցայտուն երևոյթ է աշխարհակարգի ապագաղափարական վարքագիծը, որ կը ձգտի գաղափարաբանութիւնները չէզոքացնելու ճամբով աշխարհը վերածելու միայն ու միայն մէկ ու մեծ շուկայի մը:

Համոզուինք, որ այսօր, դժբախտաբար, մտաւորականութեան բացակայութիւն կը տիրէ աշխարհի վրայ ընդհանրապէս, հետևաբար հայ մտաւորականութեան բացակայութիւն կը տիրէ, նաև ազգային կամ դաշնակցական մտաւորականութեան բացակայութիւն կը տիրէ աներկբայօրէն:

Նկատի առնելով, որ Հ.Յ. Դաշնակցութեան համար ինչպէս անցեալին ուրոյն արժէք եղած է նաև գաղափարական ուղի հունաւորող մտաւորականը, որ մշակութային, ընկերային և գիտական լիցք և ուժականութիւն տուած է ազատագրական պայքարին: Այսօր ևս, մտաւորականները և մշակոյթի գործիչները պիտի ունենան որոշիչ դեր Հ. Յ. Դ.-ի ազգային ռազմավարութեան արժևորման և իրագործման համար: Սակայն անցեալի նայելով՝ այսօր ընդունինք, որ ցաւալի երևոյթ է մտաւորականութեան բացակայութիւնը: Միւս կողմէ՝ մտաւորականի պատրաստութիւնն ու զայն արժևորելու հարցը (յատկապէս Սփիւռքի մէջ): Օրըստօրէ այս երևոյթը լուրջ, զգալի և ակնյայտ կը դառնայ:

Այդ իմաստով ալ կը դժուարանանք ըսելու, թէ այսօրուան մտաւորականութիւնը բաւարար է, և անոնց ձայնն ու գաղափարները այդքան ալ

լսելի չեն: Բնականաբար, պատճառները շատ են, սակայն պատճառներու ամէնէն ակներևը այդ է, որ հաւաքականութեան կողմէ այլևս հետաքրքրութիւն և գնահատանք չկայ մտաւորականի նկատմամբ, ինչպէս անցեալին:

Այսօր ընդունինք, որ համացանցի վրայ փաստացի ներկայութիւնն է, որ կը կազմաւորէ նոր սերունդներու մտածողութիւնը և հանրային կարծիքը, առհասարակ: Ընկերային ցանցերու օգտագործուած բոլոր լծակներու ճամբով ջամբուած դաստիարակութեան և քարոզչութեան կշիռը, անկախաբար անոնց հոգեմտաւոր և բարոյական արժէքէն, անհամեմատ աւելի է, քան ուսուցանողին, դաստիարակին, ուսուցիչին, քարոզիչին կամ նոյնիսկ ծնողքին անմիջական խօսքին ազդեցութիւնը:

Մտաւորականութիւն պահելու և անոր ներկայութիւնը աւելի աշխոյժ դարձնելու յաջորդ կարևոր գործօնը նիւթական-տնտեսական հիմնախնդիրն է: Համաշխարհայնացումի այս դարուն՝ նիւթապաշտութեան և հաճոյամոլութեան այս օրերուն, հաւատաւոր ու կամաւոր ձևով հայ մտաւորականը պէտք է ի վիճակի ըլլայ ստեղծագործելու և իր հիմնական խօսքը ունենայ հայապահպանման մեծ երթին՝ միշտ բարձր բռնած ազգային ու գաղափարական այն դրօշը, որ հայութիւնը պիտի առաջնորդէ իր անկատար տենչերուն իրականացման:

Այսօր, դժբախտաբար, մարդու կեանքին կիզակէտն ու նպատակը միմիայն նիւթը դարձած է. նիւթական և հաճոյամոլութեան վնասները աւելի վատ և հսկայական ազդեցութիւն եկած են ձգելու մարդու մտային և հոգեկան աշխարհներուն վրայ:

Մեկնելով այս կացութենէն՝ պարտադրուող նոր իրադրութիւնը կը ստիպէ վերատեսութեան ենթարկել հայ մտաւորականի և յատկապէս ազգային-կուսակցական մտաւորականի գոյութեան և գնահատման խնդիրը: Հարկ է զայն վերանայիլ որպէս ռազմավարութիւն և որպէս մարտավարութիւն, ինչպէս նաև վերականգնել անոր հիմնական խարիսխը:

Հայ մտաւորականության փաղանգ: ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի կազմը

Հետևաբար, պէտք է մեծ ներդրում կատարել՝ դաշնակցական մտաւորականներ, յօդուածագիրներ և այլ մասնագէտ գրողներ պատրաստելու համար: Իսկ եղածներն ալ՝ արժևորել, գուրգուրալ և այսօր քաջալերել զանոնք՝ քաջ գիտակցելով, որ մտաւորականութեան և գրողի բացակայութիւն կը տիրէ: Միւս կողմէ՝ շարքային մտաւորական տարրը ներգրաւել կուսակցութեան տարբեր մարմիններու մէջ, չվանել զանոնք, քանի որ անոնց ներկայութիւնը մի՛շտ ալ հարստացուցած է մեր գաղափարական գանձարանը և ստեղծած առաջնորդող մտածողութիւն:

Լաւապէս զինուած ըլլանք գիտելիքով, մասնագիտութեամբ, բայց մանաւանդ գաղափարական պատրաստութեամբ՝ մեր արժէքները պահելով և ապազգային ամէն տեսակի երևոյթի դիմադրելով:

Ամէն ջանք գործի լծել՝ անոնց միտքն ու հոգին դարբնելու այն ոգիով ու սկզբունքներով, որոնք կ'ամրապնդեն դաշնակցական գաղափարապաշտութիւնը, կը պատրաստեն այն գաղափարապաշտը, որ կը ձգտի հասնիլ աւելի բարձր իտէալներու կամ շօշափելի տուեալներու, որ կը սիրէ մտքով և հոգիով յածիլ այնպիսի բնագաւառներու մէջ, որոնք հեռու են նիւթեղէն իրականութենէ:

Մեր գաղափարախօսութիւնը յաղթանակի հասցնելու համար անհրաժեշտ է հաշուի առնել բծախնդրօրէն և գիտականօրէն մշակուած մարտավարական ծրագիր:

Կուսակցութեան գաղափարախօսութեան բոլոր գործօններու պահպանման և զարգացման գլխաւոր միջոցը մտաւորականութիւնն է:

Օգտագործել արդիական ամէն տեսակի մեթոտները, որոնց ազդեցութեան տակ կուսակցական շարքայինները կը դառնան գաղափարի նուիրեալներ և Հայ դատի զինուորեալներ՝ հեռու անհատապաշտութիւնէ:

Վերջապէս պէտք է համոզուինք, որ մեր պատմութեան ամէնէն ամօթալի պարտութիւններէն՝ Արցախի 44-օրեայ և յաջորդող պատերազմէն ու հողատարածքներ յանձնելէ ետք նաև առաւել կարևորութիւն կը ստանայ այսօր, որ հիմնական և աշխոյժ ներկայութեան կարիքը կայ ազգային մտաւորականութեան: Անգամ մը ևս կը հաստատուի, որ խիստ կարևոր է կուռ հաւատքով վառ պահել ազգային գաղափարախօսութիւնը՝ Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը այն միակ առանցքն է, որուն շուրջ կրնայ հայ ազգը համախմբուիլ ու գոյատևել, սակայն իրաքանչիւր անհատի մէջ ազգային ոգին ամրապնդուելէ յետոյ: ■

Հղում

1 Թաշեան Բ., «Ազդակ» օրաթերթ, 30 Դեկտեմբեր 1969-ին, Պէյրութ:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ՝ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ԱՆԴԻՆ

Patrick J. Deneen, WHY LIBERALISM FAILED,

Yale University Press, New Haven and London, paperback edition, 2019, 225 pp

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ճիշտ ատենին լոյս տեսած գիրք մը, որ ցոյց կու տայ «ազատութիւն» վեհ յղացքին վրայ հիմնուած «ազատականութիւն» հասկացութեան իմաստազրկումը և կը նախատեսէ անոր վերջը:

Հեղինակը քաղաքական գիտութեան դասախօս է և ղեկավարը Նոթր Տամ համալսարանի Սահմանադրական ուսմանց ամպիոնին: Գրած ու խմբագրած է բազմաթիւ հատորներ: Գրքին գրախօսողներէն մէկը՝ Ճաքսըն Լիրզ (Jackson Lears), որ Ռաթճըրզ համալսարանի Կառավարիչներու խորհուրդի պատմութեան ականաւոր դասախօսն է, լաւագոյնս կը ներկայացնէ հեղինակը և իր գիրքը. «Փաթրիք Տենին զննող ու շնորհալի մշակութային քննադատ մըն է՝ ոգևորուած բարոյական հակակշռուած կիրքով մը: *Ինչո՞ւ ձախողեցաւ ազատականութիւնը* կը հայթայթէ կազդուրիչ հակաթոյն մը ձախին թէ աջին հաւատալիքներուն դիմաց՝ ցոյց տալով ինչպէս ազատութեան աղքատացած, երկկուսակցական յղացք մը բանտարկած է հանրային կեանքը, զոր կը յաւակնի ազատագրած ըլլալ»:

Սոյն յօդուածին նպատակը չէ գրքին ամբողջ բովանդակութիւնը ներկայացնել, այլ միայն ընթերցողին ծանօթացնել անոր գլխաւոր միտք բանին, բայց կ'արժէ թուել գլուխները, որոնց վերնագրերէն ալ կարելի է գաղափար մը կազմել, թէ ինչի՞ մասին է գիրքը՝

- Ներածութիւն – Ազատականութեան վերջը
- Ա. Անպահպանելի ազատականութիւն
- Բ. Անհատականութեան և պետականութեան (statism) միաւորում
- Գ. Ազատականութիւնը որպէս հակամշակոյթ
- Դ. Արհեստագիտութիւնը և ազատութեան կորուստը
- Ե. Ազատականութիւնը ընդդէմ մարդկայնական գիտութիւններուն (liberal arts)
- Զ. Նոր ազնուականութիւնը (aristocracy)
- Է. Քաղաքացիութեան քայքայումը
- Եզրակացութիւն – Ազատութիւն՝ ազատականութենէն ետք

Հիմնական մտքերը ներկայացնելու համար այստեղ պիտի հիմնուիմ գլխաւորաբար ներածութեան ու եզրակացութեան վրայ[1]:

Շատ հետաքրքրական ու բնորոշիչ են եզրակացութեան առաջին և վերջին նախադասութիւնները: Առաջինը՝ «Ազատականութիւնը ձախողած է, որովհետև ազատականութիւնը յաջողած է»: Իսկ վերջինը՝ «Մարդկային ազատութեան մեծագոյն փաստը կը կայանայ մեր կարողութեան

մէջ՝ երևակայելու և կերտելու ազատութիւն՝ ազատականութենէն ետք»: Գրքին ամբողջ բովանդակութիւնը այս երկու նախադասութիւններուն միջև կարելի է զետեղել՝ զանոնք մանրամասնելու և հասկնալու համար: Ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

«Ազատութիւն»-ը հինէն եկած բառ մըն է,– կ'ըսէ Տենին,–մինչ ազատականութիւն-ը հազիւ քանի մը հարիւր տարուան բառ է»: «Ան կը յառաջանայ ազատութեան բնութեան վերասահմանումէ մը, որ իր նախնական իմաստին գրեթէ հակառակ նշանակութիւնը կու տայ անոր: Անցեալի և քրիստոնէական հասկացողութիւններով ազատութիւնը ինքնակառավարման պայմանն էր, անհատի մը, թէ հաւաքականութեան մը համար»: Եւ դիւրին չէր այդ ինքնակառավարումը, քանի որ կը պահանջէր «առաքինութիւններ՝ ինքնահակակշիռ ու ինքնակարգապահութիւն՝ ստորին, բայց յամառ ախորժակներու դիմաց»: Ուստի ազատութեան հասնելու համար մարդիկ պիտի գիտնային իրենց անձնական ընտրանքներուն մէջ որոշ սահմանափակումներ ընդունիլ: «Իսկ այդ սահմանափակումները չէին իրականանար գլխաւորաբար հոչակուած օրէնքով,– թէև օրէնքն ալ իր տեղը ունէր,– այլ ընկերային, տարածուն ընդհանուր կանոններով (norms)՝ բարքերու (customs) միջոցաւ»:

«Ազատականութիւնը ազատութիւնը կը վերայղանայ իբր ճիշտ հակառակը այս աւելի հին յղացքին»: Ան կը քանդէ բարքերու աշխարհը ու զայն կը փոխարինէ հոչակուած օրէնքներով: Եւ ո՞վ հեգնանք, քանի ընկերային ոլորտի մէջ վարմունքը (behaviour) հակակարգաւորուի (unregulated), պետութեան դերը պէտք է այնքան աւելի ընդարձակուի՝ կարգ ու կանոնը պահելու համար: Այսպիսով՝ «Ազատութեան

կայսրութիւնը» կ'ընդլայնի համաքայլ տևաբար ընդարձակուող պետական հակակշռին հետ՝ ի հեճուկս ժողովրդավարութեան:

«Ժողովրդավարութիւնը, իրապէս, ի վերջոյ չի կրնար գործել ազատական վարչաձևի մը ներքև: Ժողովրդավարութիւնը կը պահանջէ մեծաթիւ ընկերային ձևեր, զորս ազատականութիւնը կը հետապնդէ ապակերտել (deconstruct), յատկապէս՝ հասարակաց ընկերային սովորութիւններ և պարտաւորութիւններ, որոնք կը զարգանան հոծ համայնքներու մէջ, ոչ թէ անկապակից եսերու պատահական հաւաքածոներու, որոնք ընտրական խցիկները կը մտնեն ու կ'ելլեն»:

Ազատականութիւնը նաև սահմանազերծութիւն է, – կ'աւելցնէ հեղինակը: «Ազատական իմաստասիրութեան և քաղաքականութեան հիմնական յատկութիւններէն մէկն է գրեթէ բոլոր սահմանները կամայական համարելը: Ասիկա ոսկի թելի մը պէս կ'անցնի բոլոր նկատողութիւններուն ընդմէջէն, ոչ միայն սահմաններու,– գլխաւորաբար ազգային սահմաններու,– քաղաքական ըմբռնումին, այլ որևէ առկայ տարբերակումի, ուրոյնութեան, սահմանագծման և շրջագծման, որոնք բոլորը կասկածանքի կ'ենթարկուին՝ որպէս անհատական ընտրանքի ազատութիւնը կամայականօրէն սահմանափակող [ազդակներ]»:

Այս գիրքը, ըստ Տենինի, կը ձգտի ցոյց տալ, թէ. «Ինչ որ աջին կողմէ կ'ողբացուի (bemoaned) ոչ թէ ձախին պատճառաւ է, այլ ի՛ր իսկ սերտագոյն հաւատարմութիւններուն (commitments) հետևանքներուն, յատկապէս՝ ազատական տընտեսագիտութեան մէջ»: Նոյնն է պարագան ձախին, որուն խնդիրները կը ծագին ի՛ր իսկ որդեգրած կեցուածքներէն, յատկապէս «ընկերային ընդհանուր կանոններու լուծարումին ի հետևանք, յատկապէս սեռային վարմունքի և ինքնութեան մարզերուն մէջ»:

Հետաքրքրական է այն տեսակէտը, թէ կը ձևաւորուի կարիքը ուժեղ ղեկավարի մը, որ պիտի գայ ետ բերելու ժողովրդական հակակշիռը ազատականութեան վարչարարական կառավարման ու աշխարհայնացած տնտեսութեան վրայ, առանց սակայն անպայման նախկին, լուծարման ենթարկուած ընտանեկան, համայնքային, կրօնական կանոններու և հաստատութիւններու վերականգման պահանջքին, ինչ որ սակայն ճիգով ու զոհողութեամբ կրնայ ըլլալ, մինչ ազատականութեան մշակոյթը այդ արժէքներն ալ նսեմացուցած է: Շատեր հիմա կը կարծեն, թէ ազատականութեան պետական ուժերով կարելի է պայքարիլ անոր իշխանական դասակարգին դէմ:

Տենին հաւատացած է, թէ փրկութիւնը քաղաքական յեղափոխութեան մը մէջ չէ, որ կը կայանայ, այլ «համայնքային նոր ձևերու համբերատար խրախուսանքին, ձևեր, որոնք կրնան իբր օթևան (կամ ապաստարան) ծառայել մեր ներկայ ապանձնաւորուած քաղաքական ու տնտեսական համակարգին մէջ»: [...] «Միայն [հին յունական իմաստով] քաղաքի (polis) մը փորձառութեան վրայ հիմնուած քաղաքականութիւն

Փաթրիք Տենին

մը,– միատեղ կեանքեր՝ հասարակաց նպատակի ըմբռնումով մը, սերնդական ժամանակամիջոցի մը մէջ ապրուած վիշտերով, յոյսերով և հրճուանքներով, և վստահութեան ու հաւատքի ընդունակութիւններու մշակումով, –կրնայ սկսիլ փոխարինել մեր դարաշրջանի անվստահութիւնը, խորթացումը, թշնամութիւններն ու ատելութիւնները»:

Տենին իր եզրակացութեան առաջին նախադասութիւնը՝ «Ազատականութիւնը ձախողած է, որովհետև ազատականութիւնը յաջողած է» գրելէ ետք դիտել կու տայ, թէ քանի ան աւելի կը հաստատուի, այնքան կը բազմանան կառավարման վէրքերը, որոնց վրայ չի հասնիր սպեղանի մը դնել կամ չի կրնար զանոնք քողով մը ծածկել, ինչ որ քաղաքացիներուն մէջ կը յառաջացնէ անվստահութիւն օրէնքին ու օրինականութեան նկատմամբ ու նախանշանը կը հանդիսանայ ազատականութեան աւարտին: Ասոր չեն անդրադառնար ազատականութեան ջերմ պաշտպանները, որոնք դժգոհութիւնները կը նկատեն պատահական ու անցողիկ, առանց հասկնալու, որ խնդիրը համակարգային է, «որովհետև իրենց ինքնախաբէութիւնը կը բխի ներկայ դրութիւնը պահելու մէջ իրենց ունեցած սեփական շահի խոշոր պահեստէն»: Ինչ որ կը յիշեցնէ, անշուշտ, Ալեքսիս տը Թոքվիլի (Alexis de Toqueville) «Ժողովրդավարութիւնը Ամերիկայի

մէջ» հատորի եզրակացութիւնը, թէ ան ի վերջոյ պիտի վերածուի բռնակալութեան նոր ձևի մը:

Ինչպէ՞ս խուսափիլ նման ապագայէ մը: Հեղինակը իր տեսակէտը բանաձևելու համար կը վերադառնայ Պղատոնի «Հանրապետութիւն» երկին ու կը հաւատայ, թէ երկար ժամանակ ու քանի մը սերունդ է պէտք՝ նոր համակարգ և իրավիճակ յառաջացնելու համար: Ան երեք սկզբնական քայլեր կը նախատեսէ.

Առաջին՝ չփորձել վերադառնալ նախաազատական ժամանակներուն, այլ ընդունիլ ազատականութեան նուաճումներն ու անոնցմէ մեկնելով՝ վերացնել իր ձախողութեան հիմնական պատճառները: «Չկայ յետ երթալ, այլ միայն յառաջ»:

Երկրորդ՝ «Գաղափարաբանութեան դարէն անդին պէտք է անցնինք: Արդի երեք մեծ գաղափարաբանութիւններէն ամենէն հինը ու ճկունը կը մնայ, սակայն ազատականները իրենց մրցակիցներուն անկումը համարեցին պատմութեան վերջը, փոխանակ հասկնալու, որ ան պիւրոզեան յաղթանակ մըն էր իսկապէս»: [...] «Մենք պէտք է կեդրոնանանք մշակելու նոր հմտութիւններ (practices), որոնք կը խթանեն մշակոյթի, տնային տնտեսութեան և քաղաքային (polis) կեանքի նոր ձևեր»:

Երրորդ՝ «Նման փորձառութեան և հմտութեան կաթսայէն քաղաքականութեան և ընկերութեան նոր տեսութիւն մը կրնայ ի վերջոյ դուրս գալ: Այդպիսի տեսութիւն մը պէտք է խուսափի ազատականութեան գաղափարաբանական տարողութենէն, բայց միաժամանակ ընդունի անոր նուաճումներն ու իրաւացի պահանջքները, մասնաւորաբար՝ արդարութեան ու արժանապատուութեան առումով»: Այսպիսի տեսութիւն մը համահունչ կ'երթայ հին դարերէն եկող արևմտեան աւանդութեան:

«Անցեալի քաղաքական իմաստասիրութիւնը նուիրուած էր յատկապէս բռնակալութեան վերելքէն ինչպէս լաւագոյնս խուսափելու և քաղաքական ազատութիւն և ինքնակառավարում ինչպէս լաւագոյնս նուաճելու հարցերուն»: [...] «Քրիստոնէութեան գալուստը և անոր զարգացումը դէպի միջնադարու՝ այժմ ընդհանրապէս անտեսուած քաղաքական իմաստասիրութիւնը, կը շեշտէր անհատի արժանապատուութիւնը, անձին յղացքը, իրաւունքներու և համապատասխան պարտականութիւններու գոյութիւնը, գերագոյն կարևորութիւնը քաղաքային ընկերութեան ու բազմազան ընկերակցութիւններու, և սահմանափակ կառավարութեան ըմբռնումը՝ որպէս լաւագոյն միջոցները կանխելու մարդկային անխուսափելի փորձութիւնը դէպի բռնակալութիւն»:

Հետաքրքրական է նաև հեղինակին այն հաստատումը, որ «Ազատականութեան խզումը անցեալէն հիմնուած էր կեղծ մարդաբանութեան մը վրայ, բայց նոյն ատեն այդ իտէալները դարձան աւելի տիեզերական ու ապահով շնորհիւ աճող դժգոհութեան՝ հանդէպ ազատականութեան ձախողութեան զանոնք իրագործելու: Հսկայ խզում մը գոյութիւն ունեցած է ատենին Արևմուտքի իմաստասիրութեան ու անոր կիրարկումներուն միջև: Ազատութեան, հաւասարութեան և արդարութեան իտէալները գոյակցած են ստրկութեան, գերութեան, անհաւասարութեան, կիներու ներդրումի անտեսումին, իշխանապետութեան կամայական ձևերուն և օրէնքի կիրարկման հետ»:

«Ազատականութիւնը այդ իտէալները ջատագովելով հանդերձ, ի վերջոյ դաւաճանեց անոնց՝ մարդկային բնութիւնն ու քաղաքականութիւնը, տնտեսագիտութիւնը, կրթութիւնը ձևազերծող իր ըմբռնողութեամբ ու անկէ յառաջացած արհեստագիտութեան կիրարկումով»:

Ձանազան օրինակներու կարգին գրողը կ'անդրադառնայ ազատականութեան յաւակնութեան, թէ տնային պարտաւորութիւններէ ձերբազատելով՝ ան ազատագրեց կիները, մինչդեռ իրականութեան մէջ թէ՛ կիները և թէ՛ այրերը դրաւ աւելի համապարփակ գերութեան մը մէջ են: Նոյնպէս ազատականութեան ճարտարապետները իրացնելով քաղաքական լայնօրէն ընդհանրացած իտէալները՝ զանոնք այլափոխեցին ի նպաստ անոնց, որոնք ամենէն աւելի կրնային օգտուիլ ազատութեան, ժողովրդավարութեան և հանրապետականութեան նոր սահմանումներէն:

Ըստ ազատականութեան՝ «Գաղափարաբանութեան՝ կրօնական, մշակութային և ընտանեկան [խումբի մը] անդամակցութիւնը ծնունդեան արկած մըն



է»: Մինչդեռ «Մշակոյթն ու աւանդութիւնը արդիւնք են հմտութեան և փորձառութեան կուտակումներու, զորս սերունդներ կամովին աճեցուցած ու իբր ընծայ փոխանցած են ապագայ սերունդներուն: Այդ ժառանգութիւնը արդիւնքն է աւելի խոր ազատութեան մը՝ միջսերնդային փոխներգործութեան աշխարհի հետ և իրարու հետ»:

Մշակոյթի կարևորութեան ու արժէքին մասին բացառիկ լուսամիտ բանաձևում է, որ Տենին կ'ընէ. «Մինչ մշակոյթը կը մշակուի ու կը փոխանցուի ամենէն անմիջականօրէն ընտանիքներու մէջ, ան կը զարգանայ ընտանիքներու համայնքի մը մէջ ու միջոցաւ ու կը կեդրոնանայ ծննդեան, հասունացման, ամուսնութեան ու մահուան վրայ: Մշակոյթը նկատի կ'առնէ տեղական պայմաններ՝ յաճախ սնուելով ու ներշնչուելով տեղական աշխարհագրութենէն ու պատմութենէն: Սերունդ առ սերունդ յիշողութիւնը կը փոխանցուի պատմութիւններու և երգերու միջոցաւ, ոչ այնպէս, ինչպէս ծրարուած կը մատուցուի Հոլիվուտի կամ Մատիսըն պողոտայի կողմէ՝ այլ յառաջանալով մասնայատուկ տեղերէ եկող ձայներէ»: [...] Այս ձևով է, որ կը ստեղծուի իսկական պէսպիսութիւնը՝ «Մշակոյթներու այլազանութիւն մը, որ բազմազան է, բայց միաժամանակ հիմնուած է մարդկային ճշմարտութիւններու վրայ, որոնք անդրմշակութային են, ուստի և կրնան շատ ժողովուրդներու կողմէ փառաբանուիլ (celebrate)»:

Շինելու, նորոգելու, եփելու, տնկելու, պահպանելու և պարարտանիթելու (composting) ձիրքերը տան մը ոչ միայն անկախութեան ու ամբողջականութեան նեցուկը կը հանդիսանան, այլև կը զարգացնեն հմտութիւններ ու կարողութիւններ, գլխաւոր աղբիւրներն են մշակոյթի ու քաղաքացիական կեանքի: Անոնք իւրաքանչիւր սերունդի կը սորվեցնեն բնութեան պահանջքները, նուէրներն ու սահմանափակումները. բնութեան կշռոյթներուն և ձևուածքներուն (patterns) մարդուն մասնակցութիւնն ու փառաբանումը և անկախութիւնը արդի շուկայի կեղծ (erzatz) ազատութեան խթանած մշակութաքանդ տգիտութենէն և յուլութենէն:

Տենին իր եզրափակիչ բաժինին մէջ անգամ մը ևս կը վերյիշէ Թոքըվիլ և անկէ կը մէջբերէ վկայութիւն մը Ամերիկայի մէջ այն ատեն անոր նկատած իրավիճակին մասին. «Քաղաքացիներ, որոնք հասարակական կեանքին մէջ յանձնառութիւն պիտի վերցնեն, պէտք է սեփական շահերէ անդին նային և պարբերաբար նային նաև իրենցմէ անդին ուրիշ բանի: Անմիջապէս որ հասարակաց հարցեր քննութեան առարկայ դառնան, ամեն մարդ կը նկատէ, թէ ինք իր խմբակիցներէն այնքան ալ անկախ չէ, որքան կ'ենթադրէր, որ էր և անոնց աջակցութիւնը ստանալու համար ինքն ալ իրը պէտք է մատուցէ անոնց»:

Հեղինակը կը ջատագովէ վերադարձը նման ըմբռնումի մը:

Եւ գիրքը կ'աւարտի հետևեալ պարբերութեամբ. «Այսօր պէտք ունինք հմտութիւններու (practices)՝ կազմուած տեղական միջավայրերու մէջ, կեդրոնացած նոր և արդիւնաւէտ մշակոյթներու և ներընտանեկան վարպետութիւններէ յառաջացած տնտեսագիտութեան ստեղծման և քաղաքացիական քաղաքային (polis) կեանքի ստեղծման վրայ: Ոչ թէ աւելի լաւ տեսութիւն մը, այլ աւելի լաւ հմտութիւններ: Այսպիսի պայման ու տարբերող իմաստասիրութիւն մը, զոր կը քաջալերէ, կրնայ ի վերջոյ արժանի ըլլալ «ազատական» անունին: Հինգ հարիւր տարուան իմատասիրական փորձարկումէ մը ետք, որ իր ճամբուն վերջը հասած է, յստակ է ուղին աւելի լաւի վերակերտման: Մարդկային ազատութեան մեծագոյն փաստը կը կայանայ մեր կարողութեան մէջ՝ երևակայելու և կերտելու ազատութիւն՝ ազատականութենէն ետք»:

Անշուշտ, հեղինակը կը գիտակցի, որ իր առաջադրանքները կրնան բոլորին կողմէ ընդունելի չըլլալ, կրնան խստօրէն քննադատուիլ, և կ'ակնկալէ, որ այդպէս ալ ըլլայ՝ յուսալով, որ աւելի երիտասարդ մտածողներ ի յայտ կու գան ու կ'առաջարկեն նորանոր միջոցներ մարդկութիւնը իր ներկայ անելէն դուրս բերելու համար:

Մեզի՝ հայերուս համար ալ, յատկապէս մեր հայրենիքի ճակատագիրը վարելու յաւակնութիւն ունեցողներուն համար ահա՛ մտածելիք բաներ...

Հղում

1- Հետեւաբար զանց առնուած է մէջբերումներու էջերու նշումը:

ՓԵՏՐՎԱՐ 18-ԻՑ ՅԵՏՈՅ[1]

Մոսկվա. Արտաքին գործերի ժող.գործավար Չիչերինին

«Հայրենիքի փրկութեան Կոմիտէն իր ժամանակին հաղորդեց ձեզ, որ աշխատաւոր զանգուածների տարերային բնոյթ կրող ապստամբութեամբ տապալուեցին Հայաստանի խորհրդային կարգերը և փետրու. 18-ից սկսած ամբողջ իշխանութիւնը անցել է հայ դէմոկրատիայի իսկական ներկայացուցիչների ձեռքը: Այն ինչ նախկին Խորհրդային Հայաստանի արտաքին գործ.ժող. գործավար Բէգզադեանը շարունակում է Մոսկվայում հանդէս գալ ու խօսել Հայաստանի Հանրապետութեան անունից: Հարկ ենք համարում կրկին անգամ Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ փետրու. 18-ի ակտով ոչնչացուած են նախկին Խորհրդ. Հայաստանի կառավարութեան կողմից հաստատուած ներկայացուցիչները, նաև այս կամ այն անձին տրուած լիազօրութիւնները. հետևաբար, Բէգզադեանի հանդէս գալն իբրև Հայաստանի ներկայացուցչի՝ իրեն չպատկանող իրաւունքների մի կոպիտ շահագործում է հանդիսանում:

Հայաստանի կառավարութիւնը սրանով յայտարարում է, որ իրեն համար պարտաւորեցուցիչ չեն Հայաստանի Հանրապետութեան անունով Բէգզադեանի կնքած բոլոր պայմանագրերը, նաև նրա կողմից յանձն առնուած բոլոր պարտաւորութիւնները, ինչ իմաստով և ինչ չափով էլ լինեն նրանք:

№ 75, 12 մարտի.

Արտաքին գործ. նախար. վարիչ՝ Ս. Վրացեան»:

1. ՓԵՏՐՎԱՐ 18, ԳՐԱԿԱ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ ԳՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ԷՋ 70-71, 1927 թ.:

Թիֆլիս, Օրջոնիկիձէին[2].

Հինգերորդ օրն է ես Երևանում եմ: Ծանօթանալով գործերի դրութեան՝ բոլորովին համոզուեցի, որ մեզ մօտ՝ Թիֆլիսում կազմուած համոզումը Հայաստանի դէպքերի մասին չի համապատասխանում իրականութեան: Շարժումը սկսուել է գիւղացիութեան մէջ, զանազան շրջաններում, տարածուել է մինչև Երևան և իր հետևից քաշել է մտաւորականութիւնը: Ստեղծուել է հետևեալ դրութիւնը. զէնքը ձեռքերին միմեանց դէմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանուորներն ու աշխատաւոր գիւղացիները, միւս կողմից՝ կօմունիստների զինուած խմբերը, և հոսում է արիւնը առանց որևէ հիմքի թշնամութեան և փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կօմունիստները որոշ կերպով ասում էին, որ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակը աւելի անմիտ կռիւ չի վարել: Այդ պատճառով ջերմօրէն խնդրում եմ Ձեր հեղինակաւոր միջամտութիւնը, որպէսզի շուտափոյթ կերպով վերջ տրուի այս ոչ ոքի համար պէտք չեղած արիւնահեղութեան: Անհրաժեշտ եմ համարում աւելացնել, որ յեղաշրջումից յետոյ ձերբակալուած կօմունիստներից և ոչ մէկը և ոչ մի ռազմագերի այստեղ գնդակահարուած չէ: Նման հաղորդագրութիւն անում եմ և ռազմաճակատում գտնուող ընկեր կօմունիստներին: Եթէ կը պահանջուեն լրացուցիչ տեղեկութիւններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիօի մոտ.

Յովհաննէս Թումանեան:
24 մարտի 1921 թ.

2- Նույն տեղում, էջ 74:

ԴՐՕՇԱԿ

Երևան 1988 թ.